



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Удѣлѣн

67-71



Տ Ա Ր Ե Ր Ք

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ

2 DE 18 4

PROBATION DEPARTMENT

1(01)
9-90

Տ Ա Ր Ե Ր Ք

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ո Թ Ե Ա Ն Ը Ն Դ Ա Ր Ձ Ա Կ

Քարգմանաբար յօրինեալ

Ի Հ. Ա. Ի. Ս. Ե. Ն. Տ. Ի. Ո. Ս. Է. Վ. Գ. Ո. Ի. Գ. Ե. Ն. Ե. Ա. Ն.

Ի Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ո Ի Խ Տ Է Ն

Հատոր Բ.




Ի Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Վ Ա Ն Ս Ս Ր Բ Ո Յ Ն Ղ Ա Ջ Ա Ր Ո Ի

—
1869

9270




(4333)
41

18 67

68-2001

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԱՌԱՐԿԱՅՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ

Հոգեխօսութենէն անմիջապէս ետե՛ որ մարդկային հոգւոյ և անոր կարողութեանց հայեցողական գիտութիւնն է, կը հետեւի Գործնական գիտութիւն մի՛ որոյ վախճանն է գիմացողութիւնն ուղղել. այս գիտութիւնս Բանախօսութիւնն¹ կըսուի: Շատ բնական և բանաւոր է որ կամաց ուղղութենէն առաջ իմացողութեան ուղղութեան վրայ խօսինք. որովհետեւ կամեցողութիւնն են.

¹ Հինէն առ նախնիս և շատերն յարդեաց ի մաստասիրութեան այս մասիս Տրամաբանութիւնն առնուին տուին. մեզ այսպէս կոչել՝ աւելի պատշաճ էրեցաւ. գիտութեանս վախճանն զբանն կամ զմիտս ուղղել ըլլալուն. նոյն մտքով ոմանք ըսին նաև Արտեմի Բանական:

Թաղրէ զճանաչողութիւն , ինչպէս որ ուրիշ տեղ բացատրեցինք : Իսկ զգացողութեան գալով՝ անոր վերաբերեալ պատուէրներէն շատը կամեցողութեան կանոնաց հետ կը միանան Բարոյախօսութեան մէջ :

Յընդհանուրս նկատեալ՝ հասկացողութեան կնքաւոր գործն ճանաչողութիւնն է . արդ ճանաչողութեան բնական և հարկաւոր առարկայն է այն՝ որ ինչ է , այս ինքն է ճշմարտութիւնն . բայց ամէն մարդ գիտէ՝ որ ճշմարտութիւն մի իրապէս ճանուցեալ չսեպուիր , բայց՝ երբ բոլորովին ապահով եմք և մոլորելու վտանգ չկայ : Արդ՝ բայց յանմիջնորդ բացայայտութեան դէպքէն՝ ճշմարտին ստոյգ ծանօթութեանն հասնելու համար՝ բնական է որ մարդկային միտքն շաւիղ¹ մի բռնէ և հետեի անոր հասնելու : Այս շաւղիս հիմնական սկիզբն ամեն ուսմանց համար նոյն է , սակայն ըստ այլ և այլ կարգաց գիտութեանց կը զանազանի՝ իրեն օժանդակ սեպուած եղանակաց գործածութեան մէջ : Բայց ասկէ՝ դիտուած վախճանին հասնելու համար՝ պէտք է զգուշանալ մոլորութեան պատրողական երևոյթներէն և պատճառներէն :

¹ Այս բառիս նշանակութիւնն տես Բանախօսութեանս Բ . գլխոյն սկիզբն դրուած ծանօթութեան մէջ :

Աս դիտողութիւններէս կը հետեւի որ
բանախօսութիւնն հետագայ կերպովս պի-
տի բաժնուի . Ա . Յաղագս Ստուգութեան :
Բ . Յաղագս շաւղի ընդհանրապէս : Գ . Յա-
ղագս օժանդակ հնարից շաւղի : Դ . Յա-
ղագս շաւղի 'ի զանազան կարգս գիտու-
թեանց : Ե . Յաղագս մոլորութեանց և ի-
մաստակութեանց :

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՅԱՂԱԳՍ ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ

Բանախօսութեան վախճանն է ոչոյն
գիմացողորքիւն դէպ 'ի ձանաչողորքիւն ձգմար-
տին . բայց որովհետեւ փորձով գիտեմք որ
մարդս շատ անգամ մոլորութեան մէջ
անկանի , ճշմարտութիւն մի խուզարկած
ատեննիս մէկէն այս խնդիրս ելնէ առջե-
նիս , այսինքն թէ արդեօք հնարք մի կայ
մարդուս համար ապահովապէս զանազանե-
լու զճշմարտն 'ի ստոյ . այս է ահա ստուգու-
թեան խնդիրն՝ որուն մէջ բնականապէս
պարփակի բանայայտութեան խնդիրն ալ :

Այս գլխուս մէջ նախ պիտի խօսինք
ստուգութեան առարկային վերայ՝ որ է
ճշմարտութիւն , յետոյ ստուգութեան բը-
նութեանն և հիման վերայ և իր զանազան
տեսակացը . և ամենէն ետքն ինչ որ քիչ
շատ ստուգութեան կը մօտենայ , որ է ըսել

ճշմարտանմանութեան և հաւանականու-
թեան զանազան աստիճանաց վերայ:

Ս. Յաղագս ճշմարտութեան և ստուշեան .

Հասկացողութեան իրական առարկայն
այն է՝ որ ինչ էն կամ էակն, որովհետեւ
արտաքոյ էակի չիք այլ ինչ: Արդ այս որ
իկն էն ըսածիս իմացողութեան հետ յարա-
բերութիւն ունենալը կըսուի ճշմարտութիւն:

Մարդկային մտաց զննողութեանց վախ-
ճանն ճշմարտութիւնն է, առ ճշմարտու-
թիւն կը ձգտին մեր դատողութիւնքն, մեր
բանավարութիւնք և բովանդակ գործողու-
թիւնք իմացողութեանս, և մեր յիշատա-
կութեանց մէջ ալ զճշմարտութիւնն կը
փնտռենք. և ամենայն կարծիք մարդկան՝
նոյն իսկ մէկմէկու ընդդիմակք՝ համարին
թէ հասու եղած են ճշմարտութեան: Սա-
կայն յայտնի է որ հակառակամարտ դատող-
ութիւնք՝ որ մի և նոյն նիւթոյ վերայ մի և
նոյն յարաբերութեանց մէջ դէմ ընդդէմ
վճիռ կը կտրեն՝ երկուքն ալ ճշմարտ չեն
կրնար ըլլալ: Ապա ուրեմն գոն դատողու-
թիւնք որ ըստ ճշմարտութեան չեն . ճշմա-
րիտ դատողութիւնք հաստատեն զիրս որ-
պէս և են . իսկ ոյք հաստատեն զիրս՝ որ-
պէս չեն՝ կըսուին քիչր դատողութիւնք:

Ճշմարտութեան դիմամարտը կըսուի ստու-
շիւն կամ մոլորութիւն . ուստի մոլորիւն է
դատել թիւր, որով ըսել է թէ մոլորու-

Թեան սեպհական առարկայն նոյնական է այնմ որ շնն: Սակայն թէպէտ և թիւրն և մուրրութիւն ըստ ինքեան պարզապէս մերժական ինչ է, բայց թիւր դատելն մտաց իրական գործողութիւն մի է. դարձեալ տարերք՝ որոց վերայ է մուրրութիւնն, այսինքն առարկայք որոց վերայ թիւր դատաստան կըլլայ, սովորաբար դրական իրեր են. ասով է որ մուրրութեան կնքոյն վերայ շատ անգամ ՚ի պատրանս ըմբռնիմք. օրինակ իմն յետագայ թիւր դատողութեան օրինակիս մէջ Լուչիոսիկոս ԺԴ քննաշոր որ էր. որուն մէջ երկու տարերքս Լուչիոսիկոս ԺԴ և քննաշոր առանձինն առեալ մէյմէկ իրական ծանօթութիւնք են, բայց իրենց յարաբերութիւնն՝ զոր այս դատողութիւնս կը հաստատէ, այսինքն բռնաւորութիւն Լուչիոսիկոսի ԺԴ չէ ճշմարիտ այլ սուտ և ոչ ինչ:

Ասան ճշմարտութիւնք որք ամէն մտաց համար անմիջնորդ բացայայտութիւն մի ունին, և որոց վերայ տարակոյս կամ մուրրութիւն մի կարելի չէ. ասանկ են հասարակաց մտաց սկզբունքն, հիմնական ծանօթութիւնք և նախկին ճշմարտութիւնք. բայց այս սկզբանցմէս զատ՝ անբաւ են այն նիւթերն որոց վերայ մարդիկ կը մուրրին, ինչպէս յայտնի է ամենեցուն:

Մուրրութիւնն շատ աղբիւրներէ առաջ կուգայ, և շատ կերպարանք կառնու, զորս քիչ մը ետքը մանրամասն պիտի բա-

ցատրինք՝ Յադագու մոշորոշքեանց և իմաստակոշքեանց գլխոյն մէջ:

Բ. Յադագու բացայայտոշքեան և հիմանստոշքեան.

Ստուգութիւն ըսելով կիմացուի հաշտնոշքիւն հաստատ և անշարժ ՚ի ճշմարտոշքիւն: Պէտք է որոշել ստուգութեան ենթակայն, առարկայն և սլատճառն. և նրակայն է միտքն որ հաւանի, առարկայն նոյնինքն ճշմարտութիւնն առ որ հաւանի, և սլատճառն ոյր վասն տայ զհաւանութիւն:

Մեր մտաց կարողութեանց գործադրութիւնն ՚ի տարակոյս և եթ պիտի յանգէր, և հետեապէս իրական հետեանք մի պիտի չունենար՝ եթէ անկարող ըլլար ծնանել ՚ի մեզ զստուգութիւն: Այս պէտք է ըսել թէ մեր մտաւորական կարողութիւնք ամենեւին դրական զօրութիւն մի չունին իրենց արգասեաց կամ ծնընդոցը վերայ, կամ պէտք է հաւանիլ թէ ներքին և արտաքին ըմբռնողութեան, յիշողութեան, բանավարութեան ձեռօք ըրած դատողութիւնն իս՝ ունին լիովին զկնիք ստոշքեան, երբ հարկաւոր պայմաններն պահուած են նոյն դատողութիւնն ըրած ատենն իս: Այս ալ ստոյգ է որ մարդիկ շատ մի ծանօթութեանց անդրդուելի կերպով յարուած են որոց վերայ ամենեւին չեն տարակուսիր: Մի թէ եղանկ է մէկը որ հաստատապէս

տարակուսի երկրիս և արևու գոյութեան վերայ. կամ թէ օրինակի համար աղանտ ենք չհաւտալու թէ բոլորն մեծ է քան զմասն իւր. և իմաստակաց նրբին բանավարու թիւններն կրնան տկարացնել մեր զգացումն որ ունինք մեր գոյութեան վրայօք . մի թէ յիմարի տեղ չենք դներ այն մարդն որ վախնայ կամ մոլորելու վտանգ սեպէ այս ճշմարտութեանցս հաւտալը: Դարձեալ չենք մի գիտեր թէ այս նախկին ծանօթութիւններէ կրնանք այնպիսի հետեութիւններ հանել՝ որ անոնց հետ ներքսապէս միացած ըլլալով նոյն աստիճանի բացայայտութիւն ունենան՝ ինչ որ ունին իրենց սկզբունքն:

Բաց ՚ի քանի մի սկեպտականներէ՝ որոնք կը յանդգնին ըսելու թէ թերևս մեր միտքը ամէն բանի մէջ մոլորելու համար եղած է, ասոնցմէ զատ, կըսեմ, ամէն աշխարհք ճանաչէ թէ գոն ճշմարտութիւնք՝ որոնց վերայ անտարակոյս եմք, և անկարելի է որ մարդս ընդունի հակառակ տարակոյս ըսուած սկիզբն: Սակայն որովհետև փորձով գիտենք որ մարդիկ շատ անգամ զպատրանս ճշմարտութեան տեղ կընդունին, ապա հարկ է որ պայծառ նշան մի ըլլայ՝ որուն օգնութեամբն կարենանք զճշմարիտն ՚ի ստոյ որոշել, և հաստատապէս անոր հաւանիլ՝ առանց մոլորելոյ երկիւղ մի ունելալու . այս բանիս համար պէտք է պայծառ, անմոլար և որոշ պատ-

ճառ մի ունենալ՝ որ ըլլայ հիմն ստուգու-
րեան, և ասիկայ պէտք է ըլլայ պատճառ
մի վերջին՝ որ ուրիշ պատճառի կարօտու-
թիւն չունենայ. ապա թէ ոչ՝ պատճառ մի
որ ուրիշ պատճառի պէտք ունենայ՝ յան-
հունս կը հեռացընէ փնտռածնիս, և ստու-
գութեան բնաւ չենք կրնար հասնիլ: Այս
վերջին պատճառս՝ որ չկրնար ապացու-
ցուիլ, և ուրիշ պատճառի կարօտ ալ չէ,
բացայայտ ճշմարտութիւն ըլլալուն կնիքն
ունի: Բայց ճշմարտութիւնն յայտնի ընող
կնքաւոր նշանն որն է, կամ թէ ըսենք որն
է առաջնորդն ճշմարտութեան. այս խնդրոյս
վերայ իմաստասէրք բոլորովին համամիտ
չեն:

Ստուգութեան հիման խնդիրն յետին
դարերուս մէջ միայն ճշդիւ որոշուեցաւ:
Պաքոն և կարգեսիտս Ժէ դարուն սկիզբ-
ները նոր շաւիղ մի բացին իմաստասիրու-
թեան մէջ, և փոխանակ Արիստոտելի
գրեթէ բացարձակ իշխանութեանը՝ զննու-
ղութիւնն և փորձառութիւնն մտուցին,
և ուսուցին որ մարդս բաց 'ի յայտնեալ
ճշմարտութեանց, ամէն բանի մէջ իրեն
առաջնորդ պէտք է առնու զբան մտաց:

Ըստ կարգեսիտսի՝ ¹ որովհետեւ բան
մտաց ըսելով կը հասկընամք զկարողու-
թիւն ճանաչելոյ զճշմարտութիւն, ապա

1. Խորհրդածութիւն չորրորդ, և ճառ յա-
ղապս շաւղի, մասն Գ:

կը հետևի որ մարդ պէտք է իր բանին
ճանօթութեանցը դիմէ, բաւական է որ
ասոնք պայծառ և որոշ ըլլան: Այս դրու-
թեամբ առաջնորդն ճշմարտութեան է յղա-
ցումն պայծառ և որոշ, այսինքն բացայայ-
տորիւն կամ յստակութիւնն գաղափա-
բաց: Բայց որովհետև կրնայ ըլլալ որ գա-
ղափար մի յստակ և որիչ չըլլայ՝ և այն-
պէս կարծուի, բանն այն ատեն մինակ
իբրև բացայայտ պէտք է ընդունի իր մի՝
երբ դէմ դնելն անհնարին է, և բռնադա-
տուի անոր հաւանելու: Այս վերջի կնիքս
ամենակարևոր կը սեպէ Մալպրանշ, և
աւելի ճոխ կը բացատրէ ¹:

Հայրն Պիւֆիէ ձառ յաղագս նախնական
ճշմարտութեանց գրոց մէջ, և սկովտիացի
դպրոցին գլուխն Թովմաս Ռիտ ² բնա-
զանցական գլխաւոր նիւթոց վերայ՝ իբրև
հիմն ստուգութեան շատ մի հիմնական
ճշմարտութիւններ կը համրեն՝ որք ամէն
մարդոց հասարակ են, և որոց վերայ տա-
րակուսիլն անկարելի է. այս ճշմարտու-
թիւններովս կը ձևանան Սկզբունք հասա-
րակաց մտաց ըսուածներն. այս հասարա-
կաց մտաց ճշմարտութիւններս կըսուին

1. Հետազօտութիւն ճշմարտութեան, գիրք Ա,
դԼ. Բ. և ԺԴ:

2. Ճաշակ յաղագս կարողութեանց մարդ-
կային մտաց. Մտաւորական կարողութիւնք.
Ճաշակ 2:

Նաև նախկին սկզբունք, նախկին գործք, ծա-
նօրոքիւնք հասարակք, ինքնին բացայայտ
ձգնարտոքիւնք, և առածք: Այսպիսիք են
յետագայ ծանօթութիւններս: Ես խորհիմ,
ես գում, գոն մարմինք, գոն այլ էակք որ-
պէս ես, անհնարին է թէ ինչ մի լինիցի և
ոչ լինիցի՝ ի նմին ժամանակի, բոլորն մեծ
է քան զմասն իւր, երկու իրք հաւասար
երրորդի՝ հաւասար են և ընդ իրեարս, բա-
ցայայտ նշանք իմաստութեան յարգասիս՝
ցուցանեն զիմաստութիւն՝ ի պատճառն, և
այլն: Այսպէս են նաև բարոյականի հիմ-
նական սկզբունքն: Ա երոյիչեալ մատենա-
գրաց մէջ աւելի ընդարձակ թուարկու-
թիւն մի կայ հասարակաց մտաց գլխաւոր
ճշմարտութեանցը: Սկովտացւոց այս վար-
դապետութիւնն գրեթէ ամբարտակ մի ե-
ղաւ վերջին դարուն սկեպտականութեա-
նը և մանաւանդ Գաւթի Հիումի:

Այս երկու տեսութիւններս՝ որոնցմէ
մէկը զբացայայտութիւնն կը սեպէ ստու-
գութեան հիմն, և միւսն զմիտս հասարա-
կաց, կրնան իրարու մօտենալ և միանալ-
աւս բանիս: Համար բաւական է զբացայայ-
տութիւնն և զմիտս հասարակաց նոյն
մտօք իմանալ՝ ինչ որ իմացաւ Պենելոն,
որ կարգեսեան իմաստասիրութեան սկըզ-
բունքով մեծցած՝ Աստուծոյ գոյութեան
բնազանցական ապացուցից հասնելու հա-
մար՝ շաւղական տարակուսէն կը սկսի, և
առաջ ինքն իր գոյութեան ստուգութիւնն

հաստատելու կը ջանայ . յետոյ կը բացա-
տրէ թէ ինչպէս նախկին ճշմարտութեանց
բացայայտութիւնն՝ գաղափարաց յստա-
կութեան վրայ հաստատեալ է , և անտեղ-
շոյ կամ արտարոցի սահմանն կուտայ՝ որ
յստակ գաղափարի դիմադրութիւն է :
Իսկ ըստ ինքեան յստակ գաղափարներն՝
հասարակաց մտաց սկզբանցը կը վերա-
բերէ՝ ըսելով . « Ինչ է միտքն հասարա-
կաց . ո՛չ ապաքէն նախկին ծանօթութիւն-
ներ՝ զորս ամէն մարդ հաւասարապէս ու-
նի նոյն իրաց վերայ : Այս հասարակաց
միտքն՝ որ միշտ և ամենուրեք նոյն է , . .
որ մէկ նայուածքով կը տեսնուի , և խըն-
դրոյ մի բացայայտութիւնն կամ անտե-
ղութիւնն մէկէն կը յայտնէ՝ նոյնն չէ՞ մի
իմ գաղափարացս հետ : Այս գաղափա-
րացս և այս հանրական ծանօթութեանցս
ոչ կրնամ հակառակիլ և ոչ կրնամ զա-
նոնք քննել . և ընդհակառակն անոնց
ձեռքով կը քննեմ և կը բացատրեմ ամէն
բանն , այնպէս որ փոխանակ պատաս-
խան տալու խնտալս կուգայ այն ամէն
հարցուածոց՝ որ յայտնապէս հակառակ
են այս անփոփոխելի գաղափարաց ինձի
ցցուցածին » ¹ : Պենելոնի այս խօսքերուս
վերայ ասանկ կը զրուցէ թ . Ռիտ . « Կար-
դեսիոսի՝ առաջնորդ ճշմարտութեան ը-

1 . Ճառ յաղագս գոյութեան և ստորոգելեաց
Աստուծոյ . մասն Բ , թ . 33 :

սածին՝ ասկէ աւելի պարզ և դիւրիմաց
մեկնութիւն ուրիշ տեղ մը չեմ գտած »¹ :


Ապա ուրեմն նախկին սկզբունք, առածք
և հիմնական ճշմարտութիւնք ուրիշ բան
չեն՝ բայց եթէ ըստ ինքեան յատակ և բա-
ցայայտ գաղափարք, և միանգամայն ճշ-
մարտութիւնք հասարակաց մտաց և ամե-
նեին անդիմադրելիք : Բայց այս նախ-
նական ճշմարտութիւններէս զատ՝ ուրիշ
չատեր ալ կան, ինչպէս են անցք պատ-
մականք, երևոյթք բնաբանականք և ա-
ռաջարկութիւնք բանախօսականք և չա-
փաբերականք, և այլն . ապա ասոնց ալ
ճշմարտութեան կնքաւոր նշանն որը պիտի
ըլլայ այն նիւթոց մէջ որ դուրս են այն
նիւթերէն որոնց ճշմարտութիւնն ամէն
մարդ անդիմադարձ ընդունած է : Ան-
տարակոյս ճշմարտ է թէ երբ պարզ բա-
նավարութեամբ չենք կրնար խնդիր մի
լուծել՝ հեղինակութեան կամ իշխանու-
թեան մի կը դիմենք և կը խորհրդակցինք,
և երբ մեր նմանեաց հաւանութիւնն տես-
նեմք՝ ինքզինքնիս աւելի ուժ առած կը հա-
մարիմք, և մեր մտաց համոզումն աւելի
կը հաստատուի . բայց պէտք է աղէկ միտք
առնուլ՝ որ ամէն խուզարկութիւն և խոր-
հրդակցութիւն ընելէն ետե՛ երբ ստու-
գութեան կը հասնինք՝ աւելի հաստատ և
անդրդուելի հաւանութիւն մի կունենայ

մեր հոգին . արդ այս հաւանութիւնն բա-
 նաւոր ըլլալու համար՝ կը պահանջուի որ
 նոյն անձն ունենայ յստակ և ուրիշ յղա-
 ցում մի որ կարող ըլլայ վանելու զամե-
 նայն տարակոյս և զերկմտութիւն , որ է
 ըսել պէտք է ունենայ զբացայայտութիւն ոչ
 միայն նոյն ինքն ճշմարտութեան վերայ,
 այլ և իշխանութեան , հանգիտութեան և
 այլ նման պատճառաց արժէից վերայ՝ ու-
 թոնց զօրութեամբն իր հաւանութիւնն
 կուտայ :

Վերջապէս ¹ բացայայտութիւնն պէտք է
 սեպուի իբրև վերջին պատճառ ստուգու-
 թեան և որպէս կնքաւոր նշան ճշմարտու-
 թեան : Արդէն բացայայտութիւնն ալ իր
 իսկութեամբն մերժէ զերկմտութիւն , և նախ-
 կին և հիմնական ճշմարտութեանց նկատ-
 մամբ՝ ամէնուն մտացն ալ հասարակ է .
 որով ըսել է թէ բացայայտութիւնն և միտքն
 հասարակաց միշտ զուգընթաց են իրարու :
 Բայց որովհետև ըստ ինքեան անմիջնորդ
 բացայայտ ճշմարտութիւններէ զատ՝ որ
 ամէնուն մտաց հասարակ է՝ կրնայ մէկն
 բացայայտ չեղած իր մի բացայայտ սեպել ,
 իրապէս բացայայտութիւն ըլլալն ստու-
 գելու համար՝ կը քննէ թէ արդեօք իր բա-
 ցայայտ դատած իրն՝ իւր նմաններն ալ
 նոյնպէս կը դատին թէ չէ : Ապա այն դի-

62-2007
 4354

1. Տես յՌմաստասիրական գործս Յենեղոսի
 'ի կանխաբանութեան :



պապ մէջ ուր որ կրնանք հաստատել զգոյութիւն հասարակաց մտաց՝ նոյն զիպաց մէջ հասարակաց միտքն տեսակ մի հաստատութիւն և փորձառութիւն կըլլայ ստուգելու համար զառաջնորդն ճշմարտութեան, և հզօր կերպով գործակից կըլլայ՝ հոգւոյն մէջ անդրդուելի հաւանութիւն մի յառաջ բերելու՝ որով ծնանի 'ի մեզ սպահովութիւն անվրէպ ստուգութեան: Սակայն պէտք չէ հիմն ստուգութեան համարել զմիտան հասարակաց վասն զի ամենայն ենթագորութեան մէջ պէտք է հարկաւորապէս ընդունիլ թէ նոյն իսկ հասարակաց մտաց գոյութիւնն և իշխանութիւնն հաստատողը իւրաքանչիւր անհատին բանն կամ միտքն է, և վերջին վճիռն անկէց կը կախուի¹: Բացայայտութիւնն երկու կեր-

1. Ստուգութեան վերայ տուած տեսութիւնն նիս և անոր բացատրութիւնն թերակատար կըլլայ՝ եթէ Տարդիային Տրայ հետ չաւելցնենք աստուածային շնորհաց զուգընթացութիւնն, մասնաւորապէս այն խնդրոց մէջ որ մեր սկզբնաւորութեանն և վախճանին կը վերաբերին: Այս բանիս համար կարևոր կը սեպեմք Պենելոնի այն նշանաւոր խօսքերն յառաջ բերել, զոր կը գտնեմք՝ ի թուղթս նորա որ յաղագս կրօնից (2. թ 3), ուր կըսէ. « Ճշմարիտ է զի մարդիկ, որպէս ասաց ոմն 'ի հռչակաւոր մատենագրաց մերոցս Ժամանակաց, չունին զգօրութիւն Բաւական աստ՝ ի ընթանալ զհէտ իւրեանց Տրայն (ԼՍ ՌՈՇՅՈՒՔՅՈՅ Առաջ 42). վասն որոյ և ես հաւանեալս եմ զի ոչ ոք աստուծոյ շնորհաց

պարանօք կրնայ նկատուիլ . Ս . այն ճշմարտութիւններն որ իրաց իսկութեանն սեպհական են և զորս գաղափար կանուանեմք՝ ուղղակի կը յղանամք այնպիսի բացայայտութեամբ մի՝ որ այս դիպաց մէջ ներքին կը կոչուի , որ ուրիշ բան չէ բայց եթէ գաղափարաց կատարեալ յստակութիւնն կամ բռն բացայայտութիւն ըսուածը : — Բ . իսկ ուրիշ դիպաց մէջ բացայայտութիւնն արտաքին է , այսինքն թէ ունիմք զբացայայտութիւն պատճառաց հաւանելոյ առ այն ճշմարտութիւն , և ոչ եթէ ուղղակի և ներքին բացայայտութիւն նոյն ինքն ճշմարտութեան : Այս զանազանու-

բաւական իցէ ունել անձին զօրութեամբ և եթէ զհաստատութիւն մտաց և զկարգ և զզգաստութիւն և զանվստահութիւն անձին՝ որք կարևորք են 'ի գիւտ ճշմարտութեանց՝ նա և այնպիսեաց անգամ որ ոչ կարօտին գերագոյն լուսոյ հաւատոց , համառօտ ասել՝ բնականն այն իմաստասիրութիւն որ առանց կանխակալոյ կարծեաց և յանձնապաստանութեան և կարճամտութեան գիտիցէ 'ի կատար մարդկային մտաց անգամ ժամանել՝ ընդ իս կեղծիք ինչ են և Վեպ+ Իմաստասիրութեան : Ի ձեռն շնորհաց և եթէ ուղղեմք՝ նա և յանձուկ իսկ սահմանս մտաց 'ի գիւտ կրօնից , և ընդ Սրբոյն Աւգոստինոսի հաւատամ՝ զի արկեալն յԱստուծոյ սերմն և բողբոջ շնորհաց 'ի միտս մարդոյ՝ պատրաստէ զնա անցանել օտն առ օտն 'ի բանէ մտաց մինչև ցհաւատս » : Սուրբ Աւգոստինոսի յաղագս ամ . ինդ . առ Սիմպլիկ . գիրք Բ . ինգիր Բ , թ 2 :

թեամբ բացայայտութիւնն կրնայ նկատուիլ որպէս լոյս որ կցորդի ընդ զանազան պատճառաց ստուգոչքեան . ահա այսօրինակ յղանամք զբացայայտութիւն 'ի վկայութեան զգայարանաց , 'ի հանգիտութեան , 'ի յիշողութեան , և այլն : Եթէ բացայայտութիւնն անդէն և անդ երևի՝ անմիջևորդ կըսուի . իսկ եթէ բանասիրութեան ձեռօք յայտնի՝ ներածական կամ արտածական կը կոչուի :

Բացայայտութիւնն և ստուգութիւն սովորաբար զուգընթաց գտնուելով մի և նոյն ճշմարտութեանց նկատմամբ՝ հարկաւոր է այս երկու բառիցս զօրութիւնն ճշգրտել . Բացայայտոչքիւնն է կատարեալ յատկոչքիւնն ճշմարտոչքեան . իսկ Ստուգոչքիւնն հաստատ հաստատոչքիւնն մտաց մերոց առ այն ճշմարտութիւն անկասկած 'ի մոյրոչքեան : Ստուգութիւնն ներակայական է , այսինքն կերպաւորութիւն ինչ է խոհուն ենթակային , զոր կը բացատրենք ըսելով Ստոյգեալ : Գարձեալ առարկական մտքով ալ կառնուի , վասն զի ստուգութիւնն հաւանութեամբ մտաց ըմբռնէ զճշմարտութիւն իւրոյ առարկային . անոր համար կըսուի նաև Այս ինչ ստոյգ է : Բացայայտութիւնն որպէս լոյս իմն պարփակէ և լուսաւորէ զառարկայս ծանօթութեանց մերոց . սակայն առարկայից այս լոյսն չեմք յղանար և իրականապէս չկայ՝ բայց նկատմամբ մեր իմացողութեանն որ տեսանէ զնոսին պայ-

Տառ : Սպա բացայայտութիւնն միանգա-
մայն ներակայական է և առարկական . բայց
բացայայտութեան գաղափարին մէջ այս
բառս աւելի ճշմարտութեան պայծառու-
թեանը մտօք կառնուի : Ճշմարտոնքիչևն է
որ ինչ է՝ քանի որ այս որ ինչ է ըսածնիս
խմացողութեան մի հետ 'ի յարաբերու-
թեան է . գաղափարն ունեցած իր մի ձրչ-
մարիտ է՝ երբ իրապէս գոյ . բայց քա-
ցայայտ չէ՝ քանի որ միտքն պայծառապէս
զանկիկայ տեսած չէ . իսկ առոյգ ալ ըլլա-
լու համար պէտք է որ միտքն անոր հա-
ւանի անկասկած և անվտանգ 'ի մոլորե-
լոյ : Ճշմարտութիւնն յինքեան ենթակայա-
կան է՝ եթէ այն ճշմարտութիւնն եսն է ,
և առարկական՝ եթէ եսն չէ . իսկ ճանաչող-
ութիւնն ճշմարտութեան միշտ ենթա-
կայական է :

Զանազան տեսակք ստոնգոնքեան .

Ստուգութիւնն զանազան տեսակ կո-
րոշուի՝ թէ նկատմամբ մասնաւոր հիման՝
որոյ վերայ հանգչի ստուգութիւնն , և ըստ
բնութեան առարկայից առ որս վերաբե-
րի , և թէ նկատմամբ եղանակին որով
յառաջ գայ :

Ա . Ըստ հիման յորոյ վերայ հանգչի
ստուգութիւնն՝ և ըստ բնութեան առար-
կայից առ որս վերաբերի՝ ստուգութիւնն

որոշի 'ի հոգեխօսական, 'ի քննազանցական,
'ի քնական և 'ի քարոշական :

Ստուգոչքիւնն հոգեխօսական կամ ստուգութիւնն գիտակցոչքեան ուրիշ բան չէ՝ բայց եթէ ծանօթութիւնն ստոյգ զոր ունիւիք եսի և անոր կերպաւորութեանց վերայ : Այս ստուգութեանս զօրութիւնն 'ի կնքոյ միոյ յառաջ գայ որ իրեն միայն սեպհական է, այսինքն նոյնութիւն իր ենթակային և իր առարկային որ է ևսն . զոր բացատրեցինք հոգեխօսութեան սկիզբն՝ Գիտակցոչքեան և իրեն սեպհական ստուգոչքեան յօդուածին մէջ :

Ստուգոչքիւնն քննազանցական այն է որ հիմնեալ է իրաց էութեան վերայ, և որոյ հակառակն բացարձակապէս անկարելի է . օրինակի համար այս առաջադրութեանս ստուգութիւնն Շառաշիդք քոչորակին հաշաւարք ևն : Բնազանցական ստուգութիւնն բացարձակ է, որովհետև իրաց էութեանն վերաբերեալ ըլլալուն՝ առանց պայմանի ստոյգ է և ըստ ամենայն ենթադատութեան : Ասոր առարկայ եղող ճշմարտութիւններն՝ բանն ցուցանէ մեզ :

Ստուգոչքիւնն քնական այն է որ հիմնեալ է 'ի վերայ օրինաց նիւթեղէն բնութեան, և մասնաւորապէս մեր սեպհական գործարանաւորութեան օրինացը . և որուն առարկայն չկրնար ճշմարիտ չըլլալ՝ բայց եթէ բացառութիւն մի ենթադրելով բնութեան օրինացը : Բնականապէս

ստոյգ է թէ գոն մարմինք , երկիր , արե-
գակն , և թէ քար ձգեալ յօդս անկանի
յերկիր : Բնական ստուգութեան առար-
կայք են այն ծանօթութիւնք զորս տայ
մեզ ըմբռնողորքիւնն սրտաքիւն . կը հաստա-
տուին նաև ներածոշրեան վերայ , ինչպէս
վերջի օրինակին մէջ :

Ստուգողորքիւնն քարոյական հիմնեալ է
մարդկային հոգւոյ բնական կազմութեան
վերայ . այսպէս բարոյապէս ստոյգ է որ
առողջ մտօք և մարմնով մարդ մի՛ որ աշ-
խարհիս վերայ կարելի եղած երջանկու-
թիւն ունի՝ չկրնար անձնասպան ըլլալ : Բա-
րոյական ստուգութիւնն դժորդելու հա-
մար՝ հարկ է բոլորովին քանդուած սե-
պել մարդկային բնութեան պայմաններն :
Բարոյական ստուգութեան կնիքն գլխա-
ւորապէս կը տրուի մարդկային վկայութեան .
օրինակ իմն ըստ վկայութեան բազմաց որք
չէին կրնար խաբել և խաբի՞ ստոյգ է թէ
հռովմէական հասարակապետութիւն մի
եղած է , ստոյգ է դարձեալ անոնց համար
որ Փարիզ քաղաքն տեսած չեն՝ թէ իրա-
պէս կայ այս քաղաքս : Մարդկային վը-
կայութեամբ աւանդուած իրաց վերայ ըս-
տոյգ ըլլալու համար՝ քնական ստուգողորքիւն
ալ կը փնտուի , որպէս զի հաստատուի
թէ այն իրերն աւանդող վկայք՝ իրենք ալ
խաբուած չէին կրնար ըլլալ :

Ստուգութեան այս զանազան տեսակ-
ներս իրենց հիման և առարկային մէջ կը

տարբերին . բայց որովհետև ստուգու-
թիւն են՝ ապա իրենց ներքին արժէից մէջ
դանադանութիւն չունին . ամէն մարդ ալ
հաւասարապէս զգայ յանձին անդիմա-
դարձ ստիպմունք մի հաւատալու՝ օրինակի
համար , թէ հռովմէական հասարակապե-
տութիւն մի եղած է , Փարիզ ըսուած քա-
ղաք մի կայ , ինչպէս որ կը ստիպուի հա-
ւատալու ճշմարտութեան չափաբերական
առածից , կամ գոյութեան իւր խորհրդո-
ցը , և այլն . և անկարելի է տարակուսիլ
ասոնց կամ անոնց վերայ : Ստուգութեան
մէջ աստիճան չկայ , այլ է կամ չէ . միջին
սահման մի չկայ : Ստուգութիւն մի ուրիշ
ստուգութենէ նուազ որ ըլլայ՝ նոյն իսկ
ասով կը պակսի այն անյաղթելի զօրու-
թեան գերագոյն աստիճանէն՝ որ ՚ի բաց
վանէ դամենայն երկիւղ և զվտանգ մոլո-
րելոյ . որով բուն ստուգութիւն չկրնար
ըլլալ :

Սովորութիւն եղած է հասարակ խօ-
սակցութեան մէջ քարոյսակաւ ստուգոչքիւն
ըսել հաւանականագոյն բան մի ցուցնե-
լու համար . բայց բանախօսութեան և բա-
ռից ճիշդ գործածութեան մէջ այս բառիս
նշանակութիւնն պիտի ըլլայ բուն ստու-
գութեան իմաստով :

Բ . Եթէ ստուգութիւնն զննելու ըլլանք
նկատմամբ եղանակին որով յառաջ գայ
երկու դանադան տեսակ կը բաժնուի .
ստուգութիւն անմիջևորդ և ստուգութիւն

միջնորդական՝ որ կը կոչուի նաև արտաձա-
կան կամ ներաձական, ըստ որում արտա-
ծութեամբ կամ ներածութեամբ յառաջ
եկած է :

Անմիջնորդ ստուգութիւն կըսուի անի-
կայ՝ որ պարզապէս ճշմարտութեան բա-
ցայայտութենէն առաջ կու գայ . այսպէս
է գիտակցութեան երևութից ստուգու-
թիւնն, առածից ստուգութիւնն, և այլն .
օրինակի աղագաւ . Բոլորն մեծ է քան զմա-
սրն իւր :

Միջնորդական ստուգութիւնն այն է որ
բանավարութեան միջնորդութեամբն կը
գտնենք . օրինակի համար այս առաջար-
կութեանս ստուգութիւնն թէ Եռանկեան
մի երեք անկիւններն 'ի միասին՝ հաշուար և
երկուռ ուղիղ անկեանց :

Անմիջնորդ ստուգութեան առարկայ ե-
ղած ճշմարտութիւններն մեր ամէն ծանօ-
թութեանց սկիզբն են, և հարկ է զանոնք
ընդունիլ՝ առանց ցուցմունքնին փնտռե-
լու . որովհետև այս ճշմարտութիւնք այն-
պէս պայծառ կը սեպուին՝ որ կարելի չէ
ուրիշ աւելի պայծառ ճշմարտութիւններ
գտնել զանոնք ապացոցանելու համար .
և եթէ կարելի ըլլար զանոնք տարակուսի
տակ ձգել՝ բացարձակ քննողականութեան
կամ սկեպտիկականութեան մէջ պիտի ան-
կանէինք ¹ :

1. Տես 'ի Հոսիւսութեան գլոյթ . Յաղագս նախ-
նական ծանօթութեանց և ճշմարտութեանց :

Գ. Յադագու հառաւելակաւնոչքեան .

Հայրն Պիւֆիէ ըսաւ ¹. « Ճշմարտութիւնն մարդուս համար այնչափ հարկաւոր է՝ որ պէտք է միշտ ապահով հնարք փնտռէ՝ անոր հասնելու համար . և երբ չկրնար՝ գոնէ այն վնասուն փոխարինէ ընդունելով զայն ինչ՝ որ աւելի ճշմարտութեան կը մօտենայ՝ և որ ճշմարտանմանոչքիւն կը կոչուի : Սոյնը հասկընալու է նաև հառաւելակաւնոչքեան վրայօք . որովհետև հաւանականութիւնն այն բաներուն կը տրուի՝ զորս միտքն հաստատէ ապա նմանոչքեանն զոր ոչնիև ընդ ճշմարտին » :

Դատողութիւն մի ստոյգ է՝ երբ 'ի բաց վանէ զամենայն երկիւղ և զվտանգ մտորութեան . իսկ դատողութիւն մի որ ծանրակշիռ պատճառաց վրայ հաստատուայ է՝ ապայն ոչ 'ի բաց փակե զամենայն փոակց մոտրոչքեան՝ հառաւելակաւն է միայն՝ առաւել կամ նուազ՝ ըստ առաւելութեան և նուազութեան ծանրակշռութեան պատճառացըն : Ճշմարտանմանութեան և հաւանականութեան վերայ հիմնեալ մտաց հաւանութիւնն զանազան աստիճան կունենայ . յորոց ոմանք ստուգութեան կը մօտենան , և այլք երթալով տկարանան և տարակոչսի կը հասնին , որ այնպիսի վիճակ մի է

1. Ճառ յադագս նախնիկ՝ ճշմարտութեանց :

յորում միտքն առկախեալ կը մնայ հաւա-
սար և դիմադարձ պատճառաց մէջ :

Հաւանութեան այս զանազան աստի-
ճաններս առաջ կուգան թէ աւելի կամ
նուազ խորախորհուրդ քննութենէ իրաց,
թէ 'ի զանազան փորձառութեանց և պա-
րագայից և թէ յայլ պատճառաց :

Հաւանականութիւնն կրնայ յարմարիլ
յիրս անցեալս և յապագայս, որպէս և յիրս
ներկայս : Մարդիկ շատ նիւթոց մէջ հա-
շակակաւորեալսն հաշիւներ կընեն, ինչպէս
նաև աղիւսակներ ալ շինուած են հաշա-
կակաւորեալսն երկարորեալսն կենաց : Երբեմն
կրնանք ըստ կամի փոփոխել յաջող և ճա-
խող դիպուածոց կամ վիճակաց թիւն,
ինչպէս օրինակի համար վիճակահանու-
թեան մի մէջ ըստ թուոյ տոմսակացն զորս
մէկը կառնու : Եթէ վիճակաց թիւն որոշ
է՝ հաշակակաւորեալսն իշրարակնչիշր աստի-
ճանն կրնայ ստուգութեամբ գուշակուիլ և
զրուցուիլ՝ համեմատութեամբ յաջող և
ճախող վիճակաց :

Հասարակ կենաց ընթացից մէջ հաւա-
նականութեան վերայ հիմնեալ դատողու-
թիւնք խիստ շատ են. ճշմարտանման և
կարծեօք պատճառաբանութիւնք՝ շատ ի-
րաց մէջ կը գործադրուին՝ յորոշողութիւնս
պետութեանց և 'ի բազում յառտնին և
հասարակաց իրս : Ապա ուրեմն շատ դի-
պաց մէջ հաւանականով գոհ կրնանք ըլ-
լալ. բայց պէտք է որ միշտ ստուգութեան

հետամուտ ըլլանք, ապա թէ ոչ միշտ մոլորութեան սահմաններն կը թափառինք՝ անոր մէջ անկանելու վտանգով:

Գ Լ ՈՒԹ Բ .

ՅԱՂԱԳՍ ՇԱԽՂԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

Ամենայն բանաւոր միտք և իմացողութիւն անդիմադարձ պէտք մի կը զգայ ճշմարտութեան հասնելու. բայց շատ անգամ ճշմարտութիւնն մեր աչքէն կը ծածկուի, և հարկ կըլլայ զանի որոնել. դարձեալ բնական է անոր պատճառն իմանալ, և ստէպ պէտք կըլլայ այլոց ալ զնոյն ապացուցանել: Այս երկու վախճանիս հասնելու համար՝ հնարքներ կան գործածելու և ճամբայ մի ուսկից ընթանալու. այս է ահա շաշիղ¹ ըսուածն:

Շաշիղ ըսելով կը հասկըցուի դրոշքիւն մի հետքից՝ գորս 'ի մար արկանեւք առ 'ի գրասեւ և ապացոռցանեւ զճշմարտոշքիւն:

1. Ինչուան հիմա մեր լեզուով գրուած իմաստասիրական գրոց յունական ձայնիւ Méthode բառին տեղ որ շաշիղ կամ ճամբայ կը ցուցնէ՝ ոճ բառն գործածուած է, որ Style բառին թարգմանութիւնն է և բանասիրական ուսմանց սեպհական, ինչպէս որ Հեփոբական արուեստին մէջ բացատրեր ենք:

Այս հնարքս ըստ բնութեան առարկայից, ըստ սովորութեան մտաց և եղանակաց զորս գործածէ՝ զանազանին 'ի մանունս, բայց կարգ իմն կամ ո՛ր և իցէ շաւիղ մի հարկաւոր է մեր իմացողութեան : Մարդկային մտաց տկարութեան հետեւանքն է՝ որ միով և եթ նկատմամբ չկրնար իրաց բովանդակութիւնն և մանրամասունքն միանգամայն տեսանել : Արդ շաւիղն կարգ մի դնելով մեր ծանօթութեանց առարկայից մէջ՝ օգնէ մեր մտադրութեանը, օժանդակէ յիշողութեան, տայ յստակութիւն ստացեալ գիտելեաց և սլատրաստէ զբան մտաց առ 'ի գտանել նորանոր յարաբերութիւնս, և միանգամայն դիւրին և յստակ յարդարէ զբացատրութիւն ծանօթութեանցս այսոցիկ :

Շաւղի գործածութեան մէջ որչափ ալ զանազանութիւն ըլլայ՝ բայց հարկ է որ անոր մէջ գտնուի հասարակաց ճամբայ մի, ամէն ուղիղ մտաց յանկաւոր, շաւիղ մի զոր նոյն ինքն մարդկային մտաց բնութիւնն ցցուցեր է, և զոր կը գտնենք մասնական շաւղաց ըստ մասերուն մէջ : Ըսածէս կը հասկցուի թէ գոյ շաւիղ մի բնական և հասարակ, և այս պէտք է ըլլայ մասնական շաւղաց հաստատուն տիպն ու օրինակը՝ հանդերձ փոփոխութեամբ իւրիք ըստ զանազանութեան առարկայից որոնց համար պիտի գործածուի և ըստ զօրութեան մտաց որ զայն պիտի գործածէ : Գիտենք

որ ճարտարախօսն ալ քերթողն ալ և ի-
մաստասէրն ալ վերլուծութիւններ և շա-
րադասութիւններ կրնեն, բայց ամենքն
ալ նոյն կերպով չեն ըներ, և նոյնչափ
ճշգութեամբ իրարու հետ զանոնք չեն
չաղկապեր :

Յադագս վերլուծութեան և շարադասութեան

Մեր ըմբռնողութեանց առարկայք ներ-
կայանան մեզ բաղկացու կերպարանօք՝
այսինքն ամբողջապէս, ներքին և արտա-
քին բնութիւնք բաղադրեալ զիրս յանդի-
ման առնեն մեզ, զորս առջի բերան վեր՛ի
վերոյ կըմբռնեմք իրենց բաղկացութեան
մէջ՝ առանց որոշակի զանոնք զանազանե-
լու : Առարկայի մասունքն և սեպհակա-
նութիւնքն ճանչնալու համար՝ միտքն յա-
ջորդաբար և վերացմամբ կը քննէ այս
մասունքն և այս սեպհականութիւններն,
այսինքն զառարկայն կը լուծէ : Եթէ
միտքն բաւական սեպէր միայն լուծելն՝ ա-
ռանց նորէն շարադասելու՝ հատակոտոր
ճանօթութիւնս և եթ կունենար, և տա-
րերս անջատս յամբողջութենէ, բայց չէր
կրնար ճանաչել այս տարերաց կապն և
իրարու յարաբերութիւնքն, ապա ուրեմն
չէր կրնար ճանաչել զամբողջութիւն իրին-
որովհետև յայտնի է թէ առարկայի մի-
տարերքն այն ատեն նոյն առարկայն կը
ձևացնեն՝ երբ իրարու հետ միացեալ

են : Ապա հարկ է տարերքն իմանալու
համար ամբողջն տրոհելէն ետև՝ միտքն
նոյն տարերքն դարձեալ միացնէ՝ ամբող-
ջութիւնն իր առջի և բնիկ վիճակին դար-
ձնելու համար : Այս հնարից առջինը վեր-
շուժոքիւն կրօուի կամ եղանակ և շաւիղ
տրոհելոյ . և երկրորդն շարադասութիւն կամ
շաւիղ և եղանակ բաղադրելոյ : Արևու-
ծութիւնն և շարադասութիւնն իրարմէ
անանջատ են , և ճիշդ խօսելով երկու ե-
ղանակ չեն , այլ երկու հետք շաշի : Բիւր-
իմաց և նիւթական օրինակ մի տալու հա-
մար՝ եթէ կուզենք ժամացուցի մի ճիշդ
ժանօթութիւնն ունենալ , հարկ է որ յա-
ջորդաբար դիտենք անոր ցուցակն , անիւ-
ներն և զսպանակներն , մէկ խօսքով
գործւոյն ամէն մէկ մասն՝ իւրաքանչիւրոց
չարժամաքն : Սակայն այս դիտողութիւնս
թէպէտ մասնական ժանօթութեանց շարք
մի կուտայ մեզ , բայց գործւոյն ամբողջա-
կան գաղափարն չտար՝ ինչպէս որ է իրա-
կանապէս , իրենց մասանց յարաբերու-
թիւններովն և անոնցմէ առաջ եկած սպա-
սահարկութեամբն : Ապա հարկ է վերլու-
ծութեամբ բաժնուած տարերքն՝ դարձեալ
նորէն իրենց յարաբերութեանց մէջ դնել ,
և գործին նորէն բաղադրել , որ է ըսել
շարադասութիւն բանեցնել :

Հարկ է դիտել՝ որ իր մի վերլուծու-
թեան ճամբով ալ սկսինք՝ շարադասու-
թեամբ լմնցընելու համար , սակայն ճամ-

բուն սկիզբն միշտ տեսակ մի շարադասութիւն է, շարադասութիւն բնագոյական և շիրք, որ բաղկացու իրի մի պէս յղացուած առարկայէն չղանազանիր: Առաջին նկատմամբ և առաջին ըմբռնմամբ՝ մեր միտքն բնազդաբար իր առարկայն կը բռնէ որպէս ամբողջութիւն մի մասանց, կերպից և յարաբերութեանց, յիրաւի ազօտ իմն ըմբռնմամբ որպէս ամբողջութիւն ինչ. ուստի առարկայ մի տրոհել կամ բաժանել որ կըսուի՝ այնու մտօք չըսուիր՝ իբրու թէ այն առարկայն բաղադրեալ կերպով կը յղանամք: Տարակոյս չկայ՝ որ այս շարադասութիւնս պէտք է ըլլայ այս ինչ մասնաւոր առարկային համար, սպա թէ ոչ այն առարկայն էակաց բազմութեան մէջ կը խառնուի կերթայ. օրինակի համար գիւղական վայր մի տեսած ատեննիս՝ առջի բերան բնազդական շարադասութեամբ մի անոր ամբողջութիւնն կը բռնենք, յետոյ վերլուծութեամբ հետզհետէ կը քննեմք անոր մասերն, ծառերն, հովիտներն, լերանց կողերը, և այլն. և վերջապէս շառղական շարադասութեամբ՝ որ վերլուծութեան հետեւութիւնն է, կը միացնենք և նկատենք իրենց յարաբերութեանց մէջ այն մասերն որ այն գիւղական վայրն կը ձևացնեն: Նոյն բանն կընենք եթէ դրած օրինակնիս գիւղանկար մի ըլլայ: Ապա ուրեմն գիտութեան սկիզբն և վախճանն շարադասութիւնն է.

առաջինն շատ անկատար , իսկ երկրորդն
փոքր 'ի շատէ կատարեալ ըստ առաւել և
նուազ զօրութեան վերլուծութեան :

Գիւրին է ըմբռնելն որ շաւղական զննո-
ղութեան և երևութից վերլուծութեան
մէջ կարգ մի պէտք է , որովհետև շաւղն
առանց կարգի անխմաստ բան մի կըլլայ :
Քոնտիյագ իր Բանախօսութեան մէջ¹,
ենթադրելով թէ շատ մի մարդիկ գեղի
տուն մի գտնուելով՝ երկայն ատեն կը դի-
տեն ընդարձակ դաշտ մի՝ ուր որ բնու-
թիւնն զանազան գեղեցկութիւններ սը-
փուեր է , և արուեստն ալ զբնութիւնն ա-
ւելի գեղեցկացուցեր է , այս դիտողու-
թիւնս կընէ որ ամէն այն դաշտավայրն
տեսնողներն՝ հաւասարապէս լաւ չեն
ճանչնար զանիկայ , և մէկմէկէ շատ տար-
բեր կը նկարագրեն . և սակայն ամէնքն
ալ նոյն առարկայներն տեսած են . բայց
ոմանք ըստ բերման դիպաց կը հայէին ,
իսկ այլք կարգով մի զանիկայ կը զննէին :
« Ուրեմն որն է այս կարգը , կը հարցնէ .
և սրատասխան կուտայ թէ այն է՝ զոր և
բնութիւնն կը ցուցնէ , այսինքն ինչ կար-
գով որ ինքն զառարկայս մեզ յանդիման
առնէ՝ նոյն կարգով դիտել զանոնք . որով-
հետև կան առարկայք որ մեր նկատողու-
թիւնն մասնաւորապէս իրենց կը քաշեն՝
աւելի աչքի զարնելով և դուրս ցատքե-

1. Ման առաջին գլ. Բ :

լով, իսկ ուրիշներն անոնց բոլորն շա-
րուած կերեին. ուստի առաջ առջիններն
կը դիտենք, և երբոր անոնց իւրաքանչիւր
դիրքն կորոշենք՝ միւսերն անոնց մէջ տեղն
անկանին՝ իւրաքանչիւր իր տեղն » : Այն
ատեն միով եւթ նկատմամբ մտաց՝ կրնանք
միահաղոյն կարգով ամփոփել այն առար-
կայներն և անոնց յարաբերութիւնքն,
զորս առաջ հետզհետէ և առանց կցոր-
դութեան տեսեր էինք : Ահա այս եղանա-
կաւ կը կատարուին բնականապէս և կար-
գաւորութեամբ շաւղի գործողութիւն-
ներն :

Շաւղի ընդհանուր ծանօթութիւնն և
անոր կրկին հնարքն որ է տրոհել և բա-
ղադրել՝ շատ դիւրին է հասկնալը՝ երբ ան-
հատական էակաց և իրաց և նիւթեղինաց
վերայ է խնդիրն, այսինքն այնպիսի իրաց՝
որ տեսանելի են և շօշափելի, ինչպէս ժա-
մացոյց մի, գիւղական տեսարան մի, և
այլն, ինչպէս էին վերոյգրեալ օրինակ-
ներս : Օրինակներս բաւական աղէկ կը
հասկցնեն շաւղի հիմնական գաղափարն
իր պարզութեամբը. բայց շաւղի գլխաւոր
վախճանն այն չէ : Այս այն անհատական
առարկայներն շաւղական կերպով տրոհելն
և բաղադրելն բաւական չէ՝ եթէ չկարե-
նանք զանոնք հանրացնել, եթէ յերևու-
թից չկարենանք ներածել զօրէնս, և ՚ի
սկզբանց հետևութիւնս. միով բանիւ եթէ
չկարենանք դիտութիւն մի յօրինել : Եւ

տհա այն ատեն շաւիղն ըլլալով հնարք յօրինեւելոյ և զարգացուցանելոյ զգիտութիւնս՝ աւելի դժուարակենտրոն կըլլայ և գործադրութիւնն դժուարին, ուստի հարկ կը սեպեմք նորանոր բացատրութիւնս յաւելուլ :

Ամենայն ուսումն և ամենայն խուզարկութիւն ճշմարտութեան՝ անտարակոյս կը բովանդակէ բնական շաշղի կրկին մասունքն որ են վերջոճոճիւն և շարադաստըն, սակայն ըստ բնութեան առարկայից զանազան համեմատութեամբ . և երկու հնարքէն որն որ շատ կը գործածուի՝ անոր անունն կը տրուի նաև բոլոր գործողութեանց շարքին, և որոշիչ կնիքն կը սեպուի :

Շաշղ վերջոճական . Եթէ շաւիղն բաղկացու առարկայից վերայ է՝ ինչպէս են արտաքին ըմբանողութեան տակ անկանող երևոյթներն կամ անոնք որ ՚ի գիտակցութենէ ծանուցեալ են, այն ատեն հարկ է որ շաւիղը որոնէ և զատէ զանոնք բաղկացնող տարերքն . և այս վախճանիս հասնելու համար ալ՝ հարկ է տրոհէ զառարկայս, այսինքն վերլուծէ : Բայց քանի որ մէկ կողմանէ վերլուծութեամբ իրաց տարերացը կը հասնինք՝ միւս կողմանէ պէտք է ստացած ծանօթութիւններն դասաւորել և հանրացնել, այսինքն շարադասութիւնն կցորդել ընդ վերլուծութեան . սակայն այս աշխատանաց մէջ տիրող մասն և գըլ-

խաւոր հնարքն առարկայից տրոհումն և վերլուծութիւնն է, և այս պատճառաւ բռնած շաւիղնիս իր բովանդակութեան մէջ վերջո՞ծական շաշիղ կըսուի: Այսպէս, օրինակի համար, բուսոց գիտութիւնը բռնական ակնդամահատո՞ւնքեան և բուսոց վերջո՞ծական զննողո՞ւնքեան վերայ հաստատուած է: Յիրաւի որչափ ալ մէկ կողմանէ կը վերլուծենք և մանրամասն կը զննենք բուսոց զանազան մասու՞նքն, անոնց կատարած գործն և իրենց սեպհականութիւններն, միւս կողմանէ ալ մարդկային մտաց բնութեան համեմատ՝ զննողութեան յառաջ բերածներն կը հանրացընենք և կը դասաւորենք, յորմէ առաջ կուգայ կարգաւորեալ շարահաստո՞ւնքիս մի որ բռնականութիւն կը կոչուի. բայց այս գիտութեան տարերք մատակարարողը վերջո՞ծողութեան է: Վերջո՞ծական շաշիղ ըմբռնողութեանց տուած բաղկացու ծանօթութիւններէն՝ սեպհականութեանց, սկըզբանց և պարզ տարերայ կանցնիներ, անհատական ծանօթութիւններն կը տրոհենք, յարգասեաց առ պատճառան կը վերանանք, և ՚ի մասնաւորէ առ ընդհանուրն կընթանամք: Այս շաւիղս որուն մէջ վերլուծութիւնն տիրելուն համար վերջո՞ծական ըսուեցաւ՝ կըսուի նաև շաշիղ փորձառական, որովհետև փորձառութեան վերայ հաստատուած է. կըսուի նաև շաշիղ ՚ի յետևագո՞ւնէ որովհետև յարգասեաց և ՚ի

հետևութեանց սկիզբն առնու՛ առ սկըզբունս և առ պատճառս վերանալու համար . դարձեալ կանուանի շաշիղ և երաժոշեան, չէթէ արտածութիւնն մերժելուն համար՝ այլ զի աւելի ներածութիւնն կը գործածէ : Այս շաշիղս հնարած է օրինակի համար զգիտոշրիշևս քնակասևս և զհոգեխօսոշրիշևս փորձառական :

Շաշիղ շարադասական . Մարդկային խորհրդոյ մէջ կարգ մի գաղափարաց կը նկատենք որ ոչ բուն գիտակցութեան երևոյթներ են , և ոչ արտաքին ըմբռնողութեան երևոյթներ , այլ յղացմունք բանի մտաց մերոց , և որոնք մեր մտաց կը ներկայանան որպէս բացարձակ ճշմարտութիւնք , անկախք՝ երևութից փոփոխական և յաջորդական կարգէն . այսպիսիք են սկիզբն գոյացութեան և սկիզբն պատճառի , և այլն . դարձեալ ծանօթութիւնքն զօրութեան , քանակի , միջոցի , տեղութեան , կարգի , արդարոյ , բարւոյ , ճշմարտի , գեղեցկի և սոցին նմանեաց : Մեր միտքն ըստ իւր սովորական ընթացից՝ վերլուծութեան փորձ մի սկսելով՝ իր մտադրութիւնն այս գաղափարացս վերայ կը դարձնէ՝ զորս առջի բերան անորոշ կերպով մի յղացելի , և յետոյ յստակ կերպով կորոշէ զանոնք ուրիշ ծանօթութիւններէ : Յետոյ իւրաքանչիւր այս ծանօթութիւններս ուրիշներէն որոշուելով՝ անմիջապէս կուտամեզ զգաղափար սկզբան իրիք և հանրա-

կան օրինաց՝ զորս իբրև ընդարձակ շարա-
դաստըրիւն մի կը նկատենք, աւելի ընդար-
ձակ քան զայն շարադաստութիւնս՝ որոնց
կը հասնինք ամբողջական վերլուծութեան
սովորական եղանակօք : Այս ծանօթու-
թիւններս որ առջի բերան իրենց բանա-
ւորական, հանրական և բացարձակ կըն-
քովը կը յայտնին՝ կը յարմարցնենք յետոյ
չատ մի մասնաւոր դիպաց . օրինակ իմն
բնական օրինաց արդասեացը, մեր հոգւոյն
երևութից և կենաց պատահարներու,
յորս բանն ցուցանէ մեզ պատճառներ,
զօրութիւններ, կարգ, ճշմարտութիւն,
բարութիւն, և այլն : Այս ծանօթութիւնքս
այնպիսի սկզբունք են՝ որոց յընդհանրու-
թեան մէջ յղանամք շատ մի ճշմարտու-
թիւններ զանազան աստիճանօք՝ զորս հը-
նար է արտածել կամ յառաջ բերել յա-
ջորդաբար : Այսպէս արտածութեան ձե-
ռօք շարադաստութիւնն կերպիւ իւր կը
վերլուծենք՝ երկրորդական կարգի ճշմար-
տութեանց մանրամասունքն և առանձին
երևոյթներն դիտելով, որոնց հասարակ
կապը հանրական սկզբունքն են : Սակայն
շարադաստութիւնն իր միութիւնն կը պահէ՝
պատճառաւ զինքն ձեացնող սկզբանց
բացարձակ կնքոյն, որով ողջ և ամբողջ
կը մնայ, և բոլոր գործողութեանց ընթա-
ցից վերայ կը տիրէ : Այսպէս օրինակի
համար աշխարհիս վերայ ունեցած կարգի
գաղափարնիս՝ միշտ նոյնական կը մնայ

Թէպէտ և մարմնոց բաղադրութիւններն
յանհունս կը տարբերին , և միտքեան կեիք
մի կը տալաւորէ բնութեան բանաւորական
նկարագրին իւրաքանչիւր մասանցը : Մարդ-
կային մտաց այս բռնած ընթացքը շաշիղ
շարադասական կըսուի . որուն մէջ հանրա-
կանէն առ մասնականն կընթանամք , յընդ-
հանուր բայց սլարդապէս ըմբռնելի ճշմար-
տութիւններէ՝ առ ծանօթութիւնս ևս քան
զևս բաղադրեալս , 'ի սկզբանց առ հետե-
ւութիւնս , 'ի պատճառաց առ արգասիս :
Այս շաւիղս կը կոչուի նաև շաշիղ բանաւոր-
ական կամ 'ի յառաջագոշնէ , որովհետև
մտաց յղացմանց վերայ կը հաստատուի՝
զորս փորձառութեամբ չենք ստանար .
կըսուի նաև շաշիղ արտածուրեան , որով-
հետև արտածութիւնն է գլխաւոր գոր-
ծին : Աս է ընդհանրապէս շախարհական
և բնագանցական գիտութեանց շաւիղն , և ա-
ռանձինն եակախօսութեան :

Գործածութիւն շաշի . Երբ զննողութեամբ
և գիտողութեամբ օրէնք մի կամ ներ-
ածութեան ճշմարտութիւն մի յայտնելու
կաշխատիմք , տիրող շաւիղ վերլուծու-
թիւնն է , ինչպէս որ վերը ցցուցինք . ա-
նոր համար վերջոշմական կարգն՝ գիւտերու ,
հնարիմացութեանց և հնարից շաւիղ կը
սեպուի . իսկ երբ արդէն ձևացեալ գիտու-
թիւն մի բացատրել պէտք ըլլայ՝ բռնած
ընթացքնիս աւելի շարադասական կարգն
պիտի ըլլայ . անոր համար այս շաւիղս

բացատրութեան, վարդապետութեան և
 ուսուցանելոյ շաւիղ ըսուեցաւ: Այսպէս
 մատենագիր մի առաջուց հաստատեալ
 բաժանմանց և ստորաբաժանմանց համե-
 մատ ուսման ընթացք մի կը շինէ, զոր չէր
 կրնար ընել՝ եթէ ճիշդ վերլուծական ըն-
 թացքն բռնէր, բայց եթէ ոտն առ ոտն
 յառաջելով ըստ զննողութեանց և գիւ-
 տից որ առջեն կելլեն:

Նոյն իսկ զննողութեան գիտութիւն-
 ներն՝ ինչպէս են բնաբանութիւնն և բնա-
 լուծութիւնն ուսուցանելոյ մէջ շարադա-
 սական կարգն յարմարագոյն սեպուելուն
 պատճառն այս է որ՝ բացատրութիւններն
 աւելի պայծառ կըլլան, և այս շաւղով
 միտքն աւելի գիւրին կը բռնէ զանոնք, և
 յիշողութեան մէջ աւելի սերտ կը տպաւո-
 րուի սկզբանց և հետեւութեանց բնական
 կասկածներն, որ մեծ օգուտ է գիտու-
 թիւններն հասարակ մտաց ալ ըմբռնելի
 ընելու, մանաւանդ երբ այս գիտութիւն-
 ներս անանկ մտաց կաւանդի՝ որ գեռ ու-
 սումնական վաստակոց վարժած չեն: Ուր
 ընդհակառակն վերլուծական կարգ որ
 բանեցնէինք՝ ինչուան՝ ի սկզբունս վերա-
 ցած ժամանակ՝ միտքն տարտամ վիճակի
 մի մէջ կը գտնուէր՝ և զուր աշխատելով
 վհատութեան մէջ կրնար անկանիլ: Բայց
 երբոր կուզենք որ տուած հրահանգն իս-
 խորին և զօրաւոր ըլլայ՝ վերլուծական
 կարգն շարադասականէն աւելի յարմար

է՛ այն գիտութեանց համար որ վերլուծա-
կան հնարքով յօրինեալ են . որովհետեւ
աշակերտին ալ նոյն ընթացքն բռնել տա-
լով՝ ինչ ընթացքով որ այն գիտութիւնն
յօրինուեր է , անով կը սորվեցնենք անոր
թէ ինչպէս ինքն ալ օր մի իր զննողու-
թիւններն պիտի ուղղէ ճշմարտութիւնն
յայտնելու համար : Բայց միշտ օգտակար
է գիտութիւն մի աւանդելու ժամանակ
վերլուծութիւնն շարադասութեան հետ լծոր-
դել , և վերլուծապէս գիտութեան հիմնա-
կան ճշմարտութեանց ելլելէն ետեւ՝ հար-
կաւոր է շարադասապէս անոնց ապացոյ-
ցերն տալ . որպէս զի պայծառ տեսնուի
թէ հետեւութիւններն ՚ի սկզբանց կը բըղ-
խեն :

Վերլուծութեան գործածութեան մէջ
երկու վտանգէ զգուշանալու է , որոնց
առջինն է տրոհումն անկատար ընել կամ
վերլուծելու նիւթն որչափ որ պէտք է
չբաժանել . երկրորդն չափէն աւելի բաժ-
նել և ճղճղել և մանր բաժանմանց մէջ
պաշարուիլ : Առջինով վերլուծութիւնն բա-
ւական շուսաւորեր միտքն . իսկ երկրոր-
դով շփոթութիւն կը պատճառէ , ըստ ա-
ռածին Սենեկայի թէ Որ ինչ շուսակի ՚ի փո-
շի մակրամաղ՝ շփորս ծնակի . և յիրաւի ա-
սանկով խնդիրն անշօշափելի և անըմբռ-
նելի փոշի կը դառնայ : Ապա ուրեմն
պէտք է որ վերլուծութիւնն յարդար սահ-
մանին մնայ , և խմացողութեան կարօտու-

Թիւնն լեցրնէ՝ առանց անոր կարողութեան
չափն անցնելու: — Իսկ շարադասութեան
վտանգն շուտափութութիւնն է. մարդ-
կային միտքն՝ ի բնէ կարճամիտ և անձնա-
հաճ ըլլալով՝ կը փութայ առանց հասուն
խորհրդոյ օրինաց մի ներքև ձգել իր զըն-
նածներն՝ որուն արդէն կը հպատակին
նախընթաց իրք ծանուցեալք:

Երբ շարադասութիւնն պարզապէս վե-
րըստին բաղադրութիւն է առարկայի մի՝
միաւորութեամբ տարերացն զորս վերլու-
ծութիւնն անջատեր է, յայտնի է որ իր ար-
ժէքն վերլուծութեան արժէքէն կը կա-
խուի, և թէ որ այս վերջինս պակասաւոր
եղած է՝ ինքն ալ պակասաւոր պէտք է
ըլլայ: Եթէ վերլուծութեան մէջ իրաց և
հանգամանաց ենթադրութիւն եղած է,
յայտնի է որ շարադասութիւնն ալ փոխա-
նակ ճիշդ ըլլալու՝ ենթադատական շարա-
դասութիւն կամ ենթադատութիւն կըլ-
լայ:

Շաւղի գործածութեամբն է որ կը յօ-
րինին գիտոչքիւնք, կը կազմին վարդապե-
տոչքեան քովանդակոչքիւնք և կը հիմնին
դրոչքիւնք: Դրութիւն մի գլխաւորապէս
երկու պատճառի համար սուտ կըլլայ,
կամ այն որ շարադասութեան հիմն սե-
պուած վերլուծութեան մէջ ամբողջու-
թեան էական տարերաց մէկն զանց առ-
նուած է, և կամ տարր մի մտեր է որ ի-
րապէս ամբողջութեան մէջ չկայ. պարզ

խօսելով դրութիւն մի սուտ կրնայ ըլլալ
բարձրամբ և յաւելմամբ :

Այս անդիպութեանց դէմն առնելու
համար պէտք է Ս. Ճիշդ բռնել այս կանոնը՝
որ առարկայ մի իր մասանց տրոհուելու
ժամանակ՝ ճիշդ և խիստ դիտողութիւն
մի ըլլայ . պէտք է այս մասունքս իրենց
ամէն յարաբերութիւններովն և զանազան
հանգամանօքն նկատել, կամ թէ ըսել
ամէն կերպարանքն դարձնել . և այս
ամէն զգուշութիւններս ընելէն ետքն ալ
դարձեալ տարակուսիլ և իր դատաստանն
կախ թողուլ, ինչուան որ բացայայտութիւն
ունենանք և վստահինք որ էական
իր մի աւելցուցած կամ պակսեցուցած
չեմք : — Բ. Պէտք է ազատ ըլլանք ՚ի կրից,
և պարզապէս զճշմարտութիւնն հետադօտենք
առանց կանխակալ խորհրդոց, և
առանց առաջուց հաստատեալ դրական
նկատումներ ունենալու :

Այս ալ մտքերնիս հաստատ դնելու ենք
որ շաւիղն լաւ կերպով գործածելու համար
կանոններէն աւելի հարկաւոր է իւրաքանչիւրոց
դատողութիւնն և նրբամտութիւնն : Սակայն Պաքոնի, Աարդեսի
ոսի և ուրիշ իմաստասիրաց մէջ շատ
յարմար կանոններ և սկզբունք կը գտնենք՝
որ կրնան առաջնորդ ըլլալ մեզ ՚ի հետադօտութեան
ճշմարտութեան :

Ահաւասիկ Աարդեսի ոսի դրած կանոններն .

Ս. Ճշմարտութեան պէս չընդունիլ իր մի՛ ինչուան որ բացայայտապէս անոր ճշմարիտ ըլլալը չճանչնանք :

Բ. Ի քնին առած ամէն մէկ դժուարութիւններն՝ ի մասունս բաժնենք որչափ որ կարելի է, և որչափ որ պէտք է զանոնք լուծելու համար :

Գ. Մեր միտքն ու խորհուրդն կարգով մի մի յառաջ վարենք՝ ամէնէն պարզ և դիւրիմաց նիւթոց սկսելով, և կամաց կամաց աստիճանաբար ամէնէն բազադրեալ իրաց ծանօթութեանն ելնելով :

Դ. Միշտ և ամէն բանի մէջ թուարկութիւնն այնպէս կատարեալ ընենք և վերադարձութիւններն այնպէս հանրական՝ որ ապահով ըլլանք դուրսը բան մնացած չըլլալուն ¹ :

Այս կանոններս հետագայ չորս բառից մէջ կրնայ բովանդակիլ, այսինքն քացայայտութիւն, վերջո՞ւ՞՞նք, կարգ քնակաս և քոչարկութիւն ակերբի :

1. Ճառ յաղագս շաւղի, մասն երկրորդ :

Գ Լ Ո Ի Խ Գ

ՅԱՂԱԳՍ ՕԺԱՆԴԱԿ ՀՆԱՐԻՑ ՇԱԻՂԻ

Շաւիղն որ իմացողութեան ընթացիցն
 կօզնէ ճշմարիտն հետազօտելու ժամա-
 նակ, ինքն ալ օժանդակի 'ի զանազան հը-
 նարից՝ որ շաւղի գործածութիւնն կը գիւ-
 րացնեն: Այս հնարքս ամէն գիտութեանց
 կը յարմարին, բայց իւրաքանչիւր գիտու-
 թեանց բնութեանն համեմատ՝ ոմանք քան
 զայլս աւելի: Այս հնարքներս երկու
 խումբ կամ հատուածներ կը բաժնենք,
 իրենց իրարու հետ ունեցած մերձաւորու-
 թեան համեմատ, և ըստ մասնաւոր գործ-
 ածութեան նոցին՝ ոմանց զննողական գի-
 տութեանց մէջ, և այլոց 'ի գիտութիւնս
 քանակարոշրեան:

ՀԱՏՈՒԱԾ Ա

ՅԱՂԱԳՍ ԶՆՆՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ,
 ՀԱՆԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ, ԴԱՍՍԻՈՐՈՒ-
 ԹԵԱՆՑ, ԵՆԹԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ

§ . Ա

ՅԱՂԱԳՍ ԶՆՆՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ

Նիւթական էակաց վերայ ստացած ծա-
 նօթութեանց սկիզբն բանավարութիւնն
 չէ, այլ այլ հարկ է անոնց մէջ ամէնէն ա-
 ռաջ գործոց քննութենէն սկսիլ:

Եթէ գործն զոր ճանչնալ կուզենք ինքն իրեն յառաջ կուգայ՝ առանց մեր կողմանէ գործակցութիւն մի ըլլալու՝ այս գործիս վերայ բերած ոչչադիր դիտողութիւնն կը սուր զննողութիւնն . եթէ զննելի արգասիքն մեր կողմանէ գործակցութիւն և պատրաստութիւն ինչ պահանջէ՝ այն ատեն պարզ զննողութիւն մի չէ այլ փորձ և փորձառութիւն այսինքն քննութիւն երևոյթից՝ ի պարագայս յառաջագոյն ասհմաննայս ի զննողէն :

Առջի դիպաց մէջ գրեթէ հանդիսատես մինակ կըլլամք երևութից անցելոց . իսկ երկրորդին մէջ կը գրգռեմք զերևոյթս և կոչեմք զնոսա առ ՚ի դիտել զնոսին : Այսպէս յոչնի փոփոխութիւնքն ճանաչեմք զննողութեամբ , իսկ օրասան մեքենայի արգասիքն փորձառութեամբ ուսանիմք :

Այս բացատրութիւններէս դիւրաւ կը հասկցուի որ զննողութիւնն միշտ փորձառութեան կարօտ չէ , և փորձառութիւնն հնարք մի է զննողութեան :

Զննողութեան և փորձառութեան ճշգրտութիւնն յետագայ կանոններովս կը ստուգուի .

Ս. Զննելի առարկային վրայօք ամենելին կանխակաշտութիւն կամ նախապաշարմունք չունենալ .

Բ. Զննողութեան և փորձառութեան ժամանակ ինչ որ հանդիպի մեծապէս մտադրութիւն ընել անոնց

Գ. Արոչ միտք առնուլ պարագայներն

Ժամանակի , տեղւոյ և միջոցի յորում
գործի իրն . օրինակի համար գիտենք թէ
չառ փորձերու արգասեաց մէջ որչափ աղ-
ղեցութիւն ունի մթնոլորտի վիճակն :

Դ . Մեծ խնամք ունենալ գործածուած
գործեաց ճշգրտութեանն և նրբութեանն :

Ե . Փորձերն զանազանելով հաւաստել և
հանրացնել անոնց յառաջ բերած ար-
դիւնքն , այսինքն մէկմէկէ բոլորովին
տարբեր պարագայից մէջ , և ամէն տե-
սակ նիւթոց վերայ կրկնելով նոյն փորձն .
ինչպէս որ կրնեն բնաբանք , օրինակի ա-
ղագաւ՝ հիմամբ ճանչնալու համար ջեր-
մութեան , ելեքտրութեան և այլ մարմնոց
օրէնքն ու սեպհականութիւններն :

Զ : Եթէ կարելի է՝ վերջոճոճիւնն շարա-
դաստընան ձեռօք ճշդել . այսպէս ահա
ջրածին և թթուածին կազերն բաժնելով՝
որ ջրոյ տարերքն են , ջրոյ բաղադրու-
թիւնն հաստատելէն ետև , նորէն ջուրն
կը կազմենք՝ զանգուածոյ մաս մի թըթ-
ուածնի բաղադրելով ընդ երկուց մասանց
ջրածնի :

Տ . Բ

ՅԱՂԱԳՍ ՀԱՆԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ

Բնական գիտութեանց գլխաւոր նպա-
տակն է որոշել զօրեւա ըստ որոց յառաջ
գան արգասիք ծանուցեալք զննողու-

Թեամբ, և փորձառութեան յարմարագոյն
հնարից գործածութիւնն այն ատեն միայն
դրական գիտութիւն յօրինէ՝ երբ հաստատ
իրի մի կը հասցնէ, և բազմաթիւ երևոյթ-
ներն՝ հասարակ սկզբանց կը վերածէ, և
համառօտ ասել երբ 'ի ներածոչիւն ինչ
վախճանի. արդ ներածութիւնն սովորա-
բար հանգիտոչիւն վերայ կը հիմնի. այս
կրկին հնարից վերայ քանի մի բացատրու-
թիւններ տանք :

Յ. Հանգիտոչիւն.

Սովորական լեզուի մէջ հանգիտութիւն
ըսելով շատ անգամ առարկայից մէջ ե-
ղած յարաբերութիւնքն և նմանութիւնքն
կը հասկցուին. ասիկայ է հանգիտութիւն
յիրս. իսկ քանախօսութեան մէջ գլխա-
ւորապէս հանգիտութիւնն նկատի յոգշոց
կամ յէութեան իրաց, այսինքն այն քնա-
կան տրամադրոչիւնաց վերայ՝ որ տակ մեզ
վերաքերել զիրս նմանս առ պատճառս կամ
առ եակս նմանիս :

Հանգիտութեամբ դատողութիւն կը-
նենք այն իրաց վերայ՝ որոց փորձառու-
թիւն չենք ըրած կամ չենք կըրնար ընել,
ըստ յարաբերութեանն զոր ունին ուրիշ
ծանօթ իրաց հետ. ասով հանգիտութիւնն՝
մեր շատ դատողութեանց աղբիւրն կըլ-
լայ. և առանց անոր կարելի չէ և ոչ քայլ
մի յառաջել կենաց ընթացից մէջ : Ս. յս.

պէս հանգիտութեան վերայ հիմնեալ է
ուտելեաց և դեղորէից գործածութիւնն .
որովհետեւ այս ուտելիքս և այն դեղն առ-
նելնուս պատճառն այն է որ անոնց մէջ
հանգիտութեամբ նմանութիւն մի կը գըտ-
նենք ուրիշներու հետ՝ որոնց յատկու-
թիւններն փորձեր իմացեր ենք : Հանգի-
տութեամբ է որ համարձակ կը քալեմք՝
ուրիշ անգամ չքալած տեղերու վերայ .
հանգիտութեամբ է որ կը դատեմք թէ այս
ինչ հունտն որ ցանենք՝ պիտի ծլի և ետքը
պտուղ պիտի տայ :

Մոխրաքար արտաքիւն հանգիտութեան
ներքին նմանութեան նշան կը համարինք .
օրինակի համար պտուղ մի բրցնելով անոր
սեպհական ձևն ու գոյնը տեսանք , և
զանի ճշբելով ներքին կազմութիւնն ալ
դիտեցինք , և ճաշակելով անոր համն առ-
ինք . հիմա եթէ նոյն ձևն և գոյնն ունե-
ցող պտուղ մի տեսնենք՝ հանգիտութեամբ
կը դատենք թէ անոր համն և ներքին կազ-
մութիւնն ալ առջինին նման պիտի ըլլայ ,
որովհետեւ արտաքին սեպհականութիւն-
ներովն անոր կը նմանի :

Հանգիտութիւնն առաջնորդէ մեզ՝ ի-
րարմէ բոլորովին տարբեր իրաց մէջ ալ
յարաբերութիւններ դնելու , որովհետեւ
ըստ իսիք նոյն ազդեցութիւնն ըրած են
մեր վերայ . օրինակի համար մարդուս
ձայնական գործարանն զարմանալի ճկու-
նութիւն մի ունի՝ իր զանազան տրամա-

դրութիւններն և զգացմունքն բացատրելու, ինչպէս ուրախութիւնն ու տրտմութիւնն, հանգարտութիւնն ու բարկութիւնն, վախն կամ արիութիւնն: Նոյնպէս յանհունս զանազանին կերպարանաց փոփոխութիւնք, և շարժմունք և դիրք մարմնոյ, մեր հոգւոյն զգացմանց և կրաւորութեանց համեմատ, այնչափ որ կամաց կամաց առանց իսկ խորհրդածելոյ այս արտաքին նշանաց՝ ուրախութեան, տրտմութեան, տկարութեան, ուժոյ և այլն, գաղափարներն կուտանք. ձայներն կորոշենք, տխուր կամ ուրախ դէմքերն կը զանազանենք, և այլն: Յետոյ նոյն գաղափարներն անշունչ իրաց ալ կը սեպհականենք. օրինակ իմե առուակի մի կարկաչումն, որոտման ձայնն, անտառի ծառոց սօսաւիւնն, անասնոց դէմքն ու ձայները, զանազան ձևք և գոյնք՝ ինչպէս սպիտակն ու սև՝ ուրախ կամ տխուր կը սուրին, լուրջ կամ գեղածիծաղ, քաղցր կամ խիստ, հզօր կամ տկար, ըստ առաւել կամ նուազ հանգիտութեան ընդ մարդկայնոց կրից:

Հանգիտութենէ առաջ կուգայ Նշանաբանութիւնն ալ. ընդհանրապէս որչափ որ ձևերն մարդու և մարդկայնոց կը մօտենան՝ այնչափ ալ նշաններն յստակ և աւելի իմանալի կըլլան. օրինակի համար դիւրաւ կը գուշակուի այն հանգիտութիւնն որ զարդարութիւնն կանձնաւորէ

կնոջ կերպարանօք՝ ունելով ՚ի ձեռին զկը-
շիս և զսուր :

Տարակոյս չկայ որ շատ դիպաց մէջ
հանգիտութիւնն պատճառ մի է ստուգու-
րեան : վասն զի ամէն մարդիկ բնականա-
պէս և անյաղթելի միտմամբ մի՛ շատ դի-
պաց մէջ հանգիտութեան վերայ հիմնեալ
դատողութիւններն ստոյգ կը համարին :
Իսկ արդ այսպիսի համոզում մի՛ բնու-
թեան ձայն միայն կրնայ ըլլալ, և այս
համոզման վերայ հաստատեալ դատողու-
թիւնք՝ ուրիշ բան չեն բայց եթէ ճշմար-
տութիւն : Ապա թէ ոչ պէտք կըլլայ ըսել
թէ մեր բնութիւնն ճշմարտութեան հա-
մար եղած չէ, և թէ նոյն իսկ բնութեան
տէրն է մեր մոլորութեան սլատճառն, որ
այսպիսի հետեութիւն մի միշտ մերժելի
է ՚ի բանէ : Հանգիտութեան ստուգու-
թիւնն հաստատեալ է ՚ի կարգաւորու-
թեան և յանչարժ հաստատութեան գոր-
ծոց բնութեան, և յետագայ սկզբունքն
կենթադրէ : Նման իրք ՚ի ևնանադեպ հան-
գամանս ևոյն սեպհասկանոչքիշկեկերև ոշկիև .
ևնանս պատճառք ՚ի ևոյն հանգամանս զևոյն
արգասիս յառաջ բերև :

Շատ անգամ հանգիտութիւնն զանա-
զան աստիճանս հաշանականոչքեան յառաջ
ածէ, որ երբեմն այնչափ տկար հաւանա-
կանութիւն կըլլայ՝ որ իմաստութիւն չէ
այնկէց բան մի հետեցնել կամ ներածել :
Հանգիտութեան շարաշար գործածու-

Թիւնն երբեմն արտառոց կամ անդէպ
կարծեաց ալ դուռ կը բանայ . օրինակի
համար Պոնթընէլ Խօսակցութիւն յաղագս
բազմաշարքեան աշխարհաց գրոց մէջ կար-
ծիք կընէ թէ ամէն մոլորակաց մէջ ալ
բնակիչք կան , անոնց երկրիս հետ ունե-
ցած նմանութեան վերայ հաստատելով իր
խօսքն , որ փոքր 'ի շատէ հաւանական կը
սեպուի . բայց աս հանգիտութիւնս բոլո-
րովին ցնորական կըլլայ՝ երբ Վոլֆ կը
պնդէ թէ մոլորակաց բնակիչքն մեզ նման
մարդիկ են , և հաշուով անոնց հասակին
մեծութիւնն ալ կուզէ ցուցնել՝ ըստ հե-
ռաւորութեան մոլորակին յարեգակնէ :

Սուտ հանգիտութեանց զառանցքէն
զգուշանալու համար՝ պէտք է զննողու-
թիւններն և փորձառութիւններն յաճա-
խել , և որոշում մի չընել ինչուան որ խո-
րազնին քննութիւն մի սլատրանաց վը-
տանդներն չհեռացընէ : — Շատ մի առար-
կայից մէջ եղած հանգիտութիւնն՝ շատ
անգամ ամէ զմեզ 'ի ներածութիւն ինչպէս
որ սխալի բացատրենք :

Բ . Ներածութիւն .

Անտարակոյս ներածութիւնն ներքին կա-
պակցութիւն ունի հանգիտութեան հետ ,
բայց անկէց կը զանազանի : Շատ առար-
կայից մէջ տեսնուած քանի մի նմանու-
թեանց վերայ հաստատելով՝ կարծիք կը-

նենք թէ այն առարկայիցմէ մէկուն վերայ
եղած մէկ սեպհականութիւնն զոր ուղ-
ղակի կը զնենք՝ կը գտնուի նաև ուրիշ
առարկայի վերայ ալ : Այս կարծիքս հան-
գիտութեան վերայ հաստատեալ է : Սա-
կայն այս քանի մի առարկայից մէջ եղած
ներկայ նմանութիւնս՝ ճշդութեամբ չցուցը-
ներ հանրական և մնայուն օրինաց մի կը-
նիքն , և բան մի չկայ որ զմեզ ապահովցնէ
այս յարաբերութեանս էական ըլլալուն
վերայ : Բայց երբ հանգիտութիւնն առաջ-
նորդ առնըլով զննողութիւններն և փորձ-
առութիւններն կը կրկնենք՝ որչափ որ
հարկաւոր է , անով մեր զննողութիւննե-
րէ յառաջ եկածն կը հանրացնենք , և զա-
նոնք իրարու հետ կը շաղկապենք այն օրի-
նօք որով կը վարին ամբողջ դաս մի երե-
ւութից : Այն ատեն զայդ ընդհանուր
սեպհականութիւններն և զօրէնս կրնանք
նկրածն որպէս ճշմարիտ , ոչ միայն վասն
ներկայիս , այլ և վասն անցելոյն և ապա-
գային : Եւ ահա այն ատեն մինակ հանգի-
տութեամբ դատողութիւններն կըլլան նե-
րածոչքիւն :

Հանգիտոչքեամբ յարաբերութիւնս կը
հաստատեմք , իսկ ներածոչքիւնն՝ մեր մտած
մէկ գործնոյ եղանակն է որով ՚ի մէջ բազում
առարկայից յարաբերոչքիւնս ինչ հաստա-
տեմք եակակն և մնայունս , և անուշեմք զօ-
րիւնս նոցիւն :

Ահաւասիկ ներածութեան քանի մի օ-

րինակներ . Նևտոն՝ Կալիլէոսի երկրիս
մօտերը ծանրակշռութեան ազդեցութեան
վերայ ըրած զննողութիւններն առաջնորդ
առնելով՝ կարծիք ըրաւ թէ այս զօրու-
թիւնս որուն սաստկութիւնն ամէնէն
բարձր լերանց գագաթանց վերայ ալ չը
նուազիր , այս զօրութիւնս , կըսեմ , ին-
չուան լուսին կը տարածուի , և այն հե-
ռաւորութեան հասնելէն ետեւ զգալի կեր-
պով պիտի նուազէր . և այս կարծիքս հա-
շուով ճշմարտեց . և յետոյ հանրացուց
զանիկայ ամէն մոլորակային մարմնոց վե-
րայ , թէ նկատմամբ իրերաց և թէ արե-
գական , և վերջապէս բնութեան ամէն
մարմնոց . և այս եղև օրէնք հանրական
ձգողութեան՝ որոյ տարազն այս է Սմեւնայն
մարմինք բնականապէս զիրար կը քաշեն ու-
ղիղ համեմատութեամբ զանգոռածոց և խոտոր
համեմատութեամբ հեռաւորութեանց քառա-
կոռւոյն : — Ուրիշ օրինակ . Պրանքլին ՚ի
հանգիտութենէ առաջնորդեալ կարծիք
ըրաւ թէ ամպերու մէջ ծագած փայլակն
և կայծակի արգասիքն ելեքտրական մե-
ծամեծ երևոյթներ կրնան ըլլալ , յետոյ
փորձեր և զննողութիւններ ընելով հաս-
տատեց թէ կայծակի և ելեքտրութեանց
սկիզբն նոյն է : Այն ատեն հանգիտու-
թիւնն փորձառութեան հետ միանալով
յառաջ եկաւ Գրակասն ներածութիւն օրինաց ,
որոց հարստակեն երևոյրք թէ բնական և թէ
արուեստական ելեքտրութեան :

Ներածութիւնն անցանէ անդր քան
զսահմանս զննողութեան և փորձառու-
թեան, և ասոնց հետեութիւններն կը
հանրացնէ երեութից ամբողջ դասու մի
վերայ զանոնք տարածելով, թէպէտ և
զննողութիւններն ու փորձառութիւններն
նոյն սեռի քանի մի իրաց վերայ եղած ըլ-
լայ. այսպէս օրինակի համար՝ որովհետեւ
զննուած է թէ ամէն մարմինք ծանրա-
կշռութիւն ունին, նոյն սեպհականութիւնն
ներածութեամբ բոլոր նիւթոյ վերայ կը
տարածեմք: Ապա ներածութիւնն ենթա-
դրէ զհաստատու ի կարգաշարժիւն և յանկողի
հաստատորիւն ծրագրի տիեզերաց:

Մեր ծանօթութեանց քանի մի ճիւղե-
րուն մէջ՝ փորձառութեան յառաջածա-
գերն՝ այսինքն իրք՝ շատ են, բայց հետե-
ւութիւն մի կամ բովանդակութիւն մի չու-
նին, և դեռ յստակ և ճշգրիտ օրէնք և
հանրական լուծմունք գտնուած չեն, թէ
գործածուած շաւղաց թերութեան պատ-
ճառաւ, և թէ այս գիտութեանց բնական
մթութեան համար. օրինակի աղագաւ եր-
կրարանորիւնն՝ որ այնչափ հակառակա-
մարտ գրութիւններ երևան հանեց. այս
թերութիւնս է պատճառ որ այս գիտու-
թիւններս անկատար և նուաստ կը սե-
պուին:

Երբեմն տեսութիւն մի հաստատուելէն
ետեւ՝ ապագայ փորձառութեանց մէջ այն-
պիսի երևոյթներ առաջ կուգան՝ որ դէմ

ընդդէմ զննողութեանց պատճառ կուտան . և որովհետև իրաց իրականութեան մէջ հակառակութիւն չենք կրնար ենթադրել , ապա բացայայտ է որ պէտք է դատողութիւնն ի կախ թողունք՝ ինչուան որ աւելի ճիշդ և համողողական փորձեր ըլլուին :

Պարոն որ այնչափ պանծացոյց ներածական շաւիղն , կասկածարէ ու կը կանոնադրէ ա . զննողութիւններն ու փորձառութիւններն յաճախել . ք . հետևութիւն հանելու չաճապարել : Գիտութիւններէ շատ օգուտ կրնանք քաղել՝ եթէ՝ ընդ ձգմարիտ ասնդոշխա գիտնանք աստիճանաբար վերելլել յառանձին գործոց՝ յառաժս զանազան կարգի , առ հասանել ՚ի սկզբունս հանրականս : « Ուստի , կըսէ , մարդկային հասկացողութեան աւելի կապար ու ծանրոցներ կապելու է , քան թէ թեւեր » . որ պէս զի զանիկայ բռնեն ու արգիլեն , որ շատ շոյտ չվերանայ առ բարձրագոյն սկըբունս :

§. Գ

ՅԱՂԱԳՍ ԴԱՍՍԻՈՐՈՒԹԵԱՆՑ

Երբ մարդկային հասկացողութեան զանազան հնարից գործադրութիւնն շուղով մի կըլլայ՝ ընդհանրապէս հարկ է որ հասարակ վախճանի մի յանգի . այս վախճ

Տես ՚ի Նոր Գործին . Ս . ճԳ :

ճանս է մտաց մեջ կարգով իմն շարեւ ըստ
շարարերոչքեանց ինչ՝ այն եակներն ոչ գործ-
ներն՝ որ մեր ծանօթոչքեանց ստարկայքն են ։
Իմաստասիրութեան սրատմութիւնն առա-
ջի առնէ մեզ զօրինակ իմն դասաւորու-
թեան իմաստասիրական գրութեանց ըստ
ժամանակի , ըստ տեղւոյ , ըստ արանց և
խնդրոց և շաւղաց ։ Այս հնարքս կը գործ-
ածուի աւելի զննողութեան գիտութեանց
մէջ և առանձինն բնական գիտութեանց
մէջ՝ որոնց շատ հարկաւոր է ։

Դասաւորութեան աշխատութիւնն հակ-
ըստմամբ կը սկսի ։ Երբ սեռերու և տե-
սակներու յօրինուածութեան ձեռք կը
զարնենք , ուրիշ բան չենք ըներ՝ բայց եթէ
դասերն դասերու ենթարկել , որով դա-
սաւորութիւն ըրած կըլլանք . և այս դա-
սաւորութեան աշխատութիւնս կրնանք
ընդարձակել , և հակըսակ շարադասոչքիւն
մի կազմել բովանդակ մարդկեղէն մտաց
ծանօթութեանց . ինչպէս որ ըրած է Ամ-
բէր իր վերջոչձական ըստարոչքիւն թեա-
կան դասաւորոչքեան ամենայն մարդկայիւն
ծանօթոչքեանց ըսուած գրուածքովն ։

Դասաւորութիւնն՝ զանազան աստիճանի
դասերն այնպիսի կարգի մի մէջ կը դնէ՝
որ այս դասերս մէկմէկէ կեղնեն , կամ
մէկմէկու մէջ կը մտնեն՝ ըստ հայեցուա-
ծոյ որով զանոնք կը նկատենք ։ Այլա դա-
սաւորութիւնն երկու բան կը բովանդակէ
քաժանոչն սեռի միոյ՝ ի տեսակս , և միառ-

քոչքիւն տեսակաց 'ի մի սեռ : Այս գործս կը
կատարուի էակաց սանդիսոց զանազան
աստիճաններուն վերայ . և ասկէց կը հե-
տեի որ մի և նոյն դասն կրնայ ըլլալ միան-
գամայն ըստ յարաբերութեան սեռ և տե-
սակ . սեռ՝ նկատմամբ ան դասուն որ իրմէ
կելլէ , և տեսակ՝ նկատմամբ դասուն ուր
որ ինքն մտանէ . այսպէս անասուն՝ նկատ-
մամբ գործարանաչոր մարմնոց՝ տեսակ է ,
իսկ նկատմամբ ստնտաբերաց , թռչնոց և
սողնոց , և այլն , սեռ է :

Կան զիտութիւնք որ շատ զանազան իրս
յառաջ բերելնուն՝ մինակ սեռ և տեսակ
բառերն շնն գործածուիր՝ այլ դասուց ան-
թիւ ստորաբաժանմանց զանազան անուն-
ներ կը տրուին . օրինակի համար՝ բնու-
թեան կամ համադոյից մէջ եղած բովան-
դակ էակներն բնասպատմոչքեան մէջ նախ
քանի մի գլխաւոր մասանց կը բաժնուին՝
որոնք կըսուին պետոչքիւնք , յետոյ իւրա-
քանչիւր պետութիւն կը բաժնուի աստի-
ճանաբար 'ի զանազան մասունս՝ որոնց
ընդարձակութիւնն հետզհետէ կամփո-
փուի . այսպէս անասնոց պետութեան
հետզհետէ բաժանմունքն այս անուններս
կառնուն , տիպք կամ ձիւղք , դասք , կարգք ,
ազգք , ցեղք , սեռք և տեսակք , որոց ամէն
մէկուն մէջ անհատներն իրարու կը նմա-
նին հանրական սեպհականութեամբք ի-
ւր՝ որ կնիք կըլլայ այն բաժանման առ որ
կը վերաբերին : Սովորաբար տեսակնե-

բուն մէջ ալ կորոշուին տոմար և զանազան
նորիւնք :

Ահաւասիկ դասաւորութեան օրինակ
մի ամէնէն ստորին աստիճանէն սկսեալ
ինչուան բարձրագոյնը . Այն գործարա-
նաւոր անհատներն որոնց բազմաթիւ զա-
նազանութիւններուն անուն կուտանք հո-
մոշի շոշն, գամիռ, բարակ և սկոշնդ ըսելով
անոնք յօրինեն զտեսակն շոշն ընտանի՝ որ
վերաբերի առ սեռն շոշն, որ է 'ի ցեղէ
մատնագնացից, յազգէ մասկերաց, 'ի կար-
գէ շաղղակերաց, 'ի դասէ առնաւարերաց, 'ի
ճիւղէ ողնաշորաց, որով շաղկապի ընդ
պետութեան անասնոց, որ 'ի միասին ընդ
բոշակիակ պետութեան և ընդ մետաղակիակ
պետութեան՝ նիւթ և առարկայ է բնա-
պատմութեան :

Դասաւորութեան շաշիղն երկուք է, արտևա-
տակիակ և բնակիակ : Արտևատակիակ դասաւո-
րութիւնն արտաքին և վեր 'ի վերոյ նմանու-
թեամբ սեռերն իրարու հետ կը շաղկապէ .
իսկ բնակիակ դասաւորութիւնն անոնց ներքին
և էական նմանութիւնն կը խնդրէ : Առ-
ջինն հիմն կառնու իրեն կարգ մի կերոց
ըստ կամի ընտրելոց . իսկ երկրորդն դա-
սաւորէ զիրս ըստ բովանդակութեան կերոց
որք սկսիակիակ են . որպէս զի լաւ ճանչցը-
նէ անոնց հանգիստութիւնքն և զտեղին որ
սահմանեալ է նոցա 'ի կարգի էակաց : Հի-
մակուան ժամանակս բնապատմութեան
մասանց մէջ տիրողն բնակիակն դասաւո-

րութիւնն է : Բռնաւարակոչքեան մէջ թուրնը
Փորի դրոշքիւնն՝ որով բոյսք միայն իրենց
ծաղկանց բաժակիև համեմատ դասաւո-
րած են՝ արոշեալասկան դասաշորոշքիւն է :
Իսկ թիւսիէօի շաշիղն՝ որ ամէն գլխաւոր
կնիքն կը դիտէ՝ բնական դասաշորոշքիւն է :

Արուեստական դասաւորութիւնքն առ-
ժամանակեայ դասաւորութիւններ սեպե-
լու է՝ որ նորանոր գիւտից կրնան առաջ-
նորդել . իսկ սրոշիչ դասաւորութիւնք մի-
նակ բնականներն են . բայց դասոնք ալ
պէտք է ընդհանրապէս շաշիղս և եթ հա-
մարել՝ որք նորանոր փորձառութեամբ
կրնան փոփոխիլ :

Յայտնի է որ եթէ դասաւորելու նիւ-
թերն այնպիսի իրեր են՝ որ ուսումնական
ճշդութիւն չեն պահանջեր , ամէն մարդ
աղատ է իր գործածութեանն համար ըստ
կամի դասաւորել զնոսին . օրինակի հա-
մար գրատան մի գրքերն դասաւորելու
համար , որուն մէջ ալ սակայն բնական
շաւիղ մի պէտք է ըլլայ :

Բնական դասաւորութեանց մէջ հարկ
է գլխաւորապէս դիտել՝ էականերն որոշող
կնքոց յարաբերական կարեւորութիւնն .
այս կարեւորութիւնս գլխաւորապէս կը
հաստատուի հանրականութեան և անփո-
փոխ հաստատութեան աստիճանին վե-
րայ . և այս է հպատակոշքիւն կերպց ըստւածն .
օրինակի աղագաւ՝ տեսակներն դասաւո-
րելու համար այնչափ մեծ կարեւորութիւն

տալու չէ անասնոց մորթին գունոցն՝ որ
չափ սննդեան գործարանաց յօրինուա-
ծոյն : Այս սկիզբս առաջ հաստատողն
Թիւսիէօն է , զոր յետոյ Քիւլիէ հանրա-
ցուց , և մարդկային ծանօթութեանց ա-
մէն ճիւղերուն կրնայ յարմարիլ :

Քիւլիէի յօրինած կենդանաբանական
դասաւորութեան շաւղին մէջ պետու-
թիւնն անասնական՝ բուսականէն կորոշուի
իւրեւարեր շարժմամբ և զգացողութեամբ ,
որ իսկական է անասնոց : Տիպք և ճիւղք
կորոշուին ըստ հանրական գծագրի գործա-
րանաւորութեան . դասք՝ ըստ գործարանաց
չրջանի տեսան և տոշրևաւորութեան շնչոյ՝ որ
կնքաւոր նշանն է կենաց անասնոյ . կարգք՝
ըստ գործարանաց կերակրողութեան և բռն-
նողութեան որ կենանքն պահելու հարկաւոր
են . աչք՝ ի ցեղից , և սեռք՝ ի տեսակաց
զանազանին ըստ գործարանական կնքոց՝
որոց կարեւորութիւնն երթալով կընուեալի՝

Բնական դասաւորութիւնք ոչ միայն
մեր ծանօթութեանց մէջ կարգ մի դնելու
կը ծառայեն , այլ և այս օգուտս ունին՝
որ միայն դասին յատուկ եղած բառն ը-
սելով էակին սեպհականութիւններն կը
հասկցնենք . օրինակի համար մեզ անծա-
նօթ կենդանի մի՛ այն ինչ սեռի մէջ դա-
սաւորած տեսնելով՝ միայն այս սեռին ա-
նունն բաւական է մեզ յայտնելու անմի-
ջապէս այն կենդանւոյն գործարանաւո-
րութեան գլխաւոր կնիքն :

§. Գ

ՅԱՂԱԳՍ ԵՆԹԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ

Իմաստասիրական ուսմանց խուզարկութեան նիւթ եղած է միշտ մարդու և բնութեան կամ համագոյից բացատրութիւնն . բայց այս բացատրութիւնս տալու համար հասուն քննութիւն պէտք էր և ստուգութեամբ ճանաչել զգործս և անոնց յարաբերութիւններն , և իրաց մանրամասունքն ու ամբողջութիւնն : Բայց շատ անգամ կարճամիտ մարդիկ առանց այս ամբողջական ծանօթութեան հասնելու՝ որ միայն կը գոհացնէ զբան մտաց , կաճապարէին հետեութիւններ հանել՝ մասնական և առերևոյր հակագիտութեանց վերայ հիմնուելով , փոխանակ առաջուց ճիշդ վերլուծութիւն մի ընելու , և ամբողջ գործոց դասու մի վերայ և ամենայն իրաց վերայ կը տարածէին այնպիսի օրէնք մի՝ որ անկատար զննողութիւններէ կամ 'ի պատկերողութենէ առաջ եկած էր : Նախկին ժամանակաց իմաստասիրական դպրոցներն շաշղի նկատմամբ ընդհանրապէս իրարու կը նմանէին՝ ասով որ թէ նիւթական և թէ աննիւթ երևութիւց վերայ քերի վերջո՞ւնքիւն մի կընէին , և կարծեօք կամ երասպատութեանց ձեռք անոր յառաջ բերածներն կը հանրացնէին :

Այսպէս թալէս միլետացի որ բնական
աշխարհիս վերայ աղէկ գիտութիւն ունէր,
մարմնոց յօրինուածոյն վերայ ջրոյ ազդե-
ցութիւնն տեսնելով՝ ընդարձակեց և հան-
րացոյց այս ծանօթութիւնս՝ զոր փորձ-
առութեամբ ստացեր էր . այնպէս որ են-
թադատութեամբ զջուրն կը համարէր ըս-
կիզբն էակաց և հանրական ներգործիչ
բնութեան : Իմաստասիրութեան պատ-
մութեան մէջ պիտի տեսնենք Անաքսագո-
րայ ևնականամատչելի, Գեմոկրիտեայ հիշե-
կելի, Եւքեդոկլեայ տարերաց մէջ դրած
սերն ու հեռը կամ ատկոչքիւնն, և այլն :
Ընդհանրապէս նախնեաց պակասութիւնն
էր աղիկամի ենթադրութիւններ ընել այն
խնդրոց վերայ զորս չէին կրնար լուծա-
նել, կամ մարդկային կարողութեանց սահ-
մանէն վեր էին :

Գալրոցական իմաստասիրութեան ալ
գլխաւոր գործն ուրիշ բան չէր բայց եթէ
հետեւութիւններ հանել յայն սկզբանց
զորս հիներէն փոխ առած էին : Արդ այս
չաւիղս զննողութեան վերայ հաստատեալ
գիտութեանց մէջ օգտակար ըլլալու հա-
մար՝ հարկ էր որ ընկալեալ սկզբունք
ստոյգ և ապահով ըլլային, և հանրական
օրէնքն ալ լաւ հաստատուած ըլլար : Բայց
այն ժամանակներն դեռ փորձառութիւնն
և ներածութիւնն այս օրէնքս հաստատած
չէին, և շատ անգամ ընկալեալ սկզբունքն
պարզ ևնրադատականք էին : Ապա զար-

մանք չէ որ դպրոցական դարն բուրրովին
ամուլ եղաւ այն գիտութեանց համար՝ որ
գործոց զննողութեան վերայ հաստա-
տուած են, օրինակի աղագաւ բնական
գիտութիւններն :

Իսկ վերջի ժամանակներս Պաքոն և Աար-
դեսիոս շատ կանոններ սահմանեցին՝ որ-
պէս զի սանձ զնեն մարդուս մտաց այն
միտմանն՝ որ առանց հասուն քննութեան
և առանց բաւական ապացուցի կուզէ
խնդիրն լուծանել կամ լուծուած սեպել :
Աարդեսիոս դպրոցներու մէջ ընդունելի
եղած գաղտնի գօրոչքեանց գոհ չըլլալով
տիեզերաց դրութիւնն բացատրելու հա-
մար՝ համարեցաւ թէ երկնային մարմինք
'ի մանրամասն իմն նիւթոյ ձգեալք շրջան
առնուն բուրրածե . իսկ արդ այս բացա-
տրութիւնս ալ ենթադատութիւն մի էր՝
թէպէտ քան զառջիններն իմաստուն . սա-
կայն յետագայ դարուն մէջ այս ալ իր
յարգն կորսնցուց : Եթէ հարկաւոր սե-
պէինք՝ նոյնպիսի օրինակներ գեռ կըր-
նայինք բերել : Գիտենք որ Նևտոն յեն-
թադատութեանց շատ կը զգուշանար,
ինչպէս որ կըսէ իր Մկզբոշկք ըսուած գրոց
մէջ . Ենթադատոչիշես ոչ հնարիմ, և իրա-
ւունք ալ ունէր . որովհետեւ ենթադատու-
թեանց ամէնէն մեծ անտեղութիւնն այս
է՝ որ զանոնք դրական ծանօթութեանց
տեղ զնելով՝ գիտութեանց ընթացքն ար-
գիլած կըլլաւք, և նորանոր խուզարկու-

Թիւններ ընել չեմք ուզեր նոյն նիւթոց վերայ՝ և կամ մոլորութեանց, կուտամք զկերպարանս ուսումնական ճշմարտութեան :

Ընդհանրապէս նկատեալ ենթադատութիւնն կրնայ սահմանուիլ սկիզբն ինչ ընկաշեալ առանց բաշակակն սարացոչցի՝ առ ՚ի բացատրել զգործս ինչ : Ամէն անգամ երբ փորձառական գիտութեանց մէջ դրուած սկիզբ մի զննեալ իրաց ճիշդ հետեանաց համեմատ չէ՝ ենթադատութիւն կըլլայ :

Բայց ենթադատութեան գործածութեան վերայ դրած անտեղութիւններէս չհետեիր թէ ուրեմն բացարձակապէս մերժելու է զանիկայ . վասն զի յայտնի է որ եկրատառոչքեանց գործածոչքիւնն գիտոչքեան մէջ կրնայ օրինաւոր և շատ օգտակար ըլլայ, բայց մասնաւոր պայմաններով որ ասոնք են .

Ա . Ենթադատութիւնն այն ատեն ընելու է՝ երբ հանգիտութեամբ և ներածութեամբ ստոյգ բովանդակութիւն կամ վախճան մի չենք կրնար ունենալ :

Բ . Ենթադատութեանց ծագումն ու պատճառն պիտի ըլլան գործք աներկբայ հաստատեալք զորս կուզեմք բացատրել . ապա թէ ոչ ուսումնական արժէք մի չեն ունենար :

Գ . Եթէ ենթադատութեանց հարկ ըլլայ գիմել՝ միշտ կարծիք սեպելու է զանոնք, որք օգտակար կրնան ըլլալ նորանոր գիւ-

տից առաջնորդելու կամ գործոց սրատ-
ճառն տալու : բայց ոչ երբէք նկատելու է
զանոնք որպէս դրական ճշմարտութիւնս ,
ինչուան որ այն կէտին շհասնինք՝ որով
ապահովապէս կրնանք կարծիք ըսածնիս
իրական ապացոյց սեպել :

Երկու տեսակք ենք աղատարիւնք կան .
մէկն է ամսամսակեայ կերպով ենք աղբի
զգոյարիւն գործոյ միոյ՝ որուն ձեռք կըր-
նանք բացատրել զերեւոյթս՝ որոց զսրատ-
ճառն շէինք դիտեր : Աս բանս շատ ան-
գամ հանճարոյ սուր նախատեսութիւնն
է՝ որ կանխէ քան զգործառութիւն , և
զոր յետոյ փորձառութիւնն կը ճշմարտէ :

Այսպէս Հիւսկէնս աստղաբաշխն Արե-
ւակ մոլորակին վերայ լուսոյ զարմանալի
փոփոխութիւններ դիտելով ենթադատու-
թիւն մի սրտակերեց թէ այս մոլորակին բո-
լորակքն՝ լուսաւոր մանեակ մի պէտք է
ըլլայ , որուն յիրաւի գոյութիւնն հաստա-
տեցին յետոյ աստղաբաշխական դիտու-
ղութիւններն : — Նեառն լուսոյ բեկբեկ-
ման քանի մի երեւոյթներէն կարծիք ըրեր
էր թէ ջրոյ մէջ պէտք էր որ վառելի տարր
մի գտնուիր , զոր յետոյ բնալուծից փոր-
ձերն ամենայն կերպով հաստատեցին :
— Գիտենք որ մեր օրերն ալ Նեպտուն
կամ Պիսիգոն մոլորակն Ար Վերիէի տը-
ւած ցուցմունքներովն գտնուեցաւ՝ որուն
կարծիքն ստոյգ ճշմարտութեան մի հաւա-
տար էր :

Անթագատութեանց երկրորդ տեսակն է զննեալ երևարից պատճառացն համար են քաղրեղ ներգործիչս ինչ՝ որոց իրական գոյութիւնն չենք կրնար ապացոյցանել : Այսպէս են՝ բնաբանութեան մէջ, այն հասանուաներն որոց կընծայեմք զերևոյթս ելերարութեան, մտղնիսութեան, և այլն. բնախօսութեան մէջ հասանուան ջղային, և ուրիշ գիտութեանց մէջ ուրիշ ներգործիչք նայնպէս ենթագատականք :

Այս ենթագատութիւններս շատ օգուտունին թէ հասկընալու և թէ սորվեցնելու համար այն օրէնքն՝ որոց հօգտակեն երևուոյթքն այնպիսի գորոց խնդիր է. բայց այսչափս միայն կրնանք հաստատել թէ այս գործերս կը կատարուին՝ իբրու թէ յիրաւի ունեցած ըլլային այս ինչ սեպհականութիւններ ունեցող ներգործիչներ, բայց ստուգապէս չենք գիտեր թէ արդեօք իրականապէս կան այս ներգործիչներս թէ չէ :

ՀԱՏՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՅՍ ՍԱՀՄԱՆԻ ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ , ԱՌԱՆԻՅ ,
ԱՊԱՅՈՒՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՑԱՆՈՒԹԵԱՆ , ՇԱՐԱԲԱ-
ՆՈՒԹԵԱՆ :

§ . Ա .

ՅԱՂԱԳՅՍ ՍԱՀՄԱՆԻ ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ

Պատգամաբանաց բովանդակութիւնն՝ որով
դիտութիւն մի յօրինի , շէնք կրնար ըմ-
բռնել և այլոց ալ հաղորդել՝ բայց եթէ
բարրաւով այսինքն լեզուին բառերովն ,
արդ եթէ մեր գաղափարներն յայանող
բառերը անորոշ , միմիւր և խառնակ խնամ
մի ունենան՝ անանցմէ առաջ եկած ծանօ-
թութիւններն ալ թերի կըլլան , և պատ-
ճառ համաձայնութեանց , սխալմանց և
միճարանութեանց : Ապա պէտք է այն
բառից խնաման ճշդել , կամ թէ ըսել սահ-
մանն տալ : Շատ անգամ առարկայն սահ-
մանեալ տարերաց բաղկացութիւն մի բո-
վանդակէ՝ դոր սահմանն չկրնար ըստ բա-
ւականին լուսարանել՝ ինքն ալ ըլլալով
հակիրճ տարազ կամ բացատրութիւն մի
ամբողջութեան . ուստի այս իրս բոլորու-
մին որոշ կերպով հասկցընելու համար , և
նայն ուսման մէջ կարգով մի յառաջ եր-
թալու համար՝ հարկ է սահմանին հետ
լծարդել գրածսնովն :

Ա. Մահման .

Ա՛ր է իցէ առարկայի մի սահմանն ըսելու
լով կիսմացութի օրոյ որոշումն իրիև որ յօրինե
զառարկայն : Մահմանին վախճանն է սառ
ճանաչել զիւր առարկայն , և որոշել զայն
յայտոյ որոյ հետ կրնայինք զանիկայ շփու
թել : Մահմանն ստորաբար կըլլայ՝ զառ
արկայն բովանդակ շարագասարար ցուցը
նոյ բառին տեղ՝ ուրիշ շատ բառեր դործ
ածելով՝ որոնք վերլուծարար կը յայտնեն
այն իրին յօրինիչ որակներն : Ահա այս
կերպով է որ եսանկեան մի գաղափարն
շատ մի հիմնական գաղափարներու կը
արուհենք՝ որոնք այս կերպով կրնան բա
ցատրուել . Մակերես աւարտեալ երկը սն
կեամբք , որ է եսանկեան սահմանն :

Մահմանն աղէկ ըլլալու համար քանի
մի պայմաններ ունենալու է՝ որոնք իր
բնութենէն առաջ կուգան .

Ա. Մահմանին վախճանն ըլլալով սառ
բմբանել զիրն սահմանեալ՝ հարկ է որ
յատակ ըլլայ . ուստի իմաստասիրութեան
համար արուած այս յետադայ սահման
ներս յատակ չեն սեպուիր . Պիտտերիև կա
րկայ շատ որում կարելի . Պիտտերիև բաց
արձակի և սնպայմանակակի :

Բ. Մահմանին մէջ աւելորդ բառ պիտի
չգտնուի , որովհետև աւելորդ բառք զուր
տեղ մտադրութիւնն կը դրաւեն , և յատա

կութիւնն ալ կը նուազեն . ապա սահմանն
պիտի ըլլայ հակիրձ : Ճշգրտական գիտու-
թեանց գրոց մէջ շատ սահմաններ կան՝
որ այս պայմանս կատարելապէս ունին :
Սահմանն այս պայմանաւ տարագի մի ձե-
կառնու և յիշողութեան մէջ գիւրաւ կը
տպաւորուի : Բայց զգուշանալու է նաև
չափազանց համառօտութենէ՝ որով մթին
կըլլայ սահմանն , ըստ ասելոյն Արատեայ .
Հակիրձ յիսկ հեարիս և մրիս յիսիս :

Գ . Սահմանին վախճանն ըլլալով իրին
բնութիւնն ցուցնել , հարկ է որ նոյն իրին
բովանդակութեանն յարմարի , ապա թէ
ուչ նոյն իրին միոյ մասին ևեթ սահմանն
կըլլար . ապա հարկ է որ սահմանն բո-
վանդակ սահմանեալ իրն յարմարի : Եթէ
սահմանն զսահմանեալ իրն յայլոց չորո-
շեր՝ բաւականապէս զանիկայ ճանչցուցած
չէր ըլլար , որովհետև այլոյ հետ կրնայինք
զանի շփոթել . ապա հարկ է որ սահմանն
միայն սահմանելոյն յարմարի : Անոր հա-
մար օրէնք է ըսել Բովանդակ և միայն աահ-
մանելոյն (toti et soli definito). որ ըսել է
թէ սահմանն անդրադարձ պիտի ըլլայ :
Ուստի սա յետագայ սահմաններս ճիշդ
չեն Մարդ՝ եակ իմև ե խոհոռև . Անասունն՝
մարմին ինչ ե գործարանաւոր : Առջինն կը
թերանայ Բովանդակ աահմանելոյն ըսածին
մէջ , որովհետև այն սահմանին մէջ մար-
մինն յիշուած չէ . իսկ երկրորդն կը թե-
րանայ Միայն աահմանելոյն ըսածին մէջ ,

որովհետև նոյն սահմանն բուսաց ալ կըր-
նայ տրուիլ : Բառս անդրադարձ ցուցանէ
թէ իրն սահմանեալ և սահմանն անդրա-
դարձաբար կրնան փոխադրուիլ մէկն մէ-
կային . ինչպէս այս օրինակիս մէջ Եռան-
կիշեն մակերևս իմն է աշարտեալ երեք ան-
կեամբք, և անդրադարձաբար Մակերևս
իմն աշարտեալ երեք անկեամբք եռանկիշեն է :

Դ . Բնութեան մէջ ամենայն առարկայք
այլոց էակաց հետ յարաբերութիւներ ու-
նին , և միանգամայն որիչ են յայլոց էից :
Սահմանին վախճանն ըլլալով տալ ճանա-
չել զիւր առարկայն որպէս և է , հարկ է
որ զանիկայ ծանուցանէ ըստ իւրոց յարա-
բերութեանց և զանազանութեանց : Իսկ
արդ եթէ այս առարկայս շատ հեռաւոր և
շատ ընդարձակ սեռի մի յարաբերուի , և
իրեն այնպիսի զանազանութիւն մի տրուի՝
որ բացարձակապէս միայն իրեն սեպհա-
կան չէ , այն ատեն սահմանն տարտամ
կըլլայ , և առարկայն ուրիշ առարկայէ
չզանազանիր : Անոր համար օրէնք դրուած
է որ սահմանն պիտի ըլլայ 'ի մերձաշոր
սեռէ և 'ի տեսակարար զանազանութիւնէ :
Ուստի մարդու ճիշդ սահմանն կըլլար ը-
սել եակ զգայուն . վասն զի եակ բառն սեռ
մի կը ցուցնէ որ ոչ մերձաւորի այնմ՝ որ
'ի մէջ էակաց զմարդն զանազանէ , նմա-
նապէս բառդ զգայուն որոշէ զմարդ յան-
շունչ էակաց և եթ : Բառդ կենդանի այլ ա-
ւելի կը մերձենայ մարդկային բնութեան

սեպհականութեանն , որով կըլլայ մերձաւոր սեռ . և յարեւելով առ այն զօրականութիւնն քանակակա՛ն կուենենամք զզանազանութիւն տեսակարար , որ զմարդ յամենայն էակաց կ'որոշէ . որով մարդուս ճիշդ սահմանն կըլլայ կենդանի քանակակա՛ն : — Դիտելու է որ երբ սահմանին մէջ կայ զանազանութիւնն տեսակարար , այն ատեն սահմանն ճիշդ կը սեպուի՝ թէպէտ և սեռն հետաւոր ըլլայ . սեռին մերձաւոր ըլլալը կատարելութիւն մի է , բայց սահմանին էական որակն չէ :

Սպա լաւ սահմանի մի համար չորս պայման հարկաւոր է , այսինքն պէտք է ըլլայ Ս . յատակ , Յ . հակիրձ , Ք . անդրադարձ , և Պ . ոչնող գսեռ մերձաւոր և զգանազանոչքիշև տեսակարար :

Դիւրաւ կը հասկըցուի ըսածէս որ սահմանի Ք և Պ կանոններն մեծաւ մասամբ իրարու մէջ կը մտնեն . և յիրաւի , վասն զի տեսակարար զանազանութեան պահանջելն նոյն է որ սահմանն միայն սահմանեղջոյն յարմարի . մերձաւոր սեռ պահանջելն ալ նոյն է որ սահմանն քովանդակ սահմանեղջոյն յարմարի : Սակայն կրնանք զչորրորդն նկատել որպէս հնարք մի գործածելու զերրորդն :

Լեզուի բառ մի սահմանած և իմաստն բացատրած ժամանակ՝ անոր գաղափարն բացատրած կըլլամք , և այն բառիւ նշանակեալ առարկայն կը ծանուցանեմք :

այնպէս որ սովորաբար բառի մի սահմանն իրի մի սահման է : Բայց որովհետեւ երբեմն ըստ կամի անուններ ալ կը տրուի իրաց , և այնպիսի բառեր կը գործածուի որոնց դաշնադրական և աղիկամի նշանակութիւն մի դրուած է , այն ատեն հարկաւոր է որ ծանուցանենք՝ չէ թէ ինչ որ այն բառն կը ցուցընէ հասարակ լեզուի մէջ, հապա ինչ որ կը հասկըցուի այն մասնաւոր դիպաց մէջ : Երբեմն ալ բառերն իրենց առջի նշանակութենէն այնչափ հեռացած են՝ որ մեծ զանազանութիւն կայ իրենց բնական նշանակութեան և գործական նշանակութեան մէջ . օրինակի համար յռսիւ բառն պայտի իմաստով : Երբեմն ալ իրենց բնական նշանակութեան բոլորովին հակառակն կը ցուցընեն . օրինակի համար՝ Եւմենիդք բառն (որ յունարէն բարեբարք կը նշանակէ) կը գործածուի դժոխոց կատաղիքն ցուցընելու համար : Բառի մի ստուգաբանութիւնն տալը՝ սովորաբար նոյն բառին ներքին զօրութիւնն որոշել ըսել է՝ որ է զանիկայ սահմանել :

Ս.յս զանազան պատճառացս համար՝ բանախօսք զսահմանն կը զանազանեն սահման բառի կամ ակոշակ , և սահման իրի :

Իրի սահմանն՝ ինչպէս որ առաջ մեկնեցինք , ծանուցանէ զառարկայն իւր հակիրճ տարազով . կամ բացատրութեամբ մի՛ իր իսկական մակդիրներովն և յօրի-

նիչ սկզբամբքն , և այս է թռնն սահմանն ըստ
սածր : Իսկ երբ առարկայի մի զանազան
սեպհականութեանց թուարկութիւնն մի ըն-
նելով կը ծանուցանեմք , այն ատեն կը-
սուի նկարագրութիւնն որ է սահման մի անոր
րոշ : Այսպէս , օրինակի համար , մարդուս
բնութիւնն հասկցընելու համար նկարա-
գրական թուարկութիւնն մի ընէինք իրեն
բնական և բարոյական սեպհականու-
թեանցը , այս նկարագրութիւնս՝ եթէ ամ-
բողջ ըլլայ՝ ուրիշ բան չըլլար բայց եթէ
ճառ մի անդամահատութեան մարմնոյն ,
և ճառ մի հոգեխօսութեան անոր հոգւոյն :

Բ . Բաժանուումն .

Ամենայն բաղկացու ծանօթութիւնն եթէ
անհատական և եթէ հանրական , մասնա-
կան գաղափարաց միաւորութենէն ձևա-
ցած ըլլալով՝ ամբողջի մի պէս կը ներ-
կայանայ մտաց՝ զոր հնար է բաժանել :
Ընդհանրապէս թաժանուումն կրնայ սահմա-
նուիլ անջատուումն անբողոքեան իրիք՝ ի մա-
տչես իշր :

Ամբողջն երկու տեսակ է . առջի տե-
սակ ամբողջն իրական առարկայ մի է ,
եակ մի անհատական , որ ունի յինքեան
մասունս բաժանելիս բնականապէս կամ
մտաւորապէս : Օրինակի համար , մարմին
մի կրնայ կտրատիլ կամ լուծանիլ , և մեր
միտքը կրնայ հասցընել զբաժանումն անդր

քան զամենափոքր մասնիկսն : Այս առջի տեսակ ամբողջն կրնայ նաև մարմին չըլլալ . այսպէս մեր անհատական եսն եթէ զննելու ըլլանք՝ թէպէտ և գոյացական պարզութիւն մի է , բայց մեզ կը ներկայանայ այնչափ բաժանմամբ՝ որչափ կարողութիւնս՝ որ 'ի նմա նկատեմք :

Երկրորդ տեսակ ամբողջն՝ որ միայն վերաբերի գիտութեանց , է դաս մի էակաց կամ գործոց և շարադասութիւն մի յղացմանց մտաց . ամբողջութիւն մի ձևացևայ մտօք , որ կրնայ անջատուիլ 'ի զանազան դասս և 'ի բաժանմունս :

Բաժանման և դասաւորութեան մէջ մեծ հանգիստութիւն կայ . զանազան դասք՝ բաժանմունք են , և բաժանմունք՝ դասք . օրինակի համար մարմինք դասաւորին կամ բաժանին յանգործարան մարմինս և 'ի գործարանաւորս , և այս վերջինքս յանասունս և 'ի բոյսս : Սակայն այս կրկին գործողութեան յղացումն նոյն չէ . մէկն նշանակէ զետեղել զիրս ըստ կարգի , և միւսն նկատել զիրս առանձինն : Բնական գիտութեանց մէջ գործոց զանազանութիւնն և բազմութիւնն՝ ամէնէն առաջ կը պահանջէ դասաւորութիւն ինչ կարգաւորեալ , որպէս զի շփոթութեան առաջքն առնուի . իսկ բանասիրութեան գիտութեանց շարադասական ըմբռնողութիւնն՝ կը պահանջէ մանաւանդ որ մասունքն որոշուին բաժանմամբ :

Սովորաբար բաժանման այս երեք կանոններս կը տրուին .

Ս . Սմբողջ մի իր մասանց բաժնուած է ըսելու համար՝ հարկ է որ բաժանումն բովանդակէ զամբողջութիւն իրաց գտելոց յամբողջին . այսինքն է որ բաժանումն ըլլայ թոյմանակ . և հետեւապէս բաժանման անդամոց գումարն հաւասարի ամբողջին՝ զոր բաժնեցինք . այս կը հասկըցուի երբ կըսեմք թէ լաւ բաժանում մի պէտք է ըլլայ հաշտարաչափ : Օրինակի համար , եթէ իմաստասիրութեան պատմութիւնն բաժնենք յիմաստասիրութիւն ևս յարդեաց , պակասաւոր կըլլայ բաժանումն , որովհետեւ միջին դարոշ իմաստասիրութիւնն չգտնուիր մէջը :

Բ . Իւրաքանչիւր մասունք ամբողջի՝ իրենց առանձինն էականութիւնն ունին , և իրարու հետ չեն շփոթիր . ապա լաւ բաժանում մի պիտի ըլլայ որոշ , այսինքն թէ բաժանման անդամներն իրարու մէջ պիտի չբովանդակին , այլ հակադարձաբար զիրար վանեն : Այս կանոնիս գէմ կըլլայ՝ եթէ թիւերն բաժնենք՝ ի զոյգ , յանգոյգ և ի քառակոշսի , վասն զի քառակուսին բովանդակի ի զոյգն և կամ յանդոյգ :

Գ . Կարգ և ճշդութիւն պահանջեն՝ որ բնութեան ցցուցած բաժանմանցն հետեւինք , որոնք անմիջնորդապէս իրենք իրենցմէ յանդիման մեզ կելլեն : Ուստի հարկ է որ բաժանումն սկսի ի գլխաւոր մասանց , և

գլխաւոր բաժանմունքն չըրած՝ երկրորդա-
կան բաժանմանց չանցնիլ, զգուշանալով
որ չըլլայ թէ բաժանման անդամներն
ստորաբաժանման անդամոց հետ խառ-
նուին. ապա լաւ բաժանում մի պէտք է
ըլլայ անմիջական: Օրինակի համար՝ հող-
ագնտիս լաւ բաժանում մի տալու համար՝
թագաւորութեանց և աշխարհաց անուն-
ներէն սկսիլ չըլլար, կամ այս երկրորդ
կարգի մասերն գլխաւոր մասանց հետ
խառնել. այլ հարկ է նախ անուանել հող-
ագնտոյս հինգ մասերն, յետոյ ստորա-
բաժանումներն դասաւորել իրենց կարե-
ւորութեան աստիճանին համեմատ:

Ըսածներէս կը հետեւի որ լաւ բաժա-
նում մի պէտք է ըլլայ Ս. հաշտարաչափ,
Բ. որոշ, և Գ. անմիջական:

Ինչ որ վերլուծութեան համար ըսինք,
նոյնն կը յիշեցնենք նաև բաժանման հա-
մար, այսինքն թէ զգուշանալու է ՚ի կարի
յոյժ և ՚ի կարի սակաւ բաժանմանց. ուղիղ
միտքն ու կիրթ ճաշակ աս բանիս չափն
կը սորվեցնեն:

§. Բ

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՄԻՑ

Ամենայն գիտութիւն հաստատեալ ՚ի
վերայ բանավարութեան՝ ՚ի հարկէ ունի
սկզբունս ինչ և ճշմարտութիւնս անկարօտ

ասպացուցի, ասպա թէ ոչ հարկ կըլլար ան-
վախճանապէս 'ի վեր ելանել առ ծագումն
նոցին առ 'ի հաստատել զգիտութիւնն
զայն : Այս տեսակ ընկալեալ սկզբունք
կըսուին առածք, զորս մարթ է այսպէս
սահմանել . Գատողութիւնք բանաշարակակ
անմիջապէս բացայայտք՝ ծանոցեալք սրպէս
սկզբունք 'ի գիտողութիւնս :

Ինքն իրեն կիմացուի որ առածք նախ-
կին ճշմարտութիւնք են, այլ ամենայն
նախկին ճշմարտութիւնք առածք չեն .
քանզի 'ի միտս մարդոյ գոն նախկին ծա-
նօթութիւնք՝ որ բանի յղացմունք չեն,
այլ ճշմարտութիւնք փորձառութեան . որ-
պէս այսօրիկ՝ Նս գում, գոն մարմինք . կան
ուրիշներ ալ՝ որոնց տարազն չենք կրնար
տալ որպէս զսկզբունս գիտութեանց :

Ար զանազանին առածք բնագանցակակ,
որպէս յետագայքս . Չիք որակ առանց են-
թակայի, — ամենայն երևոյթ ունի զիւր
պատճառ, — անհնարին է թէ ինչ մի լինիցի
և չլինիցի 'ի նմին ժամանակի, — որ ինչ
է՝ ունի զիւր բաւական պատճառ գոլոյ, —
չէ մարթ լինել արգասեաց՝ առանց համե-
մատ պատճառի, և այլն :

Ամենուն ծանօթ են առածք չափարկա-
կակ, ամենայն երկրաչափական դասա-
գիրք սովորաբար այս հասարակ ծանօրոշ-
քիչեկերես կամ առածներէս կը սկսին, ըստ
նմանութեան Եւկլիդեսի : Ասանկ են յե-
տագայ սկզբունքս . Երկու քանակք հա-

ւասարք երրորդի՝ հաւասար են իրերաց ,
— ամբողջն մեծ է քան զմասն իւր , — 'ի
միոյ կիտէ առ այլ կէտ՝ մի ևեթ ուղիղ
գիծ ձգի , — ամենայն ուղղանկիւնք հա-
ւասարք են իրերաց , — երկու ուղիղ գիծք
ոչ պարփակեն զմիջոց :

Կան ևս առածք բանախօսականք , սակայն
ասոնցմէ շատերն բնադանցական առածից
յարմարադրութիւնք կամ պարապմունքն
են . օրինակ իմն . Առաջարկութիւն մի չը-
կարէ լինել ճշմարիտ և սուտ միանգա-
մայն , — չէ հնար հաստատել և հերքել
ինչ մի զմիոյ առարկայէ մի և նոյն յարա-
բերութեամբ , — երկու գաղափարք որք
յարմարին ընդ երրորդի՝ յարմարին և ընդ
իրեարս , — եթէ յերկուց գաղափարաց
մին յարմարի ընդ երրորդի և միւսն ոչ ,
և ոչ ընդ իրեարս յարմարին :

Գոն գարծեալ և առածք բարոյականք .
օրինակի աղագաւ՝ Չէ պարտ առնել այլոց
զայն ինչ՝ զոր չկամիմք թէ այլք արասցեն
մեզ , — հարկ է գործել զբարիս և խորշիլ
'ի չարէ , — ոչ որ պատասխանատու կամ
պարտաւոր է վասն այնորիկ՝ զոր անհնար
էր նմին արգելուլ :

Չնկողորքեան գիտութիւնք ևս որպէս
բնաբանութիւնն՝ ունի զիւր բանաւորա-
կան դատողութիւնս բացայայտս ըստ ին-
քեան . որպէս ամենայն մարմին կալեալ
ունի զմիջոց ինչ :

Առածք նախկին սկզբանց մէջ բովան-

դակելնուն՝ ասոնց վերայ զրուցածնիս՝ ա-
նոնց ալ կը յարմարի . տես ինչ որ ըսինք
Հոգեխօսութեան մէջ յաղագս նախնական
ծանօրոշքեանց և զմարտօրեանց հաստուա-
ծին մէջ :

Յետագայ կանոնէս դիւրաւ կը ճանչ-
ցուին այն առաջարկութիւնք՝ որք հարկա-
ւոր պայմաններն չունենալնուն համար՝
չեն կրնան . տռածից կարգն անցնիլ . ը-
սած կանոննիս այս է .

Երբ առաջարկութեան մի ենթակային
և մակդրրին գաղափարաց քննութիւնն
միայն բաւական չըլլար տեսնելու պայծա-
ռապէս թէ մակդիրն ենթակային կը յար-
մարի թէ չէ , օրինակի համար թէ հարկ է
քորորիս մեծ շինել քան զմասն իշր , այն ա-
տեն առաջարկութիւնն առածի տեղ ըն-
դունիլ չըլլար , այլ հարկ է ապացուցանել
զանիկայ ուրիշ գաղափարներով՝ որոնք
կարենան ցուցընել մակդրրին ենթակային
հետ ունեցած կապակցութիւնն . այսպէս
օրինակի համար զոչգահեռի գծից գաղա-
փարն ձեռք կառնունք ցուցընելու համար
թէ երեք անկիւնք նշանակեան՝ հաշարարք եւ
երկուց ուղղոց ¹ :

1 . Տես 'ի Տրամաբանութեան Փու-Ռուայլի ,
մասն Դ , գլ . 2 :

§. Գ

ՅԱՂԱԳՍ ԱՊԱՅՈՒՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՏԱԾՈՒԹԵԱՆ

Բանավարտչեան գիտոչքեանց՝ և մանաւանդ անոնց որ ձշդակեան գիտոչքիւնք կըսուին, սովորական կերպն է՝ առաջարկութեանց շարք մի դնել՝ որոնք մէկմէկէ կելնեն, և անոնցմով ապացոչոչքիւն մի յառաջ բերել:

Ապացոչոչքիւն կարգաւորեալ գործողոչքիւն մի է՝ որոչն վախճանն է մէկ կամ շատ միջանկեալ առաջարկոչքիւններոչ ձեւոք ցոչցրնել՝ թէ անատոչգ և վեճի տակ ընկած առաջարկոչքիւն մի կը բովանդակի ոչրիչ առաջարկոչքեան մի մեջ որ ատոչգ է և անդիմատրելի, և անով ինքն ալ պէտք է այնպէս համարուի:

Ապացոչութեան սկիզբն հարկաւորապէս կամ նախկին ճշմարտութիւն մի է անկարօտ ապացոչցի, առած մի, կամ ճշմարտութիւն մի արդէն ապացոչցեալ:

Ապացոչոչքեան սովորական եղանակին և իր ամբողջ կերպին մէջ նկատեալ արտածութեան եղանակին մէջ մեծ հանգիստութիւն կայ, որովհետեւ այս վերջինիս՝ այսինքն արտածութեան մէջ ալ սկզբան և բովանդակութեան մէջ տեղը միջանկեալ առաջարկութիւն մի կայ, որպէս և ՚ի շարաբանութեան. բայց այս երկու եղանա-

կայցս մէջ այս զանազանութիւնս կայ՝ որ
արտածութիւնն է սլարզապէս գործ հասնե-
լոյ հետևորդիւնս յոր և է սկզբանց ¹, ուր ա-
պացուցութեան մէջ, ինչպէս որ ըսինք, հե-
տևութիւններն պէտք է որ հանուին ՚ի
ստոյգ և բացայայտ սկզբանց : Արտածու-
թիւնն այն ատեն ապացուցութեան ուժ
կունենայ՝ երբ սկզբունքն ստոյգ և բա-
ցայայտ են :

Ահաւասիկ սպացոռցական արտածորիւն
մի՛ զոր կառնունք յուսողականութենէ ,
որ ապացուցեալ առաջարկութեան մի
չարմարագրութիւնն կամ սլարապուճն է .
Յամենայն եռանկեան՝ գոռմար երից անկեանց
հաշտար է երկոռց ոռդոց . սպա յերիս ան-
կիւնս եռանկեան միոյ՝ միև յանկեանց և եր-
կարէ յիևեյ ոռդիդ : Արուն մէջ լուելեայն
գրուած միջին առաջարկութիւնն պիտի
ըլլար այս կամ ստոր համագոր բան մի .
Եթէ յերից անկեանց երկունքն ուղիղ են-
թագրէինք՝ երրորդ անկեան հետ միատեղ՝
երկու ուղիղ անկիւններէ աւելի պիտի ըլ-
լար անոնց գումարը (հակառակ ապացու-
ցեալ առաջարկութեան) . ուրեմն , և այլն :

Ի բարոյական կարգէ առնուած օրինակ
մի տալու համար՝ ենթագրենք այս սկիզբն .
Ամենայն չար՝ է խորշելի . բառիւս չար՝ կի-
մացուի անիրաւութիւն , հպարտութիւն ,

1. Տես ՚ի Հողեխօսութեան Բանասորութիւնն ար-
տածութեան հատուածն :

Նախանձ, ստութիւն, և այլն. արտածութիւնն հետզհետէ այս զանազան տարերքս կը հանէ և կըսէ՝ Անիրատարիւնն է խորշելի, հարատարիւնն է խորշելի, և այլն. որոնք կըլլան դատողութիւնք արտածեալք։ Այս արտածութեանց շարաքանական կերպարանք տալով՝ զանազան շարաքանութիւններ կուեննամք որպէս զհետեւեալս .

Որ ինչ չար է՝ խորշելի է .

Իսկ արդ անիրաւութիւնն է չար ինչ .

Ապա անիրաւութիւնն խորշելի է .

Շատ անգամ մէկ բանավարութիւն մի բաւական չէ վիճարանութեան տակ եղած առաջարկութեան մի՛ իբր սկիզբ դրուած առաջարկութեան մի հետ ունեցած կապակցութիւնն պայծառ ցուցընելու . այն ատեն հարկ կըլլայ ուրիշ միջանկեալ առաջարկութեանց դիմել՝ որ բանավարութեանց շարք մի կը ձևացնեն .

Ճշմարտութեան ապացոյցոցըրեան գլխաւոր շաւիղն շարադաստարիւնն է, ինչպէս որ նախընթաց գլխուն մէջ բացատրեցինք։ Շարադասական կարգով դրուած առաջարկութեանց շարքին մէջ՝ վայրիջական ընթացք մի կը բռնուի, այսինքն՝ ի հանրական առաջարկութեանց կիջնանք այնպիսի առաջարկութեանց՝ որոց հանրութիւնն երթալով կը նուաղի, ինչուան որ հասնինք անպայուցութեան որոշեալ եզրին կամ այն առաջարկութեան զոր կուզէինք հաստատել։

Ապացուցութիւնն կրնայ ըլլալ նաև վերջական ընթացքով մի որ է վերջոճոճքեան ընթացքն : Ուստի խնդիր կը դրուի նախ առաջարկութիւնն զոր կուզենք ապացուցանել, յետոյ վերջոճական կարգիև հետեւելով կը բարձրանանք յառաջարկութիւնս մի քան զմի հանրականս որք իրարու մէջ կը բովանդակին, ինչուան որ հասնինք ՚ի սկիզբն ինչ բացայայտ և անհակառակելի, որ բովանդակէ յինքեան զայլ առաջարկութիւնս ստորինս :

Աս ընթացքն բռնելու է՝ երբ առջի բերան անհակառակելի սկիզբ մի չունինք ձեռքերնիս . և երբ զանիկայ կը գտնենք շարադասական կարգով ևոյև սատիճաններէ վար կիջնեմք՝ ընդ որս վեր ելած էինք վերջոճոճքեան կարգով :

Կրնամք ըսել որ ընդհանրապէս վերջոճական կըլլայ ընթացքն երբ այնպիսի ձշմարտոճքեան մի կը հասնիմք որ աշելի հանրական է՝ քան ինչ որ ոչնէինք ՚ի սկիզբն գործողոճքեան . և շարադասական հակառակ դիպաց մէջ :

Ենթադրեմ թէ վերջոճական ևդանակառ ապացուցութեան սկիզբ մի կուզենք գրտնել այս առաջարկութեանս համար . Հոգի մարդոյ անեխը կամ ոգեղէն է, մարդկային հոգւոյ բնութիւնն տրօհելով, որպէս զի անոր մէջ գտնենք այնպիսի կարողութիւն մի որ բացայայտ կցորդութիւն ունենայ սգեղէն էակի որակին հետ : Իբրև ծա-

գումնս կը սկսինք յանհակառակելի գործոյ մի, օրինակի համար ըսելով Հոգի մարդոյ դատի: Ասկէց կը հետեի որ Հոգի մարդոյ ոգեղէն է. առաջարկութիւնն այն ատենն ճշմարիտ կըլլայ՝ երբ ճշմարիտ է այս յետագայ առաջարկութիւնս ալ թէ Էակն դատող ոգեղէն է. որ այս ալ դարձեալ ուրիշ առաջարկութիւն մի կենթադրէ, այսինքն թէ՛ Էակն բաղդատող ոգեղէն է, որովհետեւ շատ անգամ դատողութիւնն բաղդատութեան վերայ հիմնեալ է: Արդ բաղդատելն ենթադրէ երկու գաղափարս ներկայս ՚ի նմին ժամանակի, կամ թէ ըսենք երկու կերպաւորութիւնս մի և նոյն սեռի՝ որոց երկուքն ալ կազդեն կամ կրաւորեն ՚ի նմին ժամանակի զմի և նոյն ենթակայն ամբողջապէս. այնպէս որ եթէ էակն որ դատի և բաղդատէ՝ ոգեղէն է, հարկ է ըսել ևս թէ Էակն որ միասնաբար ունի երկուս գաղափարս՝ հոգեղէն է. Էակն որ ՚ի նմին ժամանակի ունի բազում կերպաւորութիւնս մի և նոյն սեռի՝ ոգեղէն է:

Այս վերջի առաջարկութեանս վերայ կանկ կառնուք որ անհակառակելի է, որովհետեւ ամէն նիւթական գործք՝ որ մեր աչքին առջևն են՝ հաստատապէս կը ցուցընեն՝ որ մի և նոյն նիւթն ՚ի նմին ժամանակի՝ մի և նոյն սեռի մէկ կերպաւորութիւն մի միայն կրնայ ունենալ, մէկ գոյն մի, մէկ ձև մի, մէկ տարած մի, և այլն. ուսկից կը հետեցնենք թէ հոգի մարդկային չկրնար նիւթ ըլլալ, և հետեւապէս ոգեղէն է:

Իսկ շարադասական և զանազան յետադայ
կերպովս կը սկսինք՝ նախ այս անհատա-
տակելի առաջարկութիւնս գնելով. Իսկն
որ 'ի ևս ին ժամանակի բազում և նշանաւոր
կերպաւորութիւնս ունի, յորոց իշխանաւորութիւն
ագղեն կամ կրաւորեն զնոյն միասնաբար՝ Է
Էակ աննիշխան կամ Էակ ոգեղէն. իսկ արդ-
այսպէս է մարդկային հոգին, որովհետեւ
կարեւոր թագում գաղափարս միանգամայն,
քանզի կարեւոր թաղարարութիւնս, և դա-
տարարութիւնս բաղարարականս, ապա մարդ-
կային հոգին ոգեղէն է: Ինչուան հիմա ը-
տաճնիս ուղղակի ապացուցութիւններ էին:

Տեսակ մի անուշդակի ապացուցութիւն
ալ կայ՝ որ կը սուր անկարելիառ սպացոցոց
թիւն կամ յանգումն յանտեղի՝ որ կը լլայ հաս-
տատութեան մի ճշմարտութիւնն ցուցը-
նելու համար՝ հակառակ հաստատութեան
անտեղութիւնն կամ արդարութիւնն ցու-
ցընելով. որուն օրինակներն երկրաչա-
փական դասադրոց մէջ կը գտնուի:

Ճշմարիտ ապացուցութիւն մի կը պա-
հանջէ՝ որ նիշքն ըլլայ ստոյգ և անտարա-
կոյս, և պատճառաբանութեան ձևոյն մէջ
թերութիւն չըլլայ: Այս երկու վախճա-
նիս՝ յետադայ կրկին կանոններով կը հաս-
նինք.

Ս. Մթին առաջարկութիւններն պարզել՝

1. Տրամաբանութիւն Փոս-Ռուայլի, մասն
Գ. ԳԼ. Գ. և Ը:

զանոնք ցուցընելու համար ընդունելի
սահմաններ և սկզբունք գործածելով կամ
արդէն ապացուցեալ առաջարկութիւններ
բանեցնելով :

Բ. Բառից համաձայնութենէն զգուշա-
նալ և բանավարութեան օրէնքն ճիշդ
պահել :

Արտածութեան և հետեւապէս սպացու-
ցութեան բնիկ և ամբողջ կերպարանքն՝ շա-
րաքանութիւնն է՝ որուն վերայ պիտի լսո-
սինք յետագայ յօդուածիս մէջ :

§. Դ.

ՅԱՂԱԳՍ ՇԱՐՄԱՆՈՒԹԵԱՆ

Մարդկային միտք բազմատէ , դատէ ,
բանավարէ 'ի գործ ածելով զշաւիղ առ
'ի հասանել 'ի ճշմարտութիւն : Բանավա-
րութիւնն՝ մարդկային մտաց սովորական
գործածութիւնն է , որ կանոնաւոր կերպա-
րանք կառնու , և կը զանազանի 'ի ներա-
ծական և յարտածական : Այս արտածա-
կան բանավարութեանց կերպարանաց մէջ
մէկ մի կայ որ ամէնէն գերազանցն է , և
առ որ կրնան վերածուիլ միւս ամենքն ,
ըսել կուզեմ շարաքանութիւնն , որուն մաս-
նաւոր մտադրութիւն ընելու է , և երկար-
օրէն բացատրելու է , որովհետեւ զանա-
զան դարեր մեծ կարեւորութիւն արուած
է ասոր , և յիրաւի իր արժէքն ու զօրու-

բութիւնն ալ շատ մեծ է : Եւ որովհետեւ շարաքանութիւնն յառաջարկութեանց կը ձեանայ , ապա հարկ է նախ համառօտիւ բացատրել առաջարկուողքեան բնութիւնն ու սեպհականութիւններն , որպէս զի շարաքանութիւնն ալ դիւրաւ հասկըցուի : Անկէց ետեւ պիտի քննենք շարաքանուողքեան բնութիւնն , կանոններն և տեսակներն . ետքը բանավարութեան ուրիշ ձևերն՝ որ ամենքն ալ շարաքանութեան կրնան վերածուիլ : Ասոնք ամենքն կարգելէն ետեւ յաւելուած միւլ պիտի դնենք շարաքանութեան 'ի բարին և 'ի շարն գործածութեան վերայ :

Ա. Առաջարկուողքիչն .

Առաջարկուողքիչն է բանիչ արտայայտուողքիչն դատողողքեան իրիք , այսինքն հաստատութիւն կամ մերժումն յարմարութեան՝ զոր յղանան միտք 'ի մէջ ենթակայի և մակդրրին տուելոյ նմա : Երեք մասունք կամ եզերք կունենայ առաջարկութիւնն . ներակայ , մակդիր և զօղ կամ բայ : Օրինակիս մէջ

Հոգին անմահ է ,

հոգին է ենթակայ , անմահ՝ մակդիր , է զօղ կամ բայ : Ենթակայն միշտ նուազ ընդարձակութիւն ունի քան զմակդիրն . երբ կըսեմ Մարդն է մահկանացուն . ենթակայն

մարդն՝ որ տեսակ մի կը ցուցընէ՝ նուազ
ընդարձակ է քան զմակդիրն մահկանացուն՝
որ աւելի շատ էակաց կը վերաբերին : Ա-
սոր համար ենթակայն փոքր եզր կը սուրի ,
և մակդիրն մեծ եզր :

Առաջարկութիւնք զանազան տեսակք են ,
և զանազան սեպհակակնոչքիչևս ունին : Ա-
ռաջարկութեանց տեսակներն բացատրելը
քերականութեան կը վերաբերի , հոս գըլ-
խաւոր զանազանութիւններն յիշելը բա-
ւական է : Առաջարկութեանց ենթակայն
և մակդիրն պարզ կամ բաղադրեալ , սեպհա-
կացոռ կամ բաղկացոռ կըլլան : Երբ առաջ-
արկութեան մի հետ ուրիշ առաջարկու-
թիւն մի ալ կը դրուի՝ որ անկէց կախում
ունի և անոր նշանակութիւնն կը յայտնէ՝
առջինն գոյնաւոր կըսուի , երկրորդն միջան-
կեալ՝ որ երբեմն որոշիչ կըլլայ երբեմն բա-
ցատրիչ : Խօսքի մի մէջ շատ միջանկեալ
առաջարկութիւնք կրնան ըլլալ , շատ ալ
գլխաւորք՝ որոնց մէկն է բացարձակ , և
միւսերն վերբերականք :

Սեպհակակնոչքիչևս առաջարկոչքեանց .

Առաջարկութեանց սեպհականութիւնքն
կրկին են . սեպհակակնոչքիչևս քացարձակք
և սեպհակակնոչքիչևս վերբերականք : Բացար-
ձակք անոնք են՝ որ կը տրուին առաջար-
կութեանց նկատելոց առանձինն և ան-
շատ . իսկ վերբերականք՝ որ կը տրուին ա-

առջարկութեանց իրարու հետ յարաբե-
րութիւն ունեցած ատեննին: Առաջարկու-
թեանց բացարձակ սեպհականութիւնքն
են իրենց քանակն ու որակն, իսկ վերքե-
րականքն են փոխադարձութիւնն և հակա-
դրութիւնն:

Բացարձակ սեպհականութիւնք
առաջարկութեանց.

Ս. Քանակ առաջարկութեանց. Առա-
ջարկութեան մի քանակն իր ենթակային ըն-
դարձակութիւնն է: Նկատմամբ քանակի՝ ե-
րբ տեսակ առաջարկութիւնք կըլլան. ա-
ռաջարկութիւն հանրական, առաջարկու-
թիւն մասնական, առաջարկութիւն անհա-
տական:

Հանրական առաջարկութիւնն այն է՝ ո-
րուն ենթակայն բոլոր իր ընդարձակու-
թեամբն կառնուի. օրինակի համար

Ամենայն մարմին բաժանելի է:

Երբ ենթակայն բոլոր իր ընդարձակու-
թեամբն կառնուի՝ առանց բացառութեան,
առաջարկութիւնն ընդհանրապէս հանրա-
կան կըսուի, որպէս՝ ինասխընթաց օրինա-
կիդ: Երբ ենթակայն իր ընդարձակու-
թեան մեծագոյն մասամբն կառնուի՝ հան-
րականի կը մօտենայ, և որպէս իրակա-
նապէս հանրական կը համարուի. բայց

բարոյապէս հանրական կըսուի . օրինակի
համար

Ամենայն երկասարգք փոփոխամիտք են :

Մասնական առաջարկութիւնն այն է՝ որ
րուն ենթակայն ըստ միոյ մասին իւր ըն-
դարձակութեանն կառնուի . օրինակ

Ոմանք 'ի մարդկանէ գիտունք են :

Անհատական առաջարկութիւնն որ կզա-
կան ալ կըսուի այն է՝ որուն ենթակայն
մէկ անհատ մի կը սուցընէ . զոր օրինակ

Համբրոնացին մեծ ճարտասան է : —

Սովորութիւն եղած է անհատական ա-
ռաջարկութիւններ հանրականաց հետ դա-
սել՝ յիրս որք հային 'ի կանոնս շարաքանոշ-
րեան . պատճառն որ անհատական ենթա-
կայն բոլոր իր ընդարձակութեամբն կառ-
նուի և ամբողջութիւն մի կը ներկայացնէ :

Երբեմն առաջարկութեան մի ենթա-
կայն տարտամ և անորոշ կերպով մի կը
դրուի՝ հանրականութեան կամ մասնա-
կանութեան նշան մի չունենալով . ինչպէս
այս խօսքիս մէջ .

Արք և կանայք , ծերք և մանկաի խուսէին յե-
րեսաց բարկութեան յաղթականին :

Այս առաջարկութիւնք թէպէտ և ձևերնին
անորոշ է՝ սակայն ըստ ինքեան կամ հան-
րական են կամ մասնական , ըստ որում

իրենց ենթակայն կամ ամբողջ ընդարձակութեամբն կառնուի, կամ ընդարձակութեան մէկ մասով մի առաւել կամ նուազ մեծութեամբ: Այս տեսակ առաջարկութեանց քանակն՝ իրենց իմաստէն կորուչուի:

Բ. Արակ առաջարկութեանց. Առաջարկութեան մի որակն է իշր հաստատոչիւնն կամ մերժոչն, իր ճշմարտոչիւնն կամ ստոչիւնն:

1.º Հաստատոչիւն և մերժոչն. Առաջարկութիւն մի հաստատական կամ մերժական կըսուի՝ ըստ որում ենթակային մակդիրն կը հաստատուի կամ կը մերժուի: Աերը տեսանք որ առաջարկութեան մի քանակն իր ենթակային ընդարձակութենէն կառնուի. սակայն առաջարկութեան մակդիրն ալ ունի իր ընդարձակութիւնն կամ իր յատուկ քանակն, զոր աղէկ միտք առնլու է: Առաջարկութեանց մակդիրին ընդարձակոչիւնն ձևոյն հաստատական կամ մերժական ըլլալէն կը դատուի:

Հաստատական առաջարկութեան մի մակդիրն՝ սովորաբար իր ընդարձակութեան մասամբն կառնուի. այսինքն հաստատական առաջարկութեան մի մակդիրն՝ սովորաբար մասնաշոր եզր մի է. օրինակիս մէջ

Ոսկին է մետաղ ինչ՝

բացայայտ է թէ ըսել կուզենք որ ոսկին
մասնաշոր տեսակ մի է մետաղի 'ի մէջ մե-
տաղաց , և ոչ թէ ոսկին է ամենայն մե-
տաղ , կամ ամենայն մետաղ ոսկի է : —
Սակայն 'ի դէպս ինչ հաստատական ա-
ռաջարկութեան մի մակդիրն իր ամենայն
ընդարձակութեամբն սխաի առնուի . և
այս՝ երբ ենթակայն և մակդիրն 'ի բնէ հա-
ւասարազօր նշանակութիւն մի ունին , և
հետեապէս իրենց ամենայն ընդարձակու-
թեամբն իրարու կը յարմարին . ինչպէս
սահմաններու մէջ . այսպէս երբ կըսուի թէ

Եռանկիւնն է մակերես ինչ աւարտեալ երեք
անկեամբք՝

մակդիրն մակերես ինչ նշանակէ սահմանայն
մակերես , և այլն :

Մերժական առաջարկութեան մի մակ-
դիրն՝ միշտ իր ամբողջ ընդարձակու-
թեամբն կառնուի . այսինքն մերժական
առաջարկութեան մի մակդիրն՝ միշտ հան-
րական եզր մի է . օրինակի համար երբ
կըսուի թէ

Ածուխն չէ մետաղ ինչ՝

կը հասկցուի թէ մետաղի մեկ տեսակեւ
ալ չէ :

2.^o Ճշմարտութիւն և ստորիւն . Ճշմարտ
առաջարկութիւնն այն է՝ որ զիւր առար-
կայն այնպէս կը ցուցնէ՝ որպէս և է . օրի-
նակի համար

Ատուած բարի է, Ատուած չէ անիրաւ: —

Իսկ տառ առաջարկութիւնն այն է՝ որ
զիւր առարկայն այնպէս կը ցուցընէ՝ որ
պէս չէ. օրինակի համար

Ատուած է էակ անկատար:

Առաջարկութիւնք կրնան նկատուիլ քե-
րականապէս և բանաստեայէս: Առաջար-
կութիւնն քերականական կըսուի, երբ նը-
կատեմք ՚ի նմա զբառս և զօրէնս որ ուղ-
ղեն զնոսին. Իսկ բանաստեայէս կըսուի,
երբ նկատեմք զնոսա որպէս ունող որոշ
ինչ իմաստից: — Յայտնի է որ ամենայն
բանաստեայէս առաջարկոչիւն է միշտ կամ
ձգմարիտ և կամ տառ, ըստ որում յայտնէ
դառարկայն իւր որ ինչ է իրապէս և կամ
այլապէս քան որ ինչ է. առջի դիպաց մէջ
ճշմարիտ է, և յերկրորդին սուտ:

Վերքերական սեպհականոչիւնք
առաջարկոչեանց .

Ա. Փոխադարձոչիւն առաջարկոչեանց. —
Առաջարկութեանց փոխադարձութիւնն
այն է՝ որ մակդիրն ենթակային՝ և ենթա-
կայն մակդրրին տեղն կը դրուի: Փոխա-
դարձութեան հիմնական օրէնքն այն է որ՝
փոխադարձեալ առաջարկութիւնն նոյն ի-
մաստն ունենայ՝ փոխադարձելի առաջար-
կութեան հետ: Այս օրէնքս պահուելու

համար որակն պէտք է նոյն մնայ, բայց
քանակն կրնայ և երբեմն պէտք կըլլայ
փոխել:

Երբ քանակն նոյն կը մնայ՝ փոխադար-
ձութիւնն սարգ կըսուի, օրինակ

Առաջարկութիւն փոխադարձելի .

Պարզ հոգի մի ոչ է մարդ .

Առաջարկութիւն փոխադարձեալ .

Մարդն ոչ է պարզ հոգի մի .

Երբ առանց իմաստն այլայլելու՝ փոխա-
դարձելու համար քանակն պէտք կըլլայ
փոխել՝ փոխադարձութիւնն կըսուի սա-
տահակակ համ ըստ դիպաց: Օրինակի հա-
մար հաստատական առաջարկութիւնս

Ամենայն մարդիկ մահկանացուք են,

չկրնար պարզապէս ուրիշ հանրական ա-
ռաջարկութեան մի փոխադարձել ըսելով

Ամենայն մահկանացու էակ մարդ է,

որովհետեւ հակառակ կըլլայ ճշմարտու-
թեան և փոխադարձելի առաջարկութեան
իմաստիցն . այլ հարկ է փոխադարձել
զայն ՚ի մասնական առաջարկութիւն և
ըսել .

Էակք ոմանք մահկանացուք՝ մարդիկ են:

Առաջարկութեան փոխադարձութիւնն օգ-
տակար կրնայ ըլլալ երբեմն առաջարկու-

թեան իմաստն լուսաւորելու , և պէտք որ
ըլլայ անոր ստուծիւնն յայտնելու հա-
մար : Բայց այս քանախօսական գործո-
ղութիւնս հիմա չգործածուիր :

Բ. Հակադրութիւն առաջարկութեանց . —
Հակադրութիւն կըսուի այն սեպհականու-
թիւնն զոր ունին երկու առաջարկութիւնք
զիրար մերժելու կամ հերքելու : Առաջար-
կութիւն մի հերքէ զուրիշ առաջարկու-
թիւն մի՝ երբ իր ճշմարտութենէն կը հե-
տեի իրեն հակադրելոյն ստուծիւնն : —
Երկու տեսակ հակադրութիւն կայ , հակա-
ասկան և հակառակ : Երկու առաջարկու-
թիւնք հակասականք են՝ երբ մին ճիշդ այն
քանն կը զրուցէ՝ ինչ որ պէտք է միւսն հեր-
քելու համար . օրինակ

Ամենայն մարդիկ չարք են , Ոմն 'ի մարդկանէ
ոչ է չար . Օգն գեղեցիկ է , Օգն ոչ է գեղեցիկ :

Երկու առաջարկութիւնք հակառակք են՝
երբ մին ասէ աւելի ինչ՝ քան ինչ որ պէտք
է միւսն հերքելու համար . օրինակ

Ամենայն մարդիկ չարք են , Ոչ ոք 'ի մարդկա-
նէ չար է . Օգն գեղեցիկ է , Վարի անհարթ է օգն :

Շատ անգամ առաջարկութիւն մի հերքե-
լու համար 'ի ծայրայեղն անկանիմք հակա-
ռակ առաջարկութեամբ , ուր հակասական
հակադրութիւնն պիտի ըլլար ճիշդ ճշմար-
տութիւն :

Երկու առաջարկութեանց մէջ հակա-

դրութիւն ըլլալու համար՝ հարկ է որ ըլլայ հաստատութիւն և մերժումն մի և նոյն մակդրրի, նոյն ենթակայի, և նոյն յարաբերութեամբ: Ուստի այս յետագայ առաջարկութեանց մէջ հակադրութիւն չկայ.

Պետրոս կարի ճարտար է, Պետրոս ոչ է կարի ճարտար,

եթէ առաջին առաջարկութեան մէջ ճարտար ըսելով ուսողական ճարտարութիւն իմանանք և երկրորդին մէջ բանասիրական: Երկու հաստատական առաջարկութեանց մէջ հակադրութիւն կրնայ ըլլալ. սս բանս անկէց առաջ կուգայ որ գաղափարաց բնութեանն համեմատ՝ հաստատական առաջարկութիւն մի հաւասարադոր է մերժողութեան միւսոյն հաստատածին: Այս հակադրութիւնս կը հանդիպի՝ երբ երկու զիրար մերժող մակդիրք՝ մի և նոյն ենթակային վրայօք կը հաստատուին. օրինակի համար,

Չես այս բոլորակ է, Չես այս քառակուսի է:

Երկու հակասական առաջարկութիւնք չեն կրնար ըլլալ ոչ երկուքն ալ ճշմարիտ, և ոչ երկուքն ալ սուտ: Այսպէս, օրինակի համար, եթէ ճշմարիտ է թէ շրջանակն է բոլորակ, չկրնար ճշմարիտ ըլլալ որ չըլլայ բոլորակ. և եթէ սուտ է ըսելն թէ շրջանակն չէ բոլորակ, չկրնար սուտ ըլլալ ըսելն թէ շրջանակն է բոլորակ: Այս երկու-

քին մէկն է ճշմարիտ կամ սուտ , և միջին սահման մի չկայ : Հետեւապէս հակասական առաջարկութեան մի ճշմարտութենէն՝ միւսոյն ստութիւնն կրնանք հետեւցնել , մէկուն ստութենէն միւսոյն ճշմարտութիւնն :

Երկու հակասակ առաջարկութիւնք չեն կրնար երկուքն ալ ճշմարիտ ըլլալ . որովհետեւ միայն հակադրութեամբ ալ մին միւսէն կը հերքուի . ապա միոյն ճշմարտութենէն՝ միւսոյն ստութիւնն կրնանք հետեւցնել : Բայց կրնան երկուքն ալ սուտ ըլլալ . որովհետեւ կրնայ անոնց մէջ միջին սահման մի ըլլալ , այսինքն ուրիշ ճշմարիտ առաջարկութիւն մի՝ որ երկու հակառակներն ալ սուտ հանէ . օրինակի համար , այս երկու առաջարկութիւններս .

Ամենայն մարդ է առաքինի , Ոչ ոք 'ի մարդկանէ է առաքինի ,

երկուքն ալ սուտ են՝ եթէ ճշմարիտ է թէ

Ոմանք միայն 'ի մարդկանէ են առաքինի :

Ուստի հակառակ առաջարկութեանց միոյն ստութենէն՝ միւսոյն ճշմարտութիւնն չենք կրնար հետեւցնել :

Բ . Ծարարականութիւն .

Նախընթաց հատուածին մէջ առաջարկութեան վրայ խօսեցանք՝ իբրև պատրաստութիւն շարաքանութեան ուսման . իսկ

այս հատուածիս մէջ պիտի քննեմք նոյն
իսկ շարաքանութեան բնութիւնն, կանոն-
ներն ու տեսակներն :

Շարաքանութեան բնութիւնն .

Մարդկային մտաց ընթացքն կամ բռ-
նած կերպն զոր բանախարութիւն անուա-
նեմք, գլխաւորապէս արտածական կերպով
մի կըլլայ՝ որ շարաքանութիւն կըսուի : Առաջ-
արկութեանց ձևով յառաջ բերեալ ար-
տածութիւն մի կանոնաւոր ըլլալու համար՝
երեք բան հարկաւոր է . Ե. Առաջարկու-
թիւն մի որ բովանդակէ յինքեան ուրիշ
առաջարկութիւն մի որ անկէց պիտի ար-
տածի : — Բ. Առաջարկութիւն մի որ պատ-
ճառ ըլլայ արտածութեան, այսինքն ցու-
ցընէ թէ առաջարկութիւն մի իրապէս բո-
վանդակեալ է՝ ուրիշ առաջարկութեան մի
մէջ, և հետեւապէս կրնայ անկէց արտա-
ծիլ : — Գ. Արտածութիւնն ինքնին կամ
բովանդակութիւնն բանավարութեան :
Արդ այս երեք մասանց կամ առաջարկու-
թեանց միութիւնն է՝ շարաքանութիւնը
սուածն . ուսկից կը հետեւի թէ շարաքա-
նութիւնն կրնայ նկատուիլ որպէս բնական և
անբողջական ձև արտածութեան :

Շարաքանութիւնն կը սահմանի Պատ-
ճառաբանութիւն յերից առաջարկութեանց բա-
ղադրեալ՝ յորոց վերջիկն կրակէ՝ ի միոյ յեր-
կոց առաջնոց՝ միջնորդաւ միշտոյն : Երբ ա-

առաջարկութիւն մի շարաքանութեամբ պի-
տի ցուցուի՝ կըսուի խնդիր . երբ կը ցու-
ցուի և զբանավարութիւնն կաւարտէ՝ կը-
սուի բովանդակութիւն, առարտ կամ հետե-
ւանք, ըստ ոմանց նաև եզրակացութիւն :
Օրինակի համար, մարմին մի կայ առջևնիս՝
որուն կնիքն յայտնի և որոշ չեն, և կու-
ղենք իմանալ թէ արդեօք այս մարմինս
անասուն է թէ բոյս թէ մետաղ. այս հարց-
մունքս կըլլայ խնդիր, որուն յետագայ լու-
ծումն կուտանք շարաքանութեան ձևով .

Անասունն է էակ կենդանի՝ որ ինքն իրեն շար-
ժի, և ունի գործարանս առ՝ ի լմել զկերակուրս և
յարմար գործել զնոսին առ՝ ի սնունդ իւր, և
այլն .

Իսկ արդ այս մարմինս ևս է էակ կենդանի, ին-
քն իրեն շարժող, և այլն .

Ապա ուրեմն այս մարմինս է անասուն .

Խնդիրն գիտելոյ թէ արդեօք այս մար-
մինս անասուն է՝ լուծուելէն ետքն եղաւ
բովանդակութիւն :

Գիտելի է որ մեծագոյնն այս օրինակիս
այն առաջարկութիւններէն մէկն է՝ որ նե-
րածոքեամբ եղեալ են ըստ զննողութեան
համագոյից :

Շարաքանութեամբ խնդիր մի լուծել ը-
տելն ուրիշ բան չէ՝ բայց եթէ երկու գա-
ղափարաց մէջ եղած յարաբերութիւնն
գտնել : Երբ երկու գաղափար իրարու հետ
բաղդատելով անոնց համաձայնութիւնն
կամ անհամաձայնութիւնն յստակապէս

չեմք կարող ըմբռնել, երրորդ գաղափարի մի կը դիմենք զանոնք բաղդատելու համար . եթէ երկուքն ալ այս երրորդին համաձայնին՝ կըսենք թէ իրարու ալ համաձայն են . իսկ եթէ մին համաձայնի և միւսըն չհամաձայնի երրորդին՝ կըսենք թէ իրարու ալ անհամաձայն են : Օրինակի համար , մարդկային հոգի և ոգեղիկոչքիւն գաղափարաց իրարու յարաբերութիւնն գըտնելու համար՝ երրորդ գաղափարի մի կը դիմենք . օրինակ իմն , խոհուն գոյացոչքիւն . և հետեւեալ բանավարութիւնն կընենք .

Ամենայն խոհուն գոյացութիւնն ոգեղէն է ,
Իսկ արդ մարդկային հոգին խոհուն գոյացութիւնն մի է ,
Ուրեմն մարդկային հոգին ոգեղէն է :

Այս օրինակիս բովանդակութիւնն այն է որ մարդկային հոգի և ոգեղիկոչքիւն գաղափարներն իրարու համաձայն են , որովհետեւ երկուքն ալ համաձայն են երրորդ գաղափարի մի հետ՝ որ է խոհուն գոյացոչքիւն :

Այս գործողութեանս օրինաւորութիւնն յետագայ առաժից վերայ հիմնեալ է .
Ա . Երկու գաղափարք որք նոյնանան ընդ երրորդի՝ նոյն են և ընդ միմեանս : —
Բ . Յերկուց գաղափարաց եթէ մին յարմարի ընդ այլում երրորդի և միւսն չյարմարի՝ իրարու հետ ալ չեն յարմարիր :

Այս սկզբունքս նոյն են անոնց հետ՝ ու

բովբ օրինակի համար կիմանանք թէ երկու մարմինք Ա և Բ հաւասար ծանրութիւն ունին, եթէ երկուքն ալ առանձինն Գ մարմնոյ ծանրութեան հաւասար են. իսկ եթէ մին հաւասար ըլլայ Գ մարմնոյ և միւսն անհաւասար՝ իրարու ալ անհաւասար են: Նոյն կերպով կը ճանչցուի երկուց գծից երկայնութեան հաւասարութիւնն ու անհաւասարութիւնն՝ հասարակ չափով մի զանոնք չափելով:

Շարաքանութիւնն վերլուծելով՝ երեք որոշ եզերք կը գտնենք անոր մէջ. Ա. Երկու եզերք որ բաղդատուելու գաղափարներն կը յայտնեն, և կը կոչուին մեծ և փոքր եզր կամ սովորաբար մեծ և փոքր անդամք: Բ. Երրորդ եզր մի կամ եզր համեմատութեան՝ որ կը կոչուի միջին եզր: Յետագայ օրինակիս մէջ

Ամենայն առաքինութիւն է գովելի.

Արդ ժուժկալութիւնն է առաքինութիւն,

Ապա ժուժկալութիւնն է գովելի.

գովելին է մեծ անդամն, ժուժկայութիւնն փոքր անդամն, և առաքինութիւնն միջին եզրն:

Երեք եզերաց մէջ եղած շարքէն՝ յառաջ գան երեք առաջարկութիւնք. յորոց մին բովանդակէ մեծ անդամն և միջին եզրն, և կըսուի մեծագոյն, միւսն բովանդակէ փոքր անդամն և միջին եզրն, և կըսուի փոքրագոյն, վերջապէս երրորդն որ

բովանդակէ երկու անդամներն՝ և կըսուի
բովանդակութիւն : Մեծագոյն և փոքրագոյն
առաջարկութիւնք միանդամայն կըսուին
նաև նախադրեալք : Մեծ անդամ անուն կը
տրուի ան եզրին՝ որ բովանդակութեան
մակդիրն է . որովհետև մակդիրն սովորա-
բար աւելի ընդարձակութիւն կունենայ
քան զենթակայն . իսկ բովանդակութեան
ենթակայն փոքր անդամ կըսուի հակառակ
պատճառաւ :

Երկու նախադրեալք մեծագոյն և փոք-
րագոյն կըսուին՝ ոչ եթէ իրենց բռնած
կարգին նայելով՝ այլ ըստ որում բովան-
դակեն մեծ և կամ փոքր եզրը , այսինքն
զմակդիրն կամ զենթակայն : Առաջ դըր-
ւած նախադրեալն՝ կրնայ ըլլալ փոքրա-
գոյնն որպէս և մեծագոյնն , սակայն սո-
վորաբար մեծագոյնն առաջ կը դրուի :
Երկու նախադրեալք միացեալք՝ կըսուին
նաև նախորդ , որովհետև բովանդակութե-
նէն առաջ են , բովանդակութիւնն ալ կը-
սուի հետևորդ :

Բովանդակութեան մէջ երկու որոշ մա-
սունք կան՝ հետևորդիւն և հետևանք : Հետև-
շանքն է առաջարկութիւնն արտածեալ ՚ի նա-
խադրելոց՝ կամ բովանդակութիւնն ձևացը-
նող առաջարկութիւնն . իսկ Հետևորդիւնն է
կասկակցութիւնն բովանդակութեան ընդ նախոր-
դին որ սովորաբար՝ ոչրեմն , այսա շարկապ-
ներով կը բացատրուի : Հետևութիւնն
կրնայ ըլլալ սուտ՝ և հետևանքն ճշմարիտ ,

Կամ սատր հակառակ՝ հետեանքն սուտ և
հետեութիւնն ճշմարիտ . օրինակ .

Յուդա էր աշակերտ ,
Ապա էր ագահ .

հետեանքն ճշմարիտ է՝ որպէս առաջարկու-
կութիւն , և սուտ՝ որպէս հետեութիւն :

Նիւթն կարէ խորհիլ ,
Ուրեմն քարն կարէ խորհիլ .

հետեանքն սուտ է՝ որպէս առաջարկու-
կութիւն , բայց ճշմարիտ է՝ որպէս հետե-
ւութիւն :

Երբ երկու գաղափարներ իրարու հետ
բաղդատելու միջին եզր մի կուզենք գտնել՝
հարկ է զանիկայ երկու անդամոց ալ հան-
գէտ գաղափարներէն առնունք . շատ ան-
գամ այս երրորդ գաղափարս միջին ըն-
դարձակութիւն մի կուենենայ , այսինքն ա-
ւելի մեծ քան զփոքր եզրն և աւելի փոքր
քան զմեծ եզրն . որով սովորաբար հաս-
տատական շարաքանութեանց մէջ այս
միջին եզրն սեռ կըլլայ համեմատութեամբ
փոքր եզրին , և տեսակ՝ համեմատու-
թեամբ մեծ եզրին . որպէս ՚ի յետագայ
օրինակիս

Ամենայն ախտ լնասակար է ,
Արդ հպարտութիւնն է ախտ ,
Ուրեմն հպարտութիւնն լնասակար է :

Եզրս ախտ ՚ի նոյն կարգի գաղափարաց
առնուած է՝ ինչ որ եղերքս հպարտութիւն

և վնասակար , և է սեռ համեմատութեամբ հարստութեան , և տեսակ համեմատութեամբ վնասակար իրաց : — Այս ալ գիտնալու է որ բանախօսութեան մէջ որոշ կանոն մի չկայ՝ այս այն մասնաւոր դիպաց մէջ միջին գաղափարներ գտնելու , որ իւրաքանչիւր անձի նրբամտութենէն կը կախուի :

Շարաքանութեան կանոններն .

Շարաքանութենէ օրինաւոր բովանդակութիւն հանելու համար՝ հարկ է որ համաձայն ըլլայ քանի մի օրինաց՝ որ իր բնութեան վերայ հաստատեալ են . այս օրէնքս կը սուսին կանոնք շարաքանութեան : Այս կանոններս սովորաբար ութ կը համարուին՝ բայց երկուքի ալ կրնան վերածուիլ . ոմանք ուզած են նաև բոլորն ալ մէկի վերածել , ինչպէս որ յետոյ պիտի բացատրենք :

Ահաւասիկ այս կանոններս , զորս սովորութիւն է վարժարանաց մէջ լատին տանաւորովաւանդել , աշակերտաց միտքն դիւրաւ տպաւորելու համար . նոյն պատճառաւ մենք ալ վեցաչափի թարգմանեցինք .

1 . Եզերք իցեն երեք ևեթ՝ մեծըն և փոքր և միջին .

2 . Եւ յաւարտին ոչ ընդարձակ քան զնախադրեալս իցեն եզերք .

3 . Միջին եզր գէթ միանգամ ունիցի միտըս հանրական .

4 . Եւ յաւարտին ոչ բնաւ օրէն իցէ գնել զեզրն միջին .

5 . Թէ նախադրեալք են մերժականք՝ ոչ ինչ անտի հանցես աւարտ .

6 . Ի հաստատեալ նախադրելոց՝ ոչ մերժական աւարտ ցուցցես .

7 . Տկարագոյն նախադրելոյ՝ աւարտն ըզհետ միշտ կրթեսցի .

8 . Ի մասնական նախադրելոց ոչ ինչ ըզհետ գայցէ աւարտ :

Առջի չորս կանոններն եզերաց կը վերաբերին , մնացած չորսն ալ առաջարկութեանց :

Ա . Կանոն . Եզերք իցեն ևրեք ևևր , և այլն . Ամէն շարաքանութեանց մէջ երեք եզերք միայն կրնան ըլլալ և ոչ աւելի : — Շարաքանութեան վախճանն ուրիշ բան չէ բայց եթէ երկուց գաղափարաց իրարու յարմարութիւնն կամ անյարմարութիւնն ցուցընել՝ երրորդ գաղափարով մի՛ որուն հետ առջիններն կը համեմատենք : Ասկէց դուրս որ և իցէ բան շարաքանութիւն չըլլար :

Թէպէտ շարաքանութիւնն յերից առաջարկութեանց կը կազմի՝ որոց իւրաքանչիւրն ունի զիւր ենթակայն և մակդիրն , սրով կերևի թէ վեց եզր ունի , սակայն երեքէն աւելի չէ , որովհետև իւրաքանչիւր եզր երկերկու անգամ կրկնած է :

Բ . Կանոն . Եւ յաւարտին ոչ ընդարձակ , և

այլն . Եզր մի աւարտին կամ բովանդա-
կութեան մէջ աւելի ընդարձակութիւն պի-
տի չունենայ՝ քան ինչ որ ունի նախադրե-
լոց մէջ : — Կանոնիս պատճառն այն է
որ՝ բովանդակութիւնն երկուց անդամոց
համեմատութիւնն ըլլալով միջին եզրի հետ
կը հետեւի թէ երկուց անդամոց մէկն ալ
միջին եզրով համեմատուելէն ետեւ աւելի
քան մի պիտի չունենան միջին եզրին մէջ
քան ինչ որ ունին նախադրելոց մէջ .
դարձեալ զի աւելին չկրնար բովանդակիլ
նուազին մէջ , և հետեւապէս ասկից չկըր-
նար ելլել :

Գ . Կանոն . Միջին եզր գէր մի անգամ ,
և այլն . Միջին եզրն գոնէ մի անգամ
հանրական մտքով առնուելու է : — Եթէ
երկու անգամ մասնաւորապէս առնուէր՝
երկու եզերաց կը հաւասարէր , վասն զի
մի ամբողջի ընդարձակութեան երկու զա-
նազան մասանցն համար կը հասկըցուէր :
Այս կանոնս յետոյ աւելի երկար պիտի
բացատրենք :

Դ . Կանոն . Եւ յաւարտին ոչ քնաւ օրէն ,
և այլն . Միջին եզրն ոչ բնաւ պիտի գըտ-
նուի բովանդակութեան մէջ : Միջին եզրն
ուրիշ քանի համար չգործածուիր բայց ե-
թէ իբրև չափ համեմատութեան երկուց
գաղափարաց մէջ եղած յարաբերութիւնն
գտնուելու , արդ այս համեմատութիւնս նա-
խադրելոց մէջ կատարուելով՝ ուրիշ քան
չմնար բայց եթէ համեմատեալ գաղափար-

ներն միացնել կամ զատել բովանդակութեան մէջ, որուն մէջ միջին եզրն ալ գործ չունի :

Ե . Կանոն . Թե՛ նախադրեալք են մերժակա՛նք, և այլն . Յերկուց մերժական նախադրելոց բան մի չհետեիր : Եթէ երկու նախադրեալք մերժականք են՝ ըսել է թէ երկու անդամոց և միջին եզրի մէջ անյարմարութիւն կայ . արդ երկու գաղափարաց երրորդի մի հետ չյարմարելէն՝ չկրնար հետեիլ թէ անոնք իրարու կը յարմարին կամ չեն յարմարիր . օրինակի համար, երկու ծառեր՝ ձեռքս ունեցած չամիս՝ որ վեց մետր երկայնութիւն ունի՝ չեն յարմարիր, անկէց չեմ կրնար հետեցընել թէ իրարու ալ հաւասար են կամ չեն . որովհետեւ կրնայ ըլլալ որ ոչ մէկն և ոչ միւսըն վեց մետր ըլլալով՝ սակայն հաւասար ըլլան իրարու՝ երկուքին ալ երկայնութիւնն ըլլալով հինգ մետր . կամ ըլլան անհաւասար՝ մէկն ըլլալով հինգ մետր՝ միւսն եօթն :

Զ . Կանոն . Ի հաստատեալ նախադրելոց, և այլն . Յերկուց հաստատական նախադրելոց՝ մերժական բովանդակութիւն հանել չըլլար : — Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ միջին եզրի մի հետ յարմարութիւն ունեցող երկու գաղափարներէ՝ հետեցընենք թէ ուրեմն իրարու չեն յարմարիր . որ և յայտնապէս կը հակառակի այն առածին թէ՛ Երկու իրք հաւասարք երրորդի՝ հաւասարք են և իրեցաց :

է . Կանոն . Տկարագոյն և ախադրելոյ , և
այլն . Բովանդակութիւնն երկուց նախա-
դրելոց տկարագունին միշտ կը հետևի .
արդ մերժական առաջարկութիւն մի հա-
մեմատութեամբ հաստատականին՝ տկա-
րագոյն կամ ստորին կը սեպուի , նմանա-
պէս մասնական մի՝ հանրականէն ստորին :
Ապա նշանակէ կանոնս որ եթէ յերկուց
նախադրելոց մին մերժական է՝ բովան-
դակութիւնն ալ մերժական պիտի ըլլայ .
և եթէ մին ՚ի նախադրելոց մասնական է՝
բովանդակութիւնն ալ մասնական պիտի
ըլլայ :

1.^o Եթէ մին ՚ի նախադրելոց մերժական
է՝ բովանդակութիւնն մերժական պիտի
ըլլայ՝ ըսինք . վասն զի յերկուց իրաց եթէ
մին յարմարի երրորդի մի հետ՝ և երկրոր-
դըն չյարմարի , ըսել է թէ իրենց մէջ ալ
անյարմար են (առած ք) . հետևապէս զի-
րար չեն հաստատեր , և բովանդակու-
թիւնն մերժական մինակ կրնայ ըլլալ :

2.^o Եթէ մին ՚ի նախադրելոց հանրական
է և միւսն մասնական , բովանդակութիւնն
մասնական պիտի ըլլայ՝ ըսինք ¹ : Ասոր

1 . է . Կանոնիս այս երկրորդ մասն լուծելու
համար յիշելու է 1.^o թէ առաջարկութիւն մի
հանրական կամ մասնական կըսուի իր ենթա-
կային ընդարձակութեան նկատմամբ . 2.^o թէ
հաստատական առաջարկութեան մի մակդիրն
մասնաւոր եզր մի է , իսկ մերժական առաջար-
կութեան մակդիրն հանրական եզր մի է . տես
Քանակ և Որակ առաջարկութեանց յօդուածն :

մէջ երկու դէպք կրնայ ըլլալ . այսինքն թէ մին հանրական և միւսն մասնական եղող նախադրեալք՝ երկուքն ալ հաստատական ըլլան , և կամ թէ մին ՚ի նոցունց մերժական ըլլայ :

Յառաջին դէպս՝ նախադրելոց մէջ մէկ հանրական եզր մի միայն կայ՝ այսինքն ենթակայն այնորիկ յերկուց հաստատական նախադրելոց որ հանրական է . արդ այս միակ հանրական եզրս՝ հարկաւ պիտի ըլլայ միջին եզր՝ որ գոնէ մի անգամ հանրականապէս պիտի առնուի (կանոն Գ) . ապա բովանդակութեան երկու եզերք՝ այսինքն երկու անդամներն՝ մեծագոյնն ու փոքրագոյնն՝ պիտի ըլլան երկու մասնաւոր եզերք , որպէս եղան նախադրելոց մէջ (կանոն Բ) , և հետեւապէս բովանդակութիւնն պիտի ըլլայ մասնական առաջարկութիւն մի :

Յերկրորդ դէպս՝ նախադրելոց մէջ երկու հանրական եզերք միայն կան՝ այսինքն ենթակայն այնորիկ յերկուց նախադրելոց որ հանրական է , և մակդիր այնորիկ՝ որ մերժական է : Բայց միջին եզրն գոնէ մի անգամ հանրական մտօք պիտի առնուի (կանոն Գ) . ապա որովհետեւ միջին եզրն պիտի չմտնէ բովանդակութեան մէջ (կանոն Դ) , և դարձեալ բովանդակութեան մէջ հանրական եզր մի չկրնար ըլլալ ինչուն որ չգտնուի նախադրելոց մէջ (կանոն Բ) , ապա բովանդակութեան մէջ մէկ

հանրական եզր մի միայն կրնայ ըլլալ : Սրդ յայս դէպս բովանդակութիւնն պիտի ըլլայ մերժական (1.º տես 'ի վեր) . ապա իւր մակդիրն պիտի ըլլայ այս հանրական եզրս , և հետեւապէս իր ենթական պիտի ըլլայ մասնաւոր եզր . ապա ուրեմն բովանդակութիւնն պիտի ըլլայ մասնական :

Ը. Կանոն . ի մասնական նախադրելոց , և այլն . Յերկուց մասնական նախադրելոց օրինաւորապէս բան մի հետեւցընել չըլլար : — 1.º Եթէ երկու մասնական նախադրելալք հաստատականք են . վասն զի երկու մասնական նախադրութիւնք հաստատականք՝ չունին հանրական ինչ եզր . իսկ արդ շարաքանութիւնն կանոնաւոր և բովանդակիչ ըլլալու համար՝ հարկ է որ միջին եզրն գոնէ մի անգամ հանրական մտօք առնուի (կանոն գ) : — 2.º Եւ եթէ մին յերկուց մասնական նախադրելոցիցէ հաստատական և միւսն մերժական . և յիրաւի , վասն զի մի միայն հանրական եզր մի կը գտնուի , այսինքն մակդիրն այնորիկ յերկուց նախադրելոց որ մերժական է . արդ այս եզրս պիտի ըլլայ միջին եզրն (կանոն գ) . ապա երկու եզերք բովանդակութեան պիտի ըլլան մասնաւորք որովհետեւ նոյն եզերք մասնաւորք էին նախադրելոց մէջ (կանոն ք) , որ չկրնար ըլլալ , վասն զի յայս դէպս բովանդակութիւնն պիտի ըլլայ մերժական (կանոն ե) . ապա բովանդակութիւնն անկարելի է :

Ճիշդ խօսելով՝ շարաքանութեան կանոնաց մէջ եղածներուն օգտակարն ու գործածութեան հարկաւորն՝ երկու սկզբանց կրնանք վերածել, որ ասոնք են .

Ս. Եզր մի ամենևին աշխի ընդարձակութիւն պիտի չունենայ բովանդակութեան մէջ՝ քան ինչ որ ունի նախադրելոց մէջ :

Բ. Միջին եզրն երկու նախադրելոց մէջ ճիշդ նոյն նշանակութիւնն պիտի ունենայ : Այս վախճանիս հասնելու համար դրուած է երրորդ կանոնն որ կըսէ թէ միջին եզրն գունէ մի անգամ հանրական մտօք պիտի առնուի :

Վ երոյզրեալ երկու սկզբանց առջինովն (որ ութ կանոնաց երկրորդն է) կը տեսնուի սա յետագայ կերպով եղած բանավարութեանց սխալն .

Առիւծն է անասուն ,
Իսկ արդ վագրն չէ անիւծ ,
Ապա վագրն չէ անասուն .
Անգլիացիք եւրոպացի են ,
Իսկ անգլիացիք կղզեցի են ,
Ապա եւրոպացիք կղզեցիք են .

Այս շարաքանութիւնքս նախընթաց երկու սկզբանց առջինին հակառակ են . վասն զի անասունն և եւրոպացի եզրերն բովանդակութեան մէջ հանրական են , և ընդհակառակն նախադրելոց մէջ մասնաւոր :

Վ երոյզրեալ սկզբանց երկրորդին պատճառն ալ այս է՝ որ եթէ միջին եզրին նշանակութիւնն երկու նախադրելոց մէջ ալ

նոյն ջրլլայ՝ երկու զանազան եզերաց կը
հաւասարի . հետեապէս երկու անգամք
մի և նոյն միջին եզրով համեմատուած չեն
լլար , որ շարաքանութեան բնութեանն
հակառակ է , որ երկու գաղափարաց ի-
րարու ունեցած յարմարութիւնն՝ երրորդ
գաղափարի մի հետ ունեցած յարմարու-
թեան վերայ հաստատուած է : Երրորդ
եզրին նոյնութեան վերայ ստոյգ լլալու
համար՝ սկիզբ դրուած է՝ որ միջին եզրն
գոնէ մի ակզամ հակառակ մտօք պիտի առ-
նոշի (որ ութ կանոնաց երրորդն է) . վասն
զի եթէ երկու անգամ մասնաւորապէս առ-
նուէր՝ իր նշանակութեան նոյնութեանն
վերայ ստոյգ չէինք կրնար լլալ , որովհե-
տե կրնար այնպէս հասկըցուիլ՝ իբր թէ մի
և նոյն ամբողջի ընդարձակութեանն եր-
կու զանազան մասանցն համար է : Ուստի
յետագայ շարաքանութեանս բովանդա-
կութիւնն սխալ է , որովհետեւ մեծագունին
և փոքրագունին մէջ ըսուած ոմանք 'ի
մարդկանէ բաւերն նոյն չեն . օրինակ .

Ոմանք 'ի մարդկանէ առատաձեռք են ,
Իսկ արդ ոմանք 'ի մարդկանէ ազահք են ,
Ապա ոմանք ազահք առատաձեռք են .

Սակայն երկու անգամ մասնաւորապէս
առնուած միջին եզրին նոյնոքիւնն կրնանք
ստուգել ուրիշ ձև մի տալով խօսքին՝ որ
սոյն նոյնութիւնս ցուցընէ . օրինակի
համար .

Մեծատունք ոմանք յիմարք են ,

Իսկ արդ մեծատունքն այնպիսի պատուեալ են ,
Ապա յիմարք ոմանք պատուեալ են :

Փոռ-Ռուսայալի Տրամարանոչքիւնն¹ հան-
րական սկիզբ մի է՝ առաջարկէ՝ որով ամէն
չարաքանութեան ուղիղ կամ թիւր ըլլալն
կ'իմացուի՝ առանց հին կանոնաց դիմելու :
Երբ շարաքանութեան ձեռօք առաջարկու-
թեան մի ճշմարտութիւնն կուզենք հաս-
տատել , աւելի յատակ առաջարկութիւն
մի փնտռելուէ՝ զոր դիւրին ըլլայ ընդու-
նիլ իբրև ճշմարիտ , և որուն մէջ լուե-
լեայն պարունակի հաստատել ուզած ա-
ռաջարկութիւննիս . բայց որովհետև այս
վերջինս յայտնապէս պարունակեալ չէ
առջինին մէջ նոյն եղերօք , հարկ է գտնել
երրորդ առաջարկութիւն մի որ ցուցընէ
թէ իրապէս պարունակեալ է անոր մէջ :
Այս սկիզբս այսպէս համառօտ կը բացա-
տրէ յիշեալ գիրքն . Մին յերկուց ևսիսս-
դրուց պարտի պարտիակել գրովանդակոչիւնն ,
և միշտն ցոռցանել թէ պարտիակեալ է . ասի-
կայ կըսուի սկիզբն պարտիակոչեան :

Հաստատական շարաքանութեանց մէջ
երկու նախագրեալք ալ կրնան բովանդա-
կութեան պարտիակող սեպուիլ . բայց սո-
վորաբար մեծագոյնն պարտիակող կը սեպուի
և փոքրագոյնն ցոռցիլ : Մերժական շարա-
քանութեանց մէջ պարտիակող կը սեպուի
յերկուց նախագրելոց մերժականն :

Ամենայն առաքինութիւն գովելի է,
Իսկ արդ ժուժկալութիւնն է առաքինութիւն,
Ապա ժուժկալութիւնն գովելի է.

Այս շարաքանութեան մէջ բովանդակու-
թիւնն օրինաւոր է. վասն զի բովանդա-
կութիւնն պարփակի յերկուց նախադրե-
լոց առջինին մէջ, որպէս յայտնի ցուցա-
նէ երկրորդն՝ յայտ առնելով թէ ժուժկա-
լութիւնն է ՚ի թիւս առաքինութեանց : —
Ընդհակառակն յետագայ օրինակիս մէջ

Պաշտօնեայք կրօնից պատուելիք են,
Իսկ արդ ոստիկանք աշխարհիկք չեն պաշտօ-
նեայք կրօնից,
Ապա ոստիկանք աշխարհիկք ոչ են պատուելիք :

յայտնի է թէ բովանդակութիւնն ոչ պար-
փակի ՚ի նախադրեալս. քանզի եզրն պա-
տուելի հանրական է ՚ի բովանդակութեան՝
որովհետև մերժական առաջարկութեան
մի մակդիր է, ուր մեծագունին մէջ որ
հաստատական է՝ մասնաւոր իմաստ ունի.
որպէս թէ ըսած ըլլար Պաշտօնեայք կրօնից
մասն մի են այնց որք պատուելիք են. և ոչ
թէ Միայն պաշտօնեայք կրօնից են պա-
տուելիք, և այլն :

Ամենայն ոք տեսանէ որ ճիշդ է այս
կանոնս, և ինքնին բաւական է շարաքա-
նութեան մի ուղղութիւնն կամ թիւրու-
թիւնն ցուցընելու. բայց գործադրու-
թիւնն երբեմն դժուար է, և շատ անգամ

հին կանոնաց գլխաւորներուն ալ տեղեակ
ըլլալու է : Աս սկիզբս ճիշդ խօսելով գոր-
ծադրական կանոն մի չէ , այլ աւելի շա-
րաքանութեան բնութեանն բացատրու-
թիւն մի , և անոր սահմանին կրկնու-
թիւնն է :

Շարաքանութեան գաւազան տեսակներն :

Շարաքանութիւնն երեք տեսակ կը զա-
նազանի . սարգ , բաղկացոչ և բաղադրեալ :

Պարզ կըսուի շարաքանութեան կազ-
մութիւնն՝ երբ իւրաքանչիւր նախադրեալ
բովանդակէ միայն զմիջին եզրն և զմին
յերկուց անդամոց . որ կըսուի նաև ան-
բաղկացոչ . որ ինչուան հիմա սորվածնիս
էր . օրինակ .

Ամենայն ախտ արժանի է անարգանաց ,

Իսկ արդ ծուլութիւնն է ախտ ,

Ապա ծուլութիւնն արժանի է անարգանոց :

Բաղկացոչ է շարաքանութիւնն՝ որուն
բովանդակութեան եզերքն այնպէս շա-
րուած են՝ որ բովանդակութեան մակդիրն
կամ ենթակայն մասամբ մէկ նախադրե-
լոյն մէջ կը գտնուի և մասամբ միւսոյն
մէջ . օրինակ .

Աստուածային օրէնք հրամայէն պատուել զա-
ւանդապահս իշխանութեան ,

Իսկ արդ ոստիկանք աւանդապահք են իշխա-
նութեան ,

Ապա աստուածային օրէնք հրամայէն պատուել զոստիկանս :

Օրինակիս մէջ բովանդակութեան մակդիրն հրամայեն պատուել զոստիկանս՝ որ պարզ կազմութեան մէջ բովանդակ մեծագունին մէջ պիտի դրուէր՝ որպէս զմիջին եզրով համեմատուի, հոս տեղս այնպէս բաժնուած է նախադրելոց մէջ որ այս մակդրիս մէկ մասն՝ այսինքն հրամայեն պատուել՝ կը գտնուի նախադրելոց մէկուն մէջ, և միւս մասն՝ այսինքն զոստիկանս՝ միւս նախադրելոյն մէջ :

Շարաքանութեան կանոններն դժուար կը յարմարին պարզ կազմութիւն չունող շարաքանութեանց . անոր համար հարկ կըլլայ շատ անգամ բազկացու շարաքանութիւններն պարզի վերածել, ըստ այսմ վերոյգրեալ օրինակն կրնայ այսպէս վերածուիլ .

Աւանդասլահք իշխանութեան պատուելիք են զօրութեամբ աստուածային օրինաց ,

Իսկ արդ ոստիկանք աւանդասլահք են իշխանութեան ,

Ապա ոստիկանք պատուելիք են զօրութեամբ աստուածային օրինաց :

Ինչուան հիմա զրուցած շարաքանութիւններն անոնք են՝ որ բանաւարտքիւնք վճռականք կըսուին, որովհետեւ իրենց մեծագոյնն վճռական առաջարկութիւն մի է, այսինքն այնպիսի առաջարկութիւն մի ու

րուն մէջ դրականապէս կը հաստատուի թէ այս ինչ մակդիրս յարմարի կամ ոչ այն ինչ ենթակային : Հիմա կը մնայ ցուցընել երեքտեսակ շարաքանութիւններ՝ որոց մեծագոյնն կամ պայմանական է, կամ անջատական, և կամ շաղկապական-մերժական : Այս տեսակ շարաքանութեանց հասարակ կնիքն է՝ որ իրենց մեծագոյնն յայտնապէս պարփակէ զբովանդակութիւնն : Ասոնց հասարակ անուն կը դրուի շարաքանութիւն բաղադրեալ, որ կը բաժնուին 'ի պայմանական, անջատական և 'ի շաղկապական :

Պայմանական կամ անբաղադրական շարաքանութիւնն այն է՝ որուն մեծագոյնն պայմանաւոր է, այսինքն մեծագունին մէջ մակդիրն ենթակային վրայ որոշ պայմանով մի կը հաստատուի կամ կը մերժուի . օրինակ .

Եթէ երկիր հողովն զիւրե 'ի միջոցի քսանւչորս ժամուց՝ ապա տեղափոխութիւն արեգական առեւոյթ է .

Իսկ արդ երկիր հողովն զիւրե 'ի քսանւչորս ժամս ,

Ապա տեղափոխութիւն արեգական առեւոյթ է :

Մեծագունին այն մասն որ պայմանական շաղկապն ունի կըսուի նախորդ, և միւսն հետևորդ :

Պայմանական շարաքանութիւնն երկու կերպով կանոնաւոր բովանդակութիւն կունենայ .

Ս. Երբ նախորդն դրուած ժամանակ՝
հետևորդն ալ միատեղ կը դրուի: — Բ. Երբ
հետևորդն մերժուած ժամանակ՝ նախորդն
ալ կը մերժուի:

Պատճառն այն է որ մեծագունին ի-
մաստն՝ զհետևորդն իբր հարկաւ հետևու-
թիւն կենթադրէ նախորդին, բայց ոչ և
անդրադարձեալ: Ասկէց առաջ եկած են
այս սկզբունքս. ճշմարիտ է նախորդն, ապա
և հետևորդն. սուտ է հետևորդն, ապա և նա-
խորդն: Ուստի թիւր պատճառաբանութիւն
կըլլայ ըսելն.

Եթէ այրս այս ագահ է՝ ոչ վասնէ զինչս իւր,
իսկ արդ այրս այս ոչ վասնէ զինչս իւր.
Ապա ագահ է.

որովհետև ասով նախորդին ճշմարտու-
թիւնն հետևորդին ճշմարտութեամբն հա-
նած կըլլամք:

Եթէ նախորդն կամ հետևորդն մերժա-
կան է հաստատելն ուրիշ բան չէ՝ բայց
եթէ կրկնել զնոյն մերժական միտքն պա-
հելով. իսկ մերժելն է անոր մերժական
իմաստն ցրել: — Իսկ եթէ նախորդն կամ
հետևորդն հաստատական է՝ պարզապէս
կրկնելով հաստատած կըլլամք, և կը մեր-
ժեմք մերժական մասնիկ մի աւելցընելով,

Անջատական շարաբանութիւնն այն է
որոյ մեծագոյնն անջատական է՝ այսինքն
երկու մէկզմէկ վանող մակդիրներն մէկ
ենթակայի վերայ անսահմանաբար կը հաս-
տատէ. օրինակ.

Կամ հարկ է սանձահարել զկիրս , և կամ օրինաւոր է յագեցուցանել զնոսին ,

Իսկ արդ հարկ է սանձահարել զկիրս ,

Ապա ոչ է օրէն յագեցուցանել զնոսին .

Կամ այս կերպով

Իսկ արդ չէ օրէն յագեցուցանել զկիրս ,

Ապա հարկ է սանձահարել զնոսին :

Այս շարաքանութեանս մէջ մեծագուննին երկուց մասանց մէկն կրնդունուի և միւսն կը մերժուի . անկէ դուրս ճամբայ չկայ , կամ մէկն ընդունելու է և կամ միւսն :

Այս շարաքանութիւնս թերի և սրակասաւոր կըլլայ՝ եթէ անջատական առաջարկութեան երկու հակառակ անդամոց մէջ միջին կերպ մի կրնայ գտնուիլ . օրինակի համար թերի է յետագայ շարաքանութիւնս .

Կամ հարկ է հնազանդել իշխանութեան նաև յորժամ հրամայիցէ ինչ հակառակ աստուածային օրինաց , և կամ իրաւունք են ապստամբել ընդդէմ նորա .

Թիւր է ըսինք , որովհետև ապստամբութեան և հնազանդութեան մէջ միջին ճամբայ մի կայ՝ որ է անգործութիւն կամ կրաւորական ընդդիմութիւն :

Շաղկապական շարադասութիւնն այն է՝ որոյ մեծագոյնն առաջարկութիւն մի է շաղկապական—մերժական . օրինակ .

Չէ մարթ միանգամայն լինել ծառայ Աստու-
ծոյ և պաշտօնահար մամոնայի ,
Իսկ արդ ագահն պաշտօնահար է մամոնայի ,
Ապա ագահն չէ ծառայ Աստուծոյ :

Այս շարաբանութեանս մէջ հարկ է
հաստատել զմին 'ի մասանց մեծագունին՝
առ 'ի մերժել զմիւսն . բայց ոչ մերժել ըզ-
մին՝ առ 'ի հաստատել զմիւսն : Մեծագոյնն
հաստատէ միայն եթէ երկու իրք հակա-
ռակք չմարթին ճշմարտիլ 'ի նմին ժամա-
նակի 'ի վերայ միոյ ենթակայի . արդ եթէ
յորոշեալ ինչ դէպս՝ մին ճշմարիտ է՝ ապա
միւսն չէ ճշմարիտ . բայց կրնայ ըլլալ որ
երկուքն ալ ճշմարիտ չըլլան . և հետեա-
պէս մէկուն մերժուելէն՝ չհետեիր թէ միւ-
սըն պիտի հաստատուի :

Գ . Բանավարուքեան ոչրիչ ձևերն որ շարա-
բանութեան կրնան վերածուիլ .

Բանավարութեան այն ձևերն որ շարա-
բանութեան կրնան վերածուիլ ասոնք են
Ա . Եղառած , Բ . Փաստորդ , Գ . Բազմա-
բարդութիւն , Դ . Համաբարդութիւն , Ե .
Երկսայրաբանութիւն , Զ . Մակածութիւն ,
Է . Յարացոյց , Ը . Անձնական ապացոյց ,
Թ . Ապացոյցք 'ի յառաջագունէ և 'ի յետ-
նագունէ :

Ա . Եղառածն զոր ոմանք հնարք կոչեցին
ապացոյց մի է յերկուց առաջարկութեանց

յօրինեալ՝ յորոց մին յառաջ գայ կամ ար-
տածի 'ի միւսոյն : Ասիկայ ինչպէս որ կը-
սուի ալ կրճատ շարաքանութիւն մի է , ո-
րովհետեւ յերկուց նախադրելոց մին՝ կամ
մեծագոյնն կամ փոքրագոյնն լռելեայն կը
հասկըցուի . օրինակ

Աստուած է բարի ,
Ապա Աստուած է սիրելի .

որուն մէջ լռելեայն իմացուած առաջար-
կութիւնն է

Ամենայն ինչ որ բարի է՝ սիրելի է : —

Կրնար ըսուիլ նաև

Ամենայն ինչ որ բարի է՝ սիրելի է ,
Ապա Աստուած սիրելի է .

և լռելեայն կ'իմացուէր փոքրագոյնն

Իսկ արդ Աստուած բարի է :

Եղառածի երկու առաջարկութիւնքն կը-
սուին նախորդ և հետևորդ :

Սովորական խօսից մէջ շատ անգամ
եղառածիւ կը բանավարենք , որով խօսքն
աւելի հակիրճ և ուժով կըլլայ : — Շատ
անգամ ալ եղառածն մէկ առաջարկու-
թեամբ կըլլայ՝ և կըսուի եղառածական վը-
ճիռ . օրինակի համար

Մահկանացուդ մի պահեր ոխս անմահս ,
Մարդ մեղաւոր երկիր 'ի դատաստանացն Աս-
տուծոյ ,

Մարդ եմ և զամենայն մարդիկ ինձ բարեկամ համարիմ:

Այս օրինակներս դիւրին է հասարակ շարաքանութեան վերածել՝ պակաս անգամներն լեցընելով:

Բ. Փաստորդ ըստ յունականին ձևաւարկ որ ո՛ր և իցէ պատճառաբանութիւն կը ցուցընէ, շարաքանութիւն մի է՝ որուն նախադրելոց մէկն կամ երկուքն ալ իրենց փաստերովն միատեղ կը դրուին: Ամէն գրուած ուր բանավարութիւնն կը տիրէ՝ շատ անգամ կրնայ փաստորդի ամփոփուիլ: Արկերոնի Միլոնի պաշտպանութեան համար գրած ճառն յետագայ փաստորդիս մէջ կրնայ ամփոփուիլ.

Օրէն է սպանանել զաւազակ անիրաւ որ դարանի կենաց մերոց, զոր և հաստատեն սկզբունք բնական օրինաց, կարգք իրաւանց և յարացոյց օրինակք.

Իսկ արդ Ալոդիոս դարանս գործեաց Միլոնի առ ՚ի բառնալ զկեանս նորա, որոյ ընծայութիւնք են սպառազէն թիկնապահքն Ալոդիոսի, և համբաւն հարեալ ՚ի քաղաքին զի Միլոն ոչ ևս այլ դարձցի յուղեորութենէն, և այլ բազում գէսլք արկածից որ զնոյն հաստատեն,

Ապա օրէն էր Միլոնի սպանանել զԱլոդիոս:

Փաստորդին հիմն շատ շարաքանութեանց հիւսուածք մի կրնանք ենթադրել. որովհետև նախադրելոց վերայ դրուած ապացոյցներն՝ կրնան առանձինն շարաքանութիւններ ձևանալ:

Գ . Բազմաբարդորոշիւնն ապացոյց մի է հինգ առաջարկութիւններէ ձեացած՝ որ երկու շարաքանութիւնս յօրինեն՝ այն կերպով կարգադրուած՝ որ առջինին բովանդակութիւնն ըլլայ միանգամայն երկրորդ շարաքանութեան նախագրելոյ մէկըն . ուստի այս ապացոյցս կրկին շարաքանութիւն է . օրինակ

Որ ինչ պարզ էակ է չկարէ եղծանիլ լուծմամբ մասանցն ,

Գոյացութիւն ոգեղէն է պարզ էակ ,

Ապա գոյացութիւն ոգեղէն չկարէ եղծանիլ լուծմամբ մասանցն .

Իսկ արդ հոգի մարդոյ գոյացութիւն է ոգեղէն ,

Ապա հոգի մարդոյ չկարէ եղծանիլ լուծմամբ մասանցն .

Գ . Համաբարդորոշիւնն կամ ըստ յունական ձայնին կուտակորոշիւնն , առաջարկութեանց շարք մի է այնպէս իրարու հետ կցորդեալ՝ որ առջինին մակդիրն՝ երկրորդին ենթակայն կըլլայ , երկրորդին մակդիրն՝ երրորդին ենթակայն , և այսպէս հետզհետէ , ինչուան առջինին ենթակայն միանայ վերջնոյն մակդիրին հետ՝ բովանդակութիւնն յօրինելու համար : — Բայց շատ անգամ հարկ չըլլար որ ենթակայն ու մակդիրն ճիշդ իրարու յաջորդեն վերի դրած կարգովս . բաւական է որ գաղափարներն իրարու շղթայաշար կապուած ըլլան՝ կուտակութիւնն ճշմարիտ կըլլայ . օրինակ .

Յորժամ ասեմք թէ մարմինք ամենայն սեղմե-
լիք են՝ յայտ է թէ մասունք նոցին կարեն մեր-
ձիլ առ միմեանս .

Մասունք որ կարեն մերձիլ առ միմեանս՝ ան-
ջատք են յիրերաց .

Մասունք անջատք յիրերաց ոչ շոշափեն զի-
րեարս .

Ապա ասելն թէ մարմինք ճնշելիք են՝ նոյն է
ասել թէ մասունք մարմնոց ոչ շոշափեն զիրեարս :

Կուտակութիւնն այնքան թուով շարա-
քանութեանց նիւթ կը պարունակէ իր մէջն՝
որչափ առաջարկութիւնք կան անոր մէջ՝
'ի բաց առեալ զերկուս : Ըստ այսմ հետա-
գայ օրինակիս մէջ

Փառասիրաց բազում յոյժ են իղձք ,
Ոյք բազմաց ցանկան միշտ ըղձիւքն տանջին ,
Որք ըղձիւքն տանջին չունին բնաւ գոհու-
թիւն ,

Ոյք չունին գոհութիւն՝ չեն երջանիկք ,
Ապա փառասէրք ոչ են բնաւ երջանիկք :

Երեք շարաքանութիւնք կան .

Ա. Ոյք բազմաց ցանկան միշտ ըղձիւքն տանջին ,
Իսկ արդ փառասիրաց բազում են իղձք ,

Ապա փառասէրք տանջին յիւրեանց ըղձից : —

Բ. Որ յիւրեանց ըղձիցն տանջին՝ ոչ իւրիք գո-
հանան ,

Իսկ արդ փառասէրք յիւրեանց ըղձիցն տան-
ջին ,

Ապա փառասէրք ոչ իւրիք գոհանան : —

Գ. Ոյք ոչ գոհանան չեն երջանիկ ,

Իսկ արդ փառասէրք ոչ երբեք գոհանան ,

Ապա փառասէրք չեն երջանիկք :

Կուտակութիւնն լաւ ըլլալու համար
հարկ է Ս. Որ ամէն առաջարկութիւնք ի-
րարու հետ իրական կապակցութիւն ունե-
նան . Բ. Որ մէջերնին ամենեւին երկդիմի
բառ չըլլայ : Այս կանոնովս ահա կը ստի-
թեմիստոկլի ըրած համաբարդութիւնն .

Որդին իմ նորածին իշխէ մօր իւրում,
Մայր իւր ինձ,
Ես աշխարհին յունաց,
Յունաստան Ասիոյ,
Ասիա բովանդակ աշխարհի,
Ապա որդին իմ նորածին իշխէ բովանդակ աշ-
խարհի :

Ե. Երկսայրաբանութիւնն է ապացոյց յո-
րում խնդիրն երկու ներհականաց կը
բաժնուի՝ յորոց մէջ միջին մի անկարելի է
գտնել, և որք հասարակ բովանդակու-
թեան մի կը հանեն՝ որ կողմն ալ բռնելու
ըլլաս . օրինակի համար թէ ուզենք ցուցը-
նել որ իրեն պաշտաման պարտքն չկատա-
րողն յանցաւոր է՝ կրնանք սա յետագայ
երկսայրաբանութիւնս ընել .

Կամ բաւական ես վարել զպաշտօնդ զոր ու-
նիս կամ անբաւական,

Եթէ բաւական ես՝ չկարես անբասիր առնել
զանհոգութիւնդ՝ ի ընու զպարտս քոյ .

Իսկ եթէ անբաւական՝ դարձեալ ընդ մեղա-
դրանօք ես սակս յանձնառութեան պաշտամանդ՝
զոր չկարես վարել .

Ապա յանցաւոր ես եթէ չընուս զպարտս պաշ-
տամանդ զոր յանձին կալար :

Հռչակաւոր է Տերտուլիանոսի առ Տրայ-
իանոս կայսր ըրած երկսայրաբանութիւնն՝
որ հրաման տուած էր զքրիստոնեայս ա-
ռանց հարցափորձի սպաննելու :

Կամ փաստապարտ են քրիստոնեայքդ և կամ
արդար :

Եթէ փաստակար՝ ընդէր արդեւուս՝ ի հարցա-
փորձէ :

Իսկ եթէ անպարտ՝ հիմ դատապարտես :

Աս ձեռն կըսուի նաև եղջերաւոր ապա-
ցոյց, որովհետև իր առաջարկութիւնքն
երկու եղջերաց պէս յաջ և յահեակ կը
զարնեն :

Երկսայրաբանութիւնն լաւ ըլլալու հա-
մար հարկ է որ Ս. Բաժանեալ անդամոց
մէջ՝ միջին մի շգտնուի, և ճիշդ երկուքի
բաժնուած ըլլայ խօսքն : — Բ. Իւրաքան-
չիւր մասէն հանուած հետեւանքն ճշմարիտ
ըլլայ և անխուսափելի : — Գ. Չըլլա՛ թէ հա-
կառակորդն նոյն երկսայրաբանութիւնն
ընողին դէմ կարենայ դարձնել. որպէս
դատ Պրատագորայ ըսուած օրինակին մէջ
զոր Աւլոս Գելլիոս կը պատմէ ¹ : Այս հա-

1. « Պրոտագորայ ուսուցանել յանձն առեալ
զհռետորականն արուեստ Եւաթլոսի ումեմն,
սակ արկ նմա՛ զկէս պայմանեալ վարձուն հա-
սուցանել ՚ի սկզբան, և զմիւս կէսն յորժամ
յալթող ելցէ յառաջնոյ դատէն՝ զոր վարեացէ
առաջի դատաւորաց : Այլ Եւաթլոսի ոչ կամե-
ցեալ զխոստացեալ սակն հասուցանել՝ ոչ կամէր

կատարածորիւնս այնչափ աւելի կճողական
կըլլայ՝ որչափ որ երկսայրաբանութիւնն
ընողն միտքն դրած է անշուշտ յաղթու-
թիւնն ձեռք ձգելու :

Երկսայրաբանութիւնն կրնայ մէկ շա-
րաբանութեան վերածուիլ՝ անոր երկու
մասունքն աւելի ընդարձակ գաղափարի
մի մէջ պարունակելով . կրնայ երկուց շա-
րաբանութեանց ալ վերածուիլ՝ յորոց իւ-
րաքանչիւրն՝ ի մի նման բովանդակութիւն
աւարտին :

2. Երբ ներածութիւնն շարաբանու-
թեան ձև կառնու՝ ընդհանրէն որոշելու
համար Մակաժորիւն կըսուի՝ որ է ապա-
ցոյց մի՝ յորում ամբողջի մի վերայ նոյն
բովանդակութիւնն կընենք ինչ որ առաջ
հետզհետէ անոր մասանց վերայ հաստա-
տեցինք . օրինակի համար երբ ցուցընել
ուզենք թէ մարդ իր կենաց ոչ մէկ ժամա-
նակին մէջ ալ երջանիկ չէ , կըսենք այս-
պէս .

Մարդս չէ երջանիկ ՚ի տղայութեան սակս ըն-

մսել ՚ի դատ : Եկակոչ արար զնա Արոտագորաս
և սսէ . կամայ թէ ալամայ՝ սակայն հասուսցես
ինձ . զի կամ յաղթահարես , և ըստ պայմանին
վճար արասցես ինձ զվարձս իմ , և կամ նկուռ լի-
նիս՝ և վճուով իսկ ասենին տուժեսցիս : — Առ
որ Եւաթլոս . ոչ ինչ բնաւ տաց քեզ , սսէ . զի
կամ պարտեմ զքեզ՝ և յատենէս իսկ արձակիմ
՚ի պարտուցս , և կամ յաղթիմ , և ոչ ինչ այնու-
հետև պարտիմ քեզ ըստ քոյոցդ իսկ դաշանց » :

դաբոյս վշտաց և սակս արգելաց զոր հարկիմք դը-
նել 'ի վերայ աղայական հասակին .

Չէ երջանիկ յերիտասարդութեան՝ զի ցան-
կութիւնք խուռն դիմեն 'ի վերայ և վարեն 'ի գե-
րութիւն .

Չէ երջանիկ 'ի կատարեալ հասակին՝ զի հոգք
և թախիծք և ամբարհաւաճութիւնք նեղեն զնա ,
որպէս և 'ի դերե ելանել յակնկալութեանցն .

Չէ երջանիկ և յալեոյթս ծերութեան՝ մաս-
նեալ գոլով 'ի ցաւս և յախտս դժնդակս , և ա-
ռաջի աչաց նկատելով միշտ զմահ մօտալուս .

Ապա մարդս չէ երջանիկ յոր և է հասակի կե-
նաց :

Մակածութիւնս այս կրնայ այս կերպով
փոխուիլ 'ի շարաքանութիւն .

Ճշմարտութեամբ ասելի է զի մարդս չէ բնաւ
երջանիկ յորում և իցէ հասակի կենացն՝ եթէ
չգոյ արդարեւ 'ի կեանս նորա ժամ յորում չիցէ
ներքոյ անկեալ ցաւոց և վշտաց ,

Իսկ արդ՝ արդարեւ չգոյ 'ի կեանս մարդոյ հա-
սակ զերծ 'ի վշտաց՝ եթէ 'ի մանկութեան , և ե-
թէ յերիտասանդութեան , և այլն .

Ապա և այլն :

Մակածութիւնն ճշմարտապէս ապացոյց
սեպուելու համար , հարկ է որ մասանց
թուարկութիւնն ամբողջ ըլլայ , և որով
հետև այս պայմանս պահելն դժուար է՝
անոր համար պատճառաքանութեան այս
ձևս ալ հաւանականութեան սահմանէն
անդին չանցնիր . և ասոր համար ալ է
որ ճշմարիտ ներածութեան անունն չենք

կրնար տալ անոր, ուստի անուանեցինք
Մակաժոռքիւն :

Է. Յարացոյցն կամ օրինակն ապացոյց
մի է՝ յորում առաջարկութիւն մի ելանէ
յայլմէ առաջարկութենէ կամ նմանու-
թեամբ կամ հակադրութեամբ և կամ ա-
ւելի զօրաւոր պատճառաւ . և ըստ երից
դիպացս յարացոյցն կըլլայ 'ի նմանոյ, 'ի
հակառակէ և 'ի հզօրագոռնէ :

Ի նմանոյ . օրինակ . Աստուած եթող
զմեղս ապաշխարողին Դաւթի, ապա նմա-
նապէս թողցէ և զքոյսդ եթէ ապաշխա-
րութեան Դաւթի նախանձաւոր լինիցիս :

Ի հակառակէ . օրինակ . Յովութիւն զա-
ռողջութիւն մարմնոյ աղարտէ, ապա 'ի
հակառակէն ժուժակալութիւն ամրապնդէ
զնոյն :

Ի հզօրագոռնէ . օրինակ . Բազումք 'ի հե-
թանոսաց ներողք գտան յանցուցելոց,
ապա ևս առաւել քրիստոնեայն չպարտի
անհաշտ կալ յատելութեան :

Այս ապացոյցս կրնայ շարաքանութեան
վերածուիլ՝ յաւելմամբ առաջարկութեան
իրիք որ ունիցի յինքեան զսկիզբն նմա-
նութեան կամ հակադրութեան և կամ
հզօրագոյն պատճառի՝ յորմէ յառաջ գայ-
ցէ բովանդակութիւնն . որպէս 'ի յետա-
գայ օրինակիս

Աւաքինութիւնք յորս հանդիսացան հեթա-
նոսք՝ առաւել ևս պահանջին 'ի քրիստոնէից,

Իսկ արդ բազումք 'ի հեթանոսաց ներողք
գտան յանցաւորաց,

Ապա ներողութիւն յանցուցեւոց առաւել ևս
պահանջի 'ի քրիստոնէից :

Ը . Անձնական արացոյց կամ առ մարդ
այն է որ իր հակառակորդին դէմ այնպի-
սի պատճառ մի կը դրուի՝ որ անիկայ ալ
կ'ընդունի թէ ճշմարիտ է , որով անոր
զէնքովն՝ զինքն կը յաղթենք : Օրինակի
համար այն մարդիկ որ իշխանութեան հա-
սած ատենին բուռն միջոցներ կը բա-
նեցընեն՝ կրնանք անոնց առջին դնել ի-
րենց ատենօք ունեցած ազատ գաղափար-
ներն՝ զորս և 'ի գիր անցուցեր են : Ասա-
պացոյցս կողմնակցութեան կռուոց մէջ
չատ կը գործածուի . բայց գիտնալու է որ
բուն խնդիրն լուծելու զօրութիւն չունի ,
այլ իր ուժն ինչ անձի դէմ որ կը գործա-
ծուի անոր համեմատ է :

Թ . Ապացոյցք 'ի յառաջագոռնէ և 'ի յետ-
նագոռնէ . 'ի յառաջագոռնէ կըսուի ապացոյցն
երբ զարգասիս 'ի պատճառէն կը ցուցը-
նեմք , կամ զգոյութիւն իրիք յիւրմէ բնու-
թենէ . օրինակ

Արեգակն ելանէ ,
Ապա տիւ է .

Այսպէս է ապացոյցն որով ցուցանեմք
զգոյութիւն Աստուծոյ յիւրմէ իսկ բնու-
թենէն : — Իսկ 'ի յետնագոռնէ կըսուի երբ
զպատճառն յարգասեացն կը ցուցընեմք .
այսպէս են ապացոյցք գոյութեանն Աս-
տուծոյ 'ի գեղեցիկ կարգաց համագոյից :

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՇԱՐԱԲԱՆ ՈՒԹԵԱՆ Ի ԲԱՐԻՆ ԵՒ Ի ՉԱՐՆ
ԳՈՐԾԱԾ ՈՒԹԻՒՆՆ

Երբ զճճարտութիւնն պարզ հայեցուա-
ծով մի հոգւոյն անմիջապէս կըմբռնեմք՝
այս ծանօթութիւնս ներհայեցական կամ
ինքնադիմի կըսուի : Եթէ իրաց յարաբե-
րութիւնն անմիջապէս չեմք ըմբռներ՝ և
աւելի պայծառ սկզբան կը դիմենք՝ ուսկից
որ փնտռած ճճարտութիւնն կ'արտածի՝
այն ծանօթութիւնն աշտածական կըսուի,
որ շարաքանոչքեան սովորական դէպքն է .
իսկ երբ ստացած ծանօթութիւննիս հարկ
կըլլայ 'ի գործոց առ սկզբունս և առ օ-
րէնս մերձեցնել 'ի ձեռն զննողութեան և
փորձառութեան՝ ան ատեն այս ծանօթու-
թիւնս կըլլայ ներածական . օրինակի համար
մարմնոց փայրաքերոչքեան օրինաց մէջ :
Այս կերպով ստացեալ ծանօթութիւննե-
րէս՝ յառաջ կրնան գալ առաջարկութիւնք
արտածականք՝ եղառածի ձևով, և հետե-
ւապէս կըլլան շարաբանութիւնք :

Հին իմաստասիրաց մէջ ներածութիւնն
կը գտնենք հարցման կամ խօսակցութեան
ձևով զոր գործածած են Սոկրատ և Պլա-
տոն . մանաւանդ վերջինիս գրուածոց մէջ
չատ օրինակներ կան : Իսկ շարաբանական
տեսութիւնն աւելի Արիստոտելի մէջ կը

գտնենք՝ որ և շատ նրբաբանութեամբ բա-
ցատրած է զանիկայ . այս իմաստասէրս
յայտնապէս երկու տեսակ հակաճառա-
կան բանավարութիւն կորոչէ՝ որ են մին
ներածութիւն և միւսն շարաբանութիւն :

Իսկ միջին դարու մէջ արտածական ձե-
ւէն զատ ուրիշ շաւիղ չտեսնուիր . դպրո-
ցական իմաստասիրութիւնն գրեթէ ամէն
բանի մէջ Արիստոտելի իշխանութեան
կամ հեղինակութեան վերայ հիմնեալ ուս-
կից կը հանէր իր բանավարութեան սկզբ-
բունքն , միշտ արտածական շաւղօք կըն-
թանար . անոր համար շարաբանութիւնն
իրեն սովորական գործիքն ըրած էր . բայց
ներածական ծանօթութիւնս չունենալով
ղննողութեան գիտութիւնք բոլորովին ըզ-
կայ առած կեցած էին : Այս դպրոցական
շաւղին բացարձակ ընթացից դէմ՝ հարկ
էր որ հակառակ շարժում մի ըլլար , բայց
կրնանք ըսել որ այս հակառակ շարժումս
ալ չափն անցուց ութնասաներորդ դա-
րուն մէջ , երբ շարաբանութիւնն բոլորո-
վին տարագրեցին՝ որ յայտնապէս ուղիղ
մտաց հակառակ է . որովհետեւ արտածա-
կան ծանօթութիւնք իրական ծանօթու-
թիւնք են , և հետեապէս այն եղանակն
ալ որ զանոնք գտնելու կը գործածուի և
մարդկային մտաց հնարից մէկն է , բոլո-
րովին պախարակելի չէր կրնար ըլլալ :

Ոմանք շարաբանութեան ձևոյն օգտա-
կարութեանը դէմ այս կ'առարկեն՝ որ ար-

գի երևելի իմաստասիրաց շատն՝ ինչպէս Պարոն, Կարդեսիոս, Լոք և այլն¹ անոր գէմ գրած են, և նոյն իսկ Արիստոտէլ և շարաքանութեան պաշտպաններն՝ զանիկայ շատ չեն գործածեր իրենց գրուածոց մէջ: Ասոնց ըսածին հը պատասխանենք նախ՝ որ այն իմաստասէրք որ շարաքանութեան շաւիղն արհամարհեցին՝ իբրև շաւիղ գիւտից և հնարից պախարակեցին զանիկայ, բայց անոր նրբութիւնն ու ճշգրութիւնն ոչ երբէք ուրացան: Իսկ Արիստոտէլ և ուրիշներն որ շարաքանութեան արուեստն ուսուցին՝ զանիկայ միշտ չգործածելնուն պատճառն այն է՝ որ մտքերնին չէին գրած թէ իրենց գաղափարներն բացատրելու մի միայն եղանակն այս ըլլայ, և ընդհակառակն գիտէին թէ անոր գործածութիւնն որոշեալ նիւթոց մէջ է, ինչպէս որ իր բնութենէն ալ յայտնի է:

Ոմանք ալ կըսեն թէ շարաքանութիւնն անձանօթ ճշմարտութիւն մի գտնելու չըգար. և ասոնք աւելի իրաւունք ունին, որովհետև շատ անգամ ճշմարտութիւն մի՝ որ շարաքանութեամբ պիտի ցուցուի՝ առաջուց գիտեմք զանիկայ. անոր համար

1. Մեր մէջէն Հ. Արսէն Բագրատունին ալ կրնանք շարաքանութեան հակառակորդաց մէջ դասել, բայց իրեն հակառակութիւնն աւելի հակաճառից նրբաքանութեանց գէմ է. տես յԱ. Տաւեալ Բանական:

Կարողեսիոս ալ կըսէ ¹ թէ « Շարաքանու-
թիւնն աւելի կը գործածուի գիտցածնիս
ուրիշի բացատրելու՝ քան թէ չգիտցած-
նիս սորվելու » : Բայց որչափ ալ ճշմարիտ
է թէ շարաքանութիւնն գիւտից շաւիղ մի
չէ, և անոր բացարձակապէս գործածու-
թիւնն արգելք կրնայ ըլլալ գիտութեանց
գիւտից յառաջագիմութեանն, սակայն
չենք կրնար ալ ուրանալ թէ շատ օգուտ-
ներ ալ կրնայ յառաջ բերել՝ եթէ իմաս-
տութեամբ և չափով զանիկայ գործա-
ծենք. անոր համար Լէյպնից չքաշուիր ը-
սելու ² « Շարաքանութեան ձեռքն գիւտն
մարդկային մտաց ամէնէն գեղեցիկ և ա-
մէնէն մեծ հնարից մէկն կը համարիմ, որ
տեսակ մի հանրական ուսողորթնէ է, մեզք
որ ինչպէս որ պէտք է հարկաւորութիւնն
ճանչցուած չէ. կրնամ ըսել որ անսխառու-
րեան արուեստ մի պարունակի անոր մէջ՝
բաւական է որ գիտնանք և կարենանք
զանիկայ աղէկ գործածել » :

Շարաքանական շաւիղն կը գործածուի
ա. ճշմարտութիւնն ապացուցանելու. բ.
Իմաստակութեան թիւրութիւնն յայտնե-
լու. և գ. Միտքն նրբութեան և ճշգու-
թեան վարժեցընելու համար :

Ն. Շարաքանութիւնն շատ հարկաւոր

1. Ճառ յաղագս շաւիղի մասն Բ :

2. Նոր ճաշակ յաղագս մարդկային հասկացո-
ղութեան, գիրք Գ, գլ. ԺԵ, § 4 :

է ճշմարտութիւնն ապացուցանելու ըսինք .
թէ պէտ է ներածական շաւիղն ալ ճշմար-
տութիւնն ապացուցանելու կը գործածուի .
սակայն երբ ճշմարտութիւն մի երկայն
խարխաւիանօք և ծուռումուռ և մթին ճամ-
բաներով վերջապէս երևան կենէ՛ զանի-
կայ շուտով բացատրելու և դիւրիմաց ը-
նելու համար՝ շարաքանական գրութիւնն
աւելի վերադասելի է՝ քան թէ դժուարին
և կնճռեալ վերլուծութիւնն : Շարաքանա-
կան շաւիղն վերադասելի է իր զուգաչափ
կարգաւորութեամբն և յստակ պայծա-
ռութեամբն՝ որոնցմով յիշողութեան ալ շատ
կօզնէ : Շարաքանութեան շաւղին օգտա-
կարութեանց հասու ըլլալու համար՝ իմաս-
տասիրական խնդիր մի առնենք՝ օրինակի
համար այս գրոցս մէջ գտնուած հոգոյ
անկիւրակակոչրեան կամ Ստոնզոյ գոյոչ-
րեան խնդիրն՝ որ շարաքանական ձևով
գրուած ըլլայ , և բաղդատենք զանիկայ
շարաքանութիւն չգործածող իմաստասի-
րաց ճապաղ բանավարութեանց հետ , և
զանազանութիւնն մէկէն կը տեսնենք :

Բ . Շարաքանական շաւիղն կը ծառայէ
ըսինք իմաստակութեան թիւրութիւնն
յայտնելու . բաւական չէ ճշմարտութեան
ժանօթութեան հասնիլն այլ հարկ է նաև
պաշտպանել զանիկայ՝ ընդդէմ հակառա-
կորդաց : Ամէն մարդ գիտէ թէ սուտ բա-
նավարութիւններէ շատ բան չկայ աշխար-
հիս վերայ՝ որոց մէջ անկանխօք երբեմն

տղիտութեամբ կամ տկարութեամբ մը-
տաց , և երբեմն ալ չարութեամբ և ուրիշ-
ներն խաբելու դիտմամբ . արդ շարաբա-
նական շաւիղն իր խիստ ճշգութեամբն և
կանոնաց նրբութեամբն շատ յարմար է
իմաստակութեան թիւրութիւնն խայտա-
ռակելու : Օրինակի համար ենթադրենք
թէ մէկն յետագայ պատճառաբանու-
թեամբ ուզէ ցուցընել թէ Միլոն իրա-
ւունք ունէր զԱլոդիոս սպաննելու՝ ըսե-
լով թէ Ալոդիոս արժանի էր մահու , ապա
իրաւամբ սպան զնա Միլոն : Այս բանա-
վարութիւնս անուշադիր մտաց կրնայ հա-
մողիչ երևնալ . բայց երբ ուզենք շարա-
բանական ձևի մտցընել զանիկայ՝ և եր-
րորդ առաջարկութիւն մի ձեացընել որ-
պէս զի կարենանք արտածութիւնն յա-
ռաջ բերել՝ այն ատեն կը հասկնանք ի-
մաստակութիւն ըլլալն . որովհետև շարա-
բանութիւնն պիտի ըլլայ այսպէս .

Մահու արժանի եղողն սպաննելը ամենուն ի-
րաւունք է ,

Իսկ արդ Ալոդիոս արժանի էր մահու ,

Ապա Միլոն իրաւունք ունէր սպաննելու զԱլո-
դիոս :

Եւ ահա մեծագոյնն որ դիտմամբ դը-
րուած չէր առջի բանավարութեան մէջ՝
յայտնապէս սխալ է . վասն զի այս իրա-
ւունքս ոչ ամենուն է առհասարակ և ոչ
Միլոնի առանձինն . հասոյա պէտք էր ըսել

Աւանդապահք իշխանութեան հասարակաց իրաւունք ունին՝ օրինաց հրամայածին համեմատ մահուան արժանի եղողներն սպաննելու . և յայտնի է որ այս առաջարկութենէս հետևութիւն չէր ելլեր թէ Ուրեմն Միլոն իրաւամբ կրցաւ սպաննել զԱլոդիոս , որովհետև Միլոն հասարակաց իշխանութեան աւանդապահ չէր : Ասոր համար Աիկերոն Միլոնի գործած մարդասպանութիւնն արդարացընել ուզելով՝ այն սկիզբն չդներ թէ Ալոդիոս արժանի էր մահու , հապա անձնական պաշտպանոչքեան իրաւունքն հիմն կը դնէ իր ջատագովութեանն :

Ահաւասիկ ուրիշ օրինակներ :

Եթէ մէկն կեղծաւոր ջերմեռանդներ գտնուելուն համար՝ ընդհանուր հետևութիւն մի հանէ ջերմեռանդութեան և աստուածապաշտութեան դէմ անկատար քռաքկոչքեան իմաստակութիւն ընելով՝ կրնանք սա յետագայ կերպովս շարաքանութեան վերածել իր խնդիրն և ըսել .

Աստուածապաշտութեան արտաքին երևոյթք էթէ անկեղծ չեն՝ կեղծաւորութիւն են ,

Արդ որչափ աստուածապաշտներ կան որոց երևոյթն միայն արտաքին է ,

Ուրեմն աստուածապաշտութիւնն կեղծաւորութիւն է :

Քիչ մի մտադրութեամբ մէկէն կը տեսնենք որ շարաքանութեանս բովանդակութիւնն նախադրելոց մէջ չկայ կամ թէ

ըսենք բովանդակութեան մէջ աստուած-
պաշտոնքիւն բառն հանրական եզր է և բո-
լոր իր ընդարձակութեամբ առնուած, իսկ
փոքրագունին մէջ իր ընդարձակութիւնն
սեղմած է : Ասլա բովանդակութեան մէջ
աւելի ընդարձակ եզր մի կայ՝ քան թէ նա-
խագրելոց մէջ, որ շարաքանութեան կա-
նոններէն մէկուն հակառակ է : Դարձեալ
անկատար քոչարկոչքիւն ըսինք՝ որովհետեւ
կան շատ անկեղծ աստուածապաշտներ :

Յետ այսորիկ, ապա վասն այսորիկ ըսուած
իմաստակութեամբ ալ՝ երկրիս վերայ ե-
ղած թշուառութիւններն ումանք արեւու
խաւարման և ուրիշ երկնային երեւութից
կուտան՝ որովհետեւ սովորաբար այս թը-
շուառութիւններս ան երեւոյթներէն ետքը
կը հանդիպին . ուստի իրենց խնդիրն շա-
րաքանութեան վերածելով կը ըսենք .

Երբ իրի մի ետեւէն բան մի կը հանդիպի՝ հարկ
է որ այն իրէն առաջ եկած սեպուի ,

Իսկ արդ խաւարումէն կամ երկնային երեւոյթէ
մի ետեւ՝ սովորաբար երկրիս վերայ թշուառու-
թիւններ կը հանդիպին ,

Ապա այս թշուառութիւններս այն երեւոյթնե-
րէն առաջ կուգան :

Այս բանավարութիւնս ամբողջացրնելու
համար տրուած մեծագոյնն՝ յայտնի սուտ
է . վասն զի բնութեան մէջ ամէն օր շատ
պատահմունք կը տեսնենք՝ որ իրարու հետ
կապակցութիւն չունին , և իրարու վերայ
ազդեցութիւն չեն ըներ , օրինակի համար

երկրիս դանազան պտղաբերութիւնքն ամէնքն իրենց ժամանակին :

Հոս դնենք նաև Սենեկայի յիշած ¹ ծիծաղական քերականական խաբեոչքիւնն :

Մուկն վանկ է ,

Իսկ արդ մուկն կրծէ զպանիր ,

Ապա վանկն կրծէ զպանիր :

Իմաստակութեանս թիւրութիւնն անկէց կիմացուի որ մռչկն բառն երկու բոլորովին զանազան մտօք առնուած է :

Գ . Շարաքանական շաւիղն միտքն նըրբութեան և ճշգութեան կը վարժեցընէ ըսինք . տարակոյս չկայ որ շարաքանական ձևն կրնայ 'ի չարն ալ գործածուիլ՝ ինչպէս որ շատ անգամ եղած է՝ որով և տղայական խաղ մի դարձած է . սակայն այս շաւղիս լաւ գործածութիւնն ալ մարդկային մտաց մեծ օգնական է : Այն բանավարութիւնն որ շարաքանութեան ձևոյ տակ չկրնար առնուիլ՝ օրինաւորապէս կասկածելի է . ընդհակառակն ճշմարտութեան ապացուցութիւնն բնականապէս անոր կը յարմարի : « Շարաքանական արուեստն , կըսէ Քուզէն ² , գէթ հզօր սրախաղութեան մի կը նմանի որ մտաց ճշգութիւն և կորով կուտայ . և այս առնացի վարժոցին մէջ հրահանգեցան մեր նախնիք . հիմակուան

1 . Սենեկայ թուղթ ԽԸ :

2 . Քուզէն , Շրջաբերական յ17 յուլիսի 1840 :

պատանիք ալ քիչ մի ատեն անոր մէջ
կրթելն՝ շատ օգտակար կրնայ ըլլալ » : Եւ
յիրաւի ո՞ր և իցէ պատճառաբանութիւն՝
կանոնաւոր և ճիշդ ձևոյ մի վերածելու
վարժեցընելով զիրենք՝ անոնց աստան-
դական և վայրավատին հասակին թումք
մի դրած կըլլանք՝ յորում դեռ պատկերո-
ղութիւնն անոնց բանավարութեան վերայ
կը տիրէ : Շարաքանական շաւղին ազդե-
ցութիւնն յայտնի կերևի արդի լեզուաց
ձևացման մէջ . վասն զի դպրոցական ի-
մաստասիրութիւնն մարդկային բարբա-
ռոյ ճիշդ և խիստ կանոններ սահմանելով՝
հիմակուան ազդերն վարժեցուց՝ այն կեր-
պովարտայայտելու իրենց միտքն՝ ինչ կեր-
պով որ կը պահանջէ բանն և բանախօսա-
կան կարգ գաղափարաց . ահա ասկէց է
արդի լեզուաց վերջի աստիճանի յատա-
կութիւնն . որովհետև այս յատակութիւնն
բնական հետեւանք մի է մտածութեան
ճշդութեանն միացեալ ընդ նրբութեան
լեզուի :

Շարաքանական շաւղին ամէն գիտու-
թեանց մէջ ալ կը գործածուի , գլխաւո-
րապէս իմաստասիրական և չափաբերա-
կան գիտութեանց մէջ , և առանձինն երկ-
րաչափութեան , որուն մէջ հայեցուածոց
ապացուցութիւնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ
չարք իմն շարաքանութեանց :

Շարաքանութիւնն շատ անգամ արտա-
յայտութեամբ չբացատրուիր այսինքն խօս-

քով չդրուցուիր, բայց ամէն բանաւորա-
կան գործոյ մի սկիզբն մտաւոր շարաքա-
նուշիւն մի է, շատ անգամ լռելեայն գը-
րուած՝ զոր սակաւ մի անդրադարձութիւնն
յայտնի կը ցուցընէ :

Շարաքանական շաւիղն թէպէտ և այս-
չափ օգտակարութիւններ ունի՝ սակայն
գիտնալու է որ անոր գործածութիւնն 'ի
չարն ալ կրնայ ըլլալ և անտեղութեանց
պատճառ տալ :

Ս. Աս շաւղիս չափազանց գործածու-
թիւնն դիւրաւ գռնիկ կընէ զմարդ, որով
շարաքանութիւնն բանախօսական մեքե-
նայի մի կը դառնայ, և մոլորութեամբ
խառնուած սկզբունք՝ մեծախորհուրդ ի-
մաստութեան տեղ կը դրուին :

Բ. Այս շաւղիս գործածութեան եթէ
չափ չդրուի՝ ձանձրալի միաձայնուշիւն կը
պատճառէ :

Գ. Շատ անգամ շարաքանական ա-
րուեստն չափազանց նրքաքանուշիւնաց մէջ
անկանի՝ զորս ամենայն մարդիկ չեն կա-
րող ըմբռնել :

Դ. Շարաքանութեան քաջարձակ գոր-
ծածութիւնն նոյն իսկ իմաստասիրական
գիտութիւններն՝ պարտախօս պատգամա-
խօսութեան կը դարձընէ, և զննողութեան
գիտութեանց մէջ ալ անոնց զարգացման
արգելք կըլլայ :

Գ Լ Ո Ի Թ Գ

ՅԱՂԱԳՍ ՇԱԽՂԻ Ի ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԳՍ
Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն Յ

Նախընթաց գլխոց մէջ տեսանք թէ
ինչ է շաւիղն ընդհանրապէս նկատեալ
իր գործելոյ եզանակաց մէջ, այսինքն ի-
րեն հիմն նկատմամբ մարդկային ծանօ-
թութեանց ամէն ճիւղերուն. բայց գի-
տենք որ մարդկային միտք՝ մեր ուսմանց
ամէն մասանց մէջ՝ նոյն ընթացքն չբռ-
ներ :

Ճշմարիտ է թէ մեր ծանօթութեանց ա-
մէն մասանց մէջ ալ աս հետաքրքեցաւ և շաւ-
ղի օժանդակ միջոցներն կը գործածուին. օ-
րինակի համար հանգիտութիւնն, ներա-
ծութիւնն, արտածութիւնն, շարաքանու-
թիւնն, սահմանք և բաժանմունք ամէն գի-
տոտքեանց մէջ ալ կը բանին. բայց այս ալ
յայտնի է որ այս հնարքներէս և միջոցնե-
րէս ոմանք՝ աւելի այս ինչ գիտութեանց
յարմարին, և ուրիշներն ալ այն ինչ գի-
տութեանց. օրինակի համար ներածու-
թիւնն աւելի կը գործածուի բնական գի-
տութեանց մէջ, իսկ շարաքանութիւնն ա-
ւելի շափաքերական գիտութեանց մէջ :

Մարդկային գիտութեան այնչափ զա-
նազան ճիւղերն՝ ի բաց առեալ իրենց

մանր զանազանութիւններն, կրնան գործածելու շաշիկն նկատմամբ՝ երկոց դասուց բաժնուիլ, այսինքն գիտոչքիւնք զնկողոչքեան, գիտոչքիւնք շանամարտոչքեան, և գիտոչքիւնք խառն շնոչքեամբ: — Առջիններուն ծագումն և էական պայմանն է շնոչքիւնք գործոց՝ զորս կարողոչքեամբք մերով կրնանք ըմբռնել: Երկրորդներուն տիրող սկիզբն է յղացմոչք և գործողոչքիւնք շանաչորականք: Իսկ խառն բնութեամբ գիտութեանց մէջ այս տարերաց մէկն ալ բացարձակ չիշխեր: Տարակոյս չկայ թէ բանավարական գիտութեանց մէջ ալ զքննողութիւն կայ, որսէս և բանավարութիւն՝ ի զննողական գիտութիւնս. բայց մեր ծանօթութեանց այս երկու կարգաց՝ իւրաքանչիւրին վերոյդրեալ անուններն կը տրուին՝ համեմատութեամբ կնքոյն որ տիրէ ի նոսին:

Տ. Ա

ՅԱՂԱԳՍ ՇԱԻՂԻ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆՍ ԶՆՆՈՂՈՒԹԵԱՆ

Զննողութիւնն հոգւոյ երկու տեսակ կը բաժնուի՝ մէյմը առ արտաքս միջնորդաւ զգայարանաց՝ որ է զնկողոչքիւնք զգալի կամ արտաքիւնք. միւսն հոգւոյ իւր վերայ զննողութիւնն՝ որ է զնկողոչքիւնք ոգեկան կամ ներքին: Աստի յառաջ զան երկու տեսակ զնկողական գիտոչքիւնք՝ գիտութիւնք շնա-

կանք և բնորոշում, և գիտութիւնք հոգեխօ-
սականք՝ իրենց փորձառական մասին մէջ :
— Նախ խօսինք բնական և բնութեան
գիտութեանց շաւղին վերայ՝ որովհետև
աւելի ընդարձակ են և աւելի զննեալ գոր-
ծեր կան անոնց մէջ . յետոյ խօսինք հոգ-
ւոյ երևութից ուսման շաւղին վերայ :

Ա . Բնական և բնորոշում գիտութիւնք .

Բնական գիտութիւնք անունն կը տրուի
ընդհանուր առամաք այն ամէնայն գիտու-
թեանց՝ որոց առարկայ են եակք նիւթերէնք .
սակայն սովորութիւն եղած է բնական գի-
տութիւնք ըսել անոնց՝ որ սեզործարան նիւ-
րոց վերայ կը խօսին , և գիտութիւնք բնոր-
ոշում ըսել անոնց՝ որ գործարանաւոր նիւրոց
վերայ կը խօսին :

Բնական գիտութիւնք բովանդակ են ըզ-
բնաբանութիւն , զՏարրաբանութիւն , զԵրկրա-
բանութիւն , զՍտրուկուրաբանութիւն . իսկ գի-
տութիւնք բնութեան բովանդակ են զԿեն-
դանաբանութիւն և զԲնաբանութիւն , որոց
հետ կը յարուին Սնդակահատութիւն և
Բնախօսութիւն : — Այս գիտութիւններէս
շատը խառն կնիք մի ունին , օրինակի հա-
մար՝ տարրաբանութիւնն որուն տարերաց
մէկ մասն 'ի գործարանաւոր պետութենէ
կառնուի , և աստղաբանութիւնն որ շա-
փափերական գիտութեանց հետ ներքին
կապակցութիւն ունի :

Մարմինք էականապէս բաղմապատիկ են
և բաժանելի. ամենայն էակ նիւթեղէն՝ ու
նի զիւր ձև և զտարած սեպհական, զան
թափանցութիւն և զժանրոզութիւն և այլն.
և գործարանաւորաց և անգործարանից
իւրաքանչիւր տեսակն ունի զորակս իւր որ
որոշեն զնա յայլոց տեսակաց :

Առջի բերան նիւթեղէն աշխարհիս այս
ամենայն յատկութիւններն շփոթ շարա
դաստընասն մի պէս կը ներկայանան մտաց
առջին, և անոնց վերայ յստակ և որոշ
գաղափար մի ունենալու համար իւրա
քանչիւրը զատ զատ հետազօտելու է 'ի
ձեռն վերացման և վերջո՞ծո՞ւրեան. բայց
զանոնք գիտութիւն մի յօրինելու համար՝
հարկաւոր է դարձեալ նոյն ցրուեալ տա
րերքն շաւղական շարադաստընասնք իրարու
հետ կապել. որուն համար հարկաւոր է Յ
գլխոյ մէջ տրուած բացատրութիւններն
յիշատակել :

Բնական գիտութեանց մէջ շաւիղ գործ
ածելու համար՝ աւելի կը բանին օժան
դակք հնարք և ևնասակք՝ որոց վերայ խօսե
ցանք նախընթաց գլխոյն առջի հատուա
ծին մէջ, որ են զնկողո՞ւրիւն, փոքրձառո՞ւրիւն,
հանգիտո՞ւրիւն, ևնրածո՞ւրիւն, դասառո՞ւր
իւնք և ևնրադաստո՞ւրիւնք : — Սակայն եր
կրորդ հատուածին մէջ դրուած հնարքն ալ
փոքր 'ի շատէ կը գործածուին. այսպէս
բնութեան երևոյթներն ուղղող օրէնքն
ստուգելով՝ գիտութիւն մի յօրինելէն ե

տե՛ նոյն գիտութեան իւրաքանչիւր մա-
սանց ճիշդ սահմաններն կը ձեւացընենք,
և կանոնաւոր բաժանմունք կընենք . դար-
ձեալ՝ի ներածութենէ առաջնորդեալ՝ բնա-
կան օրէնս սրտածեմք՝ որք արոշնատից և
ճարտարտրեանց սերտ և խորոց վերայ կը
գործածուի: Նմանապէս բնական գիտու-
թեանց մէջ ըստ տեղւոյն սպասցոցոցորիչն
և շարարանորիչն ալ բանեցընել պէտք
կըլլայ :

Բ . Հոգեխօսութիւն փորձառական .

Հոգեխօսութիւն կամ հոգւոյ գիտու-
թեան մէջ շատ մի խնդիրներ կան որ ան-
միջապէս գործոց կը վերաբերին , և զննո-
ղութիւնն բաւական է զանոնք լուծելու .
այսպիսի են այն խնդիրներն որ ինքնա-
բեր կամ կամաւոր գործնականութեան ,
հասկացողութեան կամ զգացողութեան
երևութից կը վերաբերին՝ զորս յայտնէ
մեզ գիտակցութիւնն :

Սակայն այս գործոյ խնդիրներս՝ որոց
կարևորութիւնն ամէն մարդ կը հասկնայ ,
չեն այնոքիկ որոց մարդկային միտքն ա-
ւելի եռանդեամբ ետեւէ կըլլայ հասկընա-
լու՝ ինքն իր վերայ խորհած ժամանակ . և
այս խնդրոց վերայ կարգաւորեալ հետա-
զօտութիւն մի ընելն շատ ատեն չէ որ
հնարուած է : Իմաստասէրք՝ հոգւոյ կարո-
ղութեանց և ասոնց գործելու կերպին , և

անոնց գործունէութիւնն մեզ յայտնող
գործոց բնութիւնն՝ խորախորհուրդ մտօք
հասկընալէն առաջ ուզեցին գիտնալ թէ
ինչ է հոգւոյ բնութիւնն, արդեօք որիչ է
'ի բնութենէ մարմնոյ, մարմնոյ ետեւ ալ
պիտի կեայ թէ չէ, և թէ ո՞րն է հոգւոյ
մարմնոյ հետ ունեցած միութեան կերպն,
և այլն :

Ընդհակառակն հոգւոյ կարողութեանց
և հոգեխօսական երևութից շաւղական
ուսումնն՝ առանց վերը դրուած խնդիրներն
մէջ խառնելու, վերջի դարուն ետքերն
սկսած է սկովտացի դպրոցին աշխատու-
թեամբն, որ թէպէտ անկատար էին՝ բայց
հոգեխօսական ուսմանց զարգացման մեծ
պատճառ եղան :

Այս ուսմանս մէջ որ Հոգեխօսութիւն
փորձառական ըսուեցաւ՝ զննողին վախ-
ճանն պիտի ըլլայ հոգեկան երևոյթներն
վերջո՞ծկոյ՝ զանոնք յառաջ բերող նախա-
գիծ սկզբունքն յայտնել, և ցուցանել
զայն օրէնս ըստ որոց այս սկզբունքս
գործեն. յետոյ շարադասական կերպով
այս սկզբամբք և օրինօք բացատրել զերե-
ւոյթս յառաջ եկեալս՝ ի նոցանէ : Այսպէս
զննողութիւնն ծանուցանէ մեզ իբրև օ-
րէնք յիշողութեան՝ թէ յիշատակութիւնք
ոչ զարթնունն ՚ի մեզ՝ եթէ ոչ զրգուեալք
'ի գաղափարէ իմեքէ որ յառաջագոյն
կայ ՚ի միտս. և այս օրէնքս բացատրէ
մեզ մեր յիշատակութեանց շատերը : Փորձ-

առական հետազօտութիւնն հարկաւ են,
թաղրէ ձշմարտոռքիւնս ինչ նախնականս՝ որք
իրենք իրենցմէ բացայայտք են . օրինակի
համար՝ գիտակցութեան ստուգութիւնն :

Թէպէտ և այս շաւիղս իր ամբողջու-
թեան մէջ՝ բնական և բնութեան գիտու-
թեանց հետեւած շաւղին հանգիտական է ,
սակայն այս երկու տեսակ զննողութեանց
մէջ շատ մեծ զանազանութիւններ կան :

Մէկ նկատմամբ՝ գիտակցութեան ներքե
եղած իրաց զննողութիւնն աւելի դիւրաւ
կը կատարուի , և բնական աշխարհի զըն-
նողութենէն աւելի ապահով կրնանք ըլ-
լալ անոր ճշգութեան վերայ : Ամէն մարդ
գիտէ թէ որչափ նրբամտութիւն , եր-
կայնամտութիւն և ճարտարութիւն պէտք
եղած է՝ բնական և բնութեան գիտու-
թեանց ամէնէն մանր գիւտից մէջ , և որ-
չափ անգամ դրսի ազդեցութիւններ ար-
գելք եղած են և փորձառութիւններն
խանգարած են : Ասոնց մէջ շատ անգամ
պէտք կըլլայ իրարու մերձեցընել և հա-
մեմատել շատ մի նիւթեր և գոյացութիւն-
ներ որ աշխարհիս չորս կողմը սփռած են
և կամ երկրիս խորերն թաղուած , և եր-
բեմն ալ հարկ կըլլայ տարիներով աստե-
ղաց շրջանից կատարմանն սպասել գիտու-
ղութիւն մի ընելու համար : — Իսկ ընդ-
հակառակն հոգեխօսական զննողութեան
մէջ մարդ յանձին իւրում կրէ զառարկայ
զննողութեանց իւրոց . և ամէն տեղ , ա-

մէն ժամանակ՝ առանց պատրաստութեան
և առանց անհանգիստ ըլլալու կրնայ գոր-
ծերն բռնել իրենց ներկայ վիճակին իրա-
կանութեան մէջ և կարգով կատարել իր
հետադասութիւններն :

Սակայն որչափ ալ այսու նկատմամբ՝
ներքին զննողութիւնն դիւրին է , այսու
ամենայնիւ նիւթական աշխարհիս զննող-
ութենէն քիչ գործադրութիւնն եղած է ,
և յառաջագիմութիւնն յոյժ սակաւ է . և
աս բանս շատ պատճառներէ ու դժուար-
ութիւններէ առաջ կուգայ . այսինքն .

Ս . Որ ոգւոյ գործողութիւնք սաստիկ
արագութեամբ մի կը կատարուին և գրե-
թէ միշտ շատերն միասնաբար և միահա-
ղոյն . ասկէց առաջ կուգայ որ զանոնք ըմ-
բռնելն ու խելամտելն դժուար է :

Բ . Յայտնի է որ մեր մտադրութիւնն
բնականապէս աւելի կը յօժարի արտաքին
իրաց՝ քան թէ 'ի մեզ անցած երևութից
վերայ : Մեր բնական պէտքն և ընկերա-
կան վերաբերութիւնք միշտ արտաքին ա-
ռարկայից վերայ զմեզ կը դարձնեն , և 'ի
մանկութենէ անոնց վերայ մտադրութիւն
ընելու սովորեալ եմք , և շատ դժուար է
մեզ 'ի ներքս 'ի մեզ անդրադառնալ :

Գ . Հոգին իր վերայ հայեցած ժամա-
նակ՝ հայեցուածն քիչ մի երկնցածին պէս՝
կամ քիչ մի խորը գացածին պէս՝ տեսող-
ութիւնն դիւրաւ կը պղտորի , մտադրու-
թիւնն կը հոգնի , և զննողութիւնն անկա-
տար կը մնայ :

Դ. Հոգւոյ երեւոյթներն մենք յանձինս մեր ևեթ կրնամք զննել, ան ալ երբ քանաւորութիւնս արդէն բացուած է, ուստի 'ի մանկութեան նախկին ձեացման տարերքն՝ բոլորովին անհաս են մեզ, որով և զննողութիւն մեր և ուսումն միշտ անկատար կը մնան :

Անտարակոյս մեծ են այս արդելքս՝ բայց հաստատ ու հանապազորդեան կամօք զօրացեալ մտադրութիւն մի ամէն բանի կը յաղթէ : — Մեր ժամանակի խորախորհուրդ հոգեխօսից մէկուն գրոց մէջ մէկ քանի ազդարարութիւններ կը գտնենք՝ որ շատ յարմար են առաջնորդելու մեզ ներքին գործոց ուսման մէջ :

Ամէն մարդ գիտէ՝ ներքին զննողութեան նախատարր ծանօթութիւններն . օրինակի համար՝ փոքր 'ի շատէ պայծառ գաղափար մի ունի երեւութից գիտակցութեան . և մարդ չկայ որ չգիտնայ թէ ինչ է զգալն, ըզձալ, որոշել, կամել, ճանաչել, յիշել, հաւատալ, և այլն : Բայց գիտութեան նկատմամբ՝ մարդկային բնութեան զննողութեան մէջ՝ այն ցուցընելու է որ հոգւոյ այս գործողութիւններս միշտ հաստատ, կանոնաւոր և անփոփոխ են . այս բանս յայտնելու համար ալ բաւական չէ անկարծակի հոգւոյն այս գործողութեանց վերայ հասնիլը, այլ և գիտնալու է զանոնք հարցաքանակ . կամ թէ ըսենք փորձառութեան տակ ձգել զհոգին

զանազան պարագայից մէջ, և իրարմէ
տարբեր ազդեցութեանց ժամանակ նոյն
գործողութիւններն կրկնել տալ. որպէս
զի կարենանք որոշել՝ տեղւոյ, ժամանակի
և կրթութեան վերաբերեալ զանազան
պարագայներն և հազարումէկ պատահա-
կան դէպքերն՝ որ բարուց նկարչի մի կը
վերաբերին, և ընտրենք առնունք հոգւոյ
այն հաստատ հանգամանքն միայն՝ որ
մարդկային բնութեան իսկական են և գի-
տութեան սահմանին կը վերաբերին. միով
բանիւ ներքին գործոց գիտութեան համար
փորձառոշիւն ընել գիտնալու է: Բայց զննել
գիտնալու բաւական չէ. մարդ քաջութիւն
ունենալու է հաստատեալ իրաց մէջ ե-
ղածն միայն տեսանել, և այնպիսի ներա-
ծոշիւններ հանել անոնցմէ որ ճշմարտա-
պէս կելլեն, և ոչ մտահաճոյ կարծեաց հե-
տելիլ:

§. Բ

ՅԱՂԱԳՍ ՇԱԽԷԻ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆՍ
ԲԱՆՍՎԱՐՈՒԹԵԱՆ

Բանախարոշրեան գիտութիւնք կըսուին
անոնք որոց ծագումն և գլխաւոր առար-
կայն ոչ գործք են և ոչ անոնց օրէնքն,
այլ բանի յղացմունքն և անոնցմէ առաջ
եկած հետեւութիւններն: — Ասոնց մէջ
գլխաւորներն են՝ բանախօսոշիւնն որ մի-

անգամայն տեսութիւն և գործադրութիւն է բանավարութեան . վերացեալ գիտութիւնք՝ որպէս բնագանցութիւնն հակառակեալ կամ հակաբանութիւնն այսինքն գիտութիւն էակաց , և շարիաբանական գիտութիւնք՝ որ մասնաւոր անուամբ քիչ գիտութիւնք կը սուին՝ իրենց հետեանաց ճշդութեանն համար . — Հոգևիտութեան բանաւորական մասն , այսինքն այն մասն որ հոգւոյ բնութեան վերայ կը խօսի , և այլ և այլ մասունք զանազան գիտութեանց :

Բանավարական գիտութեանց մէջ կը գործածուի վերլուծութիւնն և շարադասութիւնն , ինչպէս զննողութեան գիտութեանց մէջ , և ընդհանրապէս շաւղի այլ և այլ հնարքն փոքր ՚ի շատէ այս երկու կարգ գիտութեանց մէջ ալ կը գործածուին : Բայց ինչպէս կան շատ օժանդակ հետք շաւղի որ մասնաւորապէս զննողական գիտութեանց համար կը բանին , այսպէս ալ բանավարական գիտութիւնք իրենց սեպհական հնարքն և եղանակներն ունին , որ են սահման , բաժանումն , առածք , ապացոյցութիւն , արտածութիւն և շարաբանութիւն :

Սակայն զննողական գիտութեանց վերաբերեալ հնարք ալ՝ բանավարական գիտութեանց մէջ կը գործածուին . օրինակի համար՝ թէպէտ և ներածութեան հիմն ՚ի փորձոյ ստացեալ ծանօթութիւններն են , սակայն ինքն իրեն բանաշարական գործողութիւն մի է . որովհետեւ միտքն հանգի-

տոռքիւն կը գտնէ իր համեմատած գաղա-
փարաց մէջ, որպէս և իր զննած իրաց
կամ գործոց մէջ: — Դարձեալ ամէն մարդ
գիտէ թէ կան ևս բանավարութիւնք ևն-
քաղատակակնք: Իրաւ չափաբերութեան
մէջ նիւթն ՚ի վերացեալն կը մբռնենք, կամ
ըսենք՝ նիւթն կը վերացընեմք. բայց առաջ
զննողութեան և փորձառութեան ձեռք մար-
մնոց ձեն և հաստատուն ինչ ըլլալն ճանչ-
նալէն ետև կը վերացընեմք:

§. Գ

ՅԱՂԱԳՍ ՇԱԻՂԻ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆՍ ԽԱՌՆ
ԲՆՈՒԹԵԱՄԲ

Շատ գիտութիւնք կան որ ոչ բոլորովին
զննողութեան գիտութիւնք են, և ոչ բա-
նավարութեան, այլ երկուքին ալ կը մաս-
նակցին: Տարբեր ըլլալով թէ այն գիտու-
թիւններէ որոց առարկայն նիւթեղէն բը-
նութիւնն է, և թէ անոնցմէ որոց առար-
կայն մեր մտաց պարզ յղացմունքն են,
ասոնց ալ գլխաւոր վախճանն է ծանօթու-
թիւն գործոց և օրինաց ոգևոյն քննութեան,
զորս սովորութիւն եղած է կոչել գիտու-
թիւն քարոյակակն: — Արոց գլխաւորներն
են հոգևիտութիւն, քոչն քարոյափօտութիւն
կամ գիտութիւն պարտուց, իրաւագիտու-
թիւն բնական կամ դրական, քաղաքագի-
տութիւն կամ գիտութիւն տեսչութեան հա-

սարակաց, և պատմութիւն կամ վէպք և
բացատրութիւն անցից ազգաց :

Այս գիտութեանց մէջ գործերն կը
քննենք և օրէնքն կը հաւաստենք գրեթէ
նոյն կերպով որ ինչ 'ի բնական գիտու-
թիւնս՝ բաց 'ի քանի մի յարակից զանա-
զանութենէ : Ապա ուրեմն ասոնց ալ չա-
փով մի կը յարմարին զնկողոչքեան, փորձ-
առոչքեան, դասառոչքեան և ներածոչքեան
չաւիղքն : Եւ միանգամայն 'ի սկզբանց
հետեւութիւններ կը հանեմք՝ նոյն կեր-
պով և շատ անգամ նոյն ճշդութեամբ՝ ինչ
որ կը հանեմք 'ի ճիշդ անուանեալ գիտու-
թիւնս : Բարոյական հայեցուածներ կան
այնչափ բացայայտ ապացուցեալ՝ որպէս
չափաբերականքն . և բարոյական առածք
այնչափ պայծառք որպէս երկրաչափա-
կանքն . օրինակի համար՝ Մի առնել այրու
զայն ինչ զոր անիրաւոչքիւն համարիմք թե
այլք արասցնե մեզ զնոյն . առածն այնչափ
բացայայտ է որպէս այս թէ՛ Ոշիտ գիծն
կարձագոյնն է 'ի մեջ երկոչ կիտից : Ապա
բարոյական գիտութեանց մէջ ալ կրնան
գործածուիլ առածք, սահմանք, ապացոչքոչ-
քիւնք և շարարանոչքիւնք : Ըսածներէս կը
տեսնուի թէ շաւղի օժանդակ հնարից մէկն
ալ բացարձակ շտիրեր աս տեսակ գիտու-
թեանց մէջ, այլ աւելի խառն շաւղի մի
գործածելու է :

Խառն բնութեամբ գիտութեանց մէջ
կան ոմանք որ բնականապէս երկու ճիւղ

կը բաժնուին , և գրեթէ երկու որիչ գիտութիւնք կը կազմեն՝ թէպէտ և մէջերնին ներքին կապակցութիւն մի ունին . որոց մին զննողութեան գիտութեանց կը վերաբերի , և միւսն բանավարական գիտութեանց . այսպէս է ահա հոգեխօսութիւն . ասոր համար է որ փորձառական հոգեխօսութեան շաշիկն վերայ՝ զննողութեան գիտութեանց մէջ խօսեցանք , իսկ բանաւարական հոգեխօսութիւնն բանավարական գիտութեանց մէջ դրինք :

Իսկ Բարոյախօսութեան մէջ , օրինակ իմն , բարոյական գործոց ուսումն միշտ կը միանայ բարոյականի կարգաց և օրինաց բանաւորական գործադրութեան հետ : Այսպէս է նաև ուրիշ խառն բնութեամբ գիտութեանց համար ալ :

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՇԱԻՂԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆ

Բարոյական գիտութեանց մէջ պատմութիւնն մասնաւոր քննութեան կը կարօտի շաւղին կատմամբ : Պատմութիւնն հաստատեալ է ՚ի վերայ զօրոքեան վկայութեան մարդկան . արդ մարդկան վկայութիւնն պէտք է յանձին բերել կնիքս ինչ և հարկաւոր պայմաններն ունենալ , զորս կանոններով կը հաստատէ քննարանութիւնն պատմական , և որոց վերայ պիտի խօսինք յետագայ յօդուածներով :

Ա.

ԶՕՐՈՒԹԻՒՆ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ

Մեր զգայարանաց վկայութեամբ շատ մի գործոց ստոյգ ծանօթութիւնն կուենանք՝ որ մեր հոգիէն դուրս են, և անոնց յիշատակութիւնն կը պահեմք յիշողութեան ձեռքով. բայց կան շատ մի արտաքին գործք՝ զորս չենք կրնար ուղղակի և անմիջապէս մեզմէ հաւատաւել, ասոնք այնպիսի գործեր են՝ որոց մեք վկայ եղած չեմք: Այսպիսի գործերս մեզ կը ծանօթանան մեր նմանեաց վկայութեամբն. արդերբ այս վկայութիւնս յանձին բերէ կնիքս ինչ և ունի զպայմանս ինչ կարեորս՝ մեր բնութիւնն յորդորէ զմեզ հաւատաւ և այսոցիկ այնու հաստատութեամբ՝ որով որ կը հաւտանք վկայութեան մերոցս կարողութեանց:

Տղայութեան հասակին մէջ մեր նմանեաց վկայութիւնն բացարձակ հարկաւոր է մեզ՝ մեր թէ բնական և թէ մտաւորական կենաց պահպանութեանն ու զարգացմանն համար: Մեր նմանեաց վկայութեան հաւտաւով է՝ որ մեզ հարկաւոր եղած սնունդն կ'որոշենք, մեր ծնողքն կը ճանչնանք, և լեզուի բառերուն զօրութիւնն կը սորվինք, և այլն: — Դարձեալ բոլոր կենաց ընթացից մէջ նոյն միջոցով

կը ստանաւք շատ մի իրաց ծանօթութիւնն
թէ մեզ ժամանակակից ըլլան և թէ մեզ
մէ առաջ :

Վկայութիւն մարդկան ըսելով ընդհան-
րապէս կը հասկըցուի միաձայնութիւնն քաղ-
մաց որ վկայեն զիմեք : Իսկ արդ այս վը-
կայութիւնս երկու ինչ բովանդակէ՝ գործն
պատմեալ և վկայքն պատմողք : Գործք
են ժամանակակիցք կամ անցեալք, հրապա-
րակականք կամ առտեիք, կարևորք կամ ան-
կարևորք, պայծառք կամ մրիք, բնականք
կամ գերբնականք : Վկայքն են ականատեալք
կամ ականջայտք՝ որոց երկուքն ալ կրնան
ըլլալ պատմականք : Պատմիչք կարեն լի-
նել ժամանակակիցք կամ յետագայք :

Սովորաբար մարդկային վկայութեան
քանի մի պայմաններ կը դրուին որք հար-
կաւոր սեպուած են վկայութիւնն ամենայն
կերպով անսխալ ըլլալը ցուցընելու հա-
մար . թէպէտ և կրնայ ըլլալ որ այս ամէն
պայմաններս միատեղ չունեցող վկայու-
թիւն մի ալ զմեզ ճշմարտութեան մի հաս-
ցընէ որ փոքր 'ի շատէ հաւանականութիւն
ունենայ : — Այս ըսած պայմաններս են .
Ս . Որ աւանդուածն կարևոր գործք ըլլայ .
Բ . Որ հաստատեալ ըլլայ 'ի քաղմարիչ վը-
կայից որք չկարիցեն խաբիչ և խաբել :

ԱՌՍԶԱՐԿՈՒԹԻՒՆ . — Վկայութիւնն մարդ-
կան երբ ոչնի զկարևոր պայմանսն՝ պատճառ
է ստորգործեալ :

Ապացոյց . Շատ անգամ մեծ և կարևոր

գործեր առաջի բազում վկայից կ'ըլլան ,
օրինակի համար՝ պատերազմունք , յեղա-
փոխութիւնք պետութեանց , և այլն : Իսկ
արդ բազմութիւն վկայից այս տեսակ գոր-
ծոց մէջ ոչ կրնան խաբուիլ և ոչ կրնան
խաբել :

Ս . Անկարելի է որ բազմութիւն վկայից
կարևոր գործոյ մի մէջ կարենան խա-
բուիլ : Աս բանս կարելի ըլլալու համար՝
հարկ է ըսենք թէ այդ վկայք կարևոր
գործին ամենայն մտադրութիւն ընելով
հանդերձ՝ կարծեր են տեսնել՝ զոր ոչ տե-
սանէին , և լսել զոր ոչ լսէին , և այլն : Իսկ
արդ այս բանս մտաց հակառակ է . ապա
թէ ոչ պէտք էր ենթադրել թէ բոլոր այն
վկայք մէկէն ցնորեր են՝ որ մարդկային
բնութեան օրինաց հակառակ է : Ապա ու-
րեմն Ս . Չենք կրնար կարծել թէ բազմու-
թիւն վկայից կարենայ խաբուիլ կարևոր
գործոյ մի վերայ :

Բ . Անկարելի է որ բազմութիւն վկայից
կարևոր գործոյ մի մէջ կարենան խաբել :
Վասն զի աս բանիս համար անոնք պէտք
է որ միաբանին սուտ վկայութիւն մի տա-
լու համար : Իսկ արդ կարևոր գործոյ մի
մէջ այսպիսի միաբանութիւն անկարելի
է . վասն զի՝ բաց ասկէց որ հարկ կ'ըլլար
հեղձուցանել ՚ի մարդն այն զգացումն որ
ունի հաղորդելու իր ժամանակակցացն և
յետագայից եղած կարևոր գործերն , յայտ-
նի է որ բազմութեան մէջ իւրաքանչիւ-

րոյ բարբն ու բնութիւնն տարբեր կըլլան ,
ինչպէս նաև կիրք նոցա և նախապաշար-
մունք , հանճար և սովորոյթք , և այլն : Մե-
ծամեծ դիպաց մէջ գրեթէ միշտ հակառա-
կամարտ շահք իրարու դէմ կելնեն , որ-
պիսի են յեղափոխութեանց և ազգ ազգի
դէմ կռուելու ատեն : Արդ այս ամէն զա-
նազանութիւններս ենթադրելով՝ անկա-
րելի է որ հասարակաց պատճառ մի զա-
նոնք միացընէ սուտ վկայութիւն մի տա-
լու . վասն զի ինչ որ ոմանց հաճոյ է՝ այ-
լոց անհաճոյ կըլլայ , և եթէ ոմանք ուզեն
ստութիւնն հաստատել՝ այլք անոնց դէմ
կը բողոքեն : Ապա ուրեմն Բ . Բազմութիւն
վկայից չեն կրնար խաբել կարևոր գործոյ
մի մէջ : Վերը ցցուցինք թէ սոյն իրաց մէջ
իրենք ալ խաբուած չեն կրնար ըլլալ . ա-
պա՝ Վ կայութիւն մարդկան որ ունի զկա-
րեւոր պայմանս՝ պատճառ է ստուգու-
թեան :

Այս ապացուցիս հաստատութեան հա-
մար պատմութեան քանի մի երևելի անց-
քըն յիշենք , որով մարդ կը համոզուի թէ
չառ մի անցքեր կան՝ որոց վերայ տարա-
կուսելն անհնարին է , և նոյնչափ ստոյգ
են որչափ շափաբերական ճշմարտութիւն-
ներն . օրինակի համար՝ Յուլիոս Աեսար
անուամբ մարդու մի գոյութիւնն և մե-
ծամեծ աշխարհակալութիւններն , Վար-
դանանց պատերազմն , Մեծին Կարողոսի
թագաւորութիւնն , Լուգովիկոս ԺԳի սէ-

րութիւնն, յԶ Լուդովիկոսի դատապարտութիւնն ու մահն, և Փրանկիոյ հասարակապետութեան և կայսերութեան անցքերն, և այլն :

Մեծամեծ անցից և հռչակաւոր տրանց վերայ եղած վկայութիւնք կերպով մի կաւելնան և կը նորոգուին ասով՝ որ շատ մի անցքեր ալ կան որ առջիններովս կը մեկնուին. օրինակի համար՝ հռովմէական հասարակապետութեան վերնալն և կայսերաց յաջորդութիւնն Յուլիոս Կեսարու անուան հետ կապուած է. հեթանոսութեան քրիստոնէական կրօնից դառնալն Յիսուսի Քրիստոսի անուան հետ միացեալ է :

Առարկ Ե. Հաւանականութեանց գումարն որչափ ալ շատ ըլլայ՝ դարձեալ միշտ հաւանականութիւն է. իսկ մարդկանց վրկայութիւնն հաւանականութեան գումար մի է, այսինքն սուանձնական վկայութեանց միութիւն մի՝ որուն իւրաքանչիւրն մէկ հաւանականութիւն յառաջ կը բերէ : Ապա ուրեմն մարդկային վկայութեան ճշմարտութիւնն պարզապէս հաւանական է :

Պիս. Մերժի փոքրագոյնն. վասն զի բազմութեան վկայութիւնն իրեն ապացուցութեան զօրութեանը նկատմամբ՝ պէտք չէ իր իր աղբերաց զատ զատ ըլլալն մտածել, այլ որպէս բարոյական ամբողջութիւն մի կազմող՝ որուն աւելի զօրութիւն մի կուտան հակառակամարտ կիրք, շահք, նախապաշարմունք, և այլն. որ այս կնիքս

անհատական վկայութեան վերայ չգրտնուիր, ուսկից կը հետևի որ բազմութեան վկայութիւնն իրաց կարևորութեան հետ միանալով՝ պարզ հաւանականութեանց գումար մի չէ:

Թախանձք. Ճիշդ կերպով չկրնար որոշուիլ թէ որչափ պիտի ըլլան վկայութիւնք՝ որով հաւանականութիւնն ստուգութեան դառնայ. ապա ուրեմն բազմաց իսկ վկայութիւնն՝ հաւանականութեան պարզ գումար մի կըլլայ:

Պիս. Մերժի հետևութիւնն. վասն զի իրաւամբ ստուգութեան հասած կը համարինք և ոչ հաւանականութեան՝ երբ իրի մի ճշմարտութեան այնպէս հաստատութեամբ կը հաւտամք՝ որ տարակուսիլն անհնարին է, և երբ այս ճշմարտութեան երկբայողն յիմար կը սեպուի: Իսկ արդկան շատ անցքեր՝ որոց ճշմարտութեանն այնպէս հաստատութեամբ կը հաւտամք՝ առանց որոշ կերպով ճշգեղ կարենալու՝ թէ որչափ անհատ վկայք հարկաւոր են այսպիսի հաւանութիւն յառաջ բերելու: Այսպէս են վերի յիշուած անցքերն՝ զոր բերինք՝ ի հաստատութիւն ապացուցին: Տարակոյս չկայ որ այսպիսի անցից համար ևս՝ չենք կրնար որոշել թէ որչափ վկայք հարկաւոր են ստուգութիւն ըլլալու համար: Սակայն գիտենք բարոյական հանրական չափով մի՝ որ այսպիսի անցից ծանօթութիւնն հաստատեալ է ի վերայ վը-

կայութեան որ աներկբայապէս յանձին
բերէ զկնիք անսխալութեան :

Վկայութիւնն հաւանականութիւնս եւ
եթ յառաջ բերէ ըսելէն՝ շատ անտեղի
հետեւութիւններ կելլեն . օրինակի համար՝
սօլսեցւոյ մի համար որ ամենեին ճամ-
բորդութիւն ըրած չէ յԵւրոպա՝ անստոյգ
և միայն հաւական բաներ պիտի ըլլային
Փրանկիոյ , Անգլիոյ , Իտալիոյ և այլոց
թագաւորութեանց Եւրոպիոյ գոյութիւնն .
որ այնչափ արտառոց կարծիք է՝ որ եթէ
մէկն ուզենայ պաշտպանել՝ ամէնքն զանի-
կայ խենդի տեղ կը դնեն :

Ապա ուրեմն վկայից թիւն որոշել չկըր-
նալէս . . . , իրաւունք չունինք հետեւընե-
լութէ , և այլն :

Առարկ Բ . Ստուգութիւն մի՝ որ անցից
ժամանակէն որչափ հեռանայ՝ այնչափ կը
տկարանայ՝ չկրնար իրական և բուն ստու-
գութիւն համարուիլ : Իսկ արդ անցեալ
դիպաց տրուած ստուգութիւնն երթալով
կը տկարանայ՝ քանի որ այն եղած ժամա-
նակէն կը հեռանանք . օրինակի աղադաւ՝
աւելի ապահով ենք մեր օրերն եղած ան-
ցից վերայ՝ քան թէ անոնց զորս լսեր ենք ,
և աւելի ապահովք ենք ժամանակակից և
ականատես վկայներէ լսածնուս՝ քան թէ
անոնց որ յետագայ վկայք պատուեր են :
Ապա ուրեմն անցեալ իրաց տրուած ստու-
գութիւնն՝ չկրնար իրական և բուն ստու-
գութիւն սեպուիլ :

Պիս . Մերժի փոքրագոյնն . վասն զի
այնպիսի աշխարհաքարող և կարևոր անց-
քեր կան՝ որոց ստուգութիւնն անեղծ կը
հասնի մինչև ցհեռաւոր սերունդս , որով-
հետև այնչափ դարուց յաջորդութեան
մէջ ժամանակ մի չենք կրնար ցուցընել
յորում այս տեսակ անցքերս աղաւաղած
ըլլան : Եթէ այսպիսի աղաւաղում մի կա-
րելի ըլլալուն հաւտալու պատճառ մի ու-
նենայինք այն պիտի ըլլար որ՝ ստութիւնն
աւելի դիւրաւ կրնար մտնել յետագայ
դարուց մէջ . քան թէ ժամանակակից դա-
րուն մէջ : Իսկ արդ այս պատճառս չկայ
այն անցից համար՝ որ հարկաւոր պայման-
ներն ունին : Վասն զի մարդկանց սե-
րունդն՝ որոց յաջորդութեամբ մարդկային
ընկերութիւնն կը պահուի , յանկարծակի
և միանգամայն չանհետանար աշխարհիս
երեսէն , այլ անզգալի կերպով իրարու կը
յաջորդէ . այնպէս որ ՚ի նմին ժամանակի
չատ սերունդներ մէկ տեղ կապրին հարբ ,
որդիք և թոռունք : Եթէ որոշեալ ժամա-
նակի մի մէջ ապրող գերդաստաններն
մէկ տեղ բերենք՝ որովք կը ձևանայ մարդ-
կային ընկերութիւնն՝ կը տեսնենք որ մի
և նոյն ժամանակի մէջ երկրիս վերայ ա-
մէն հասակէ մարդ կը գտնուի , և այս
զանազան հասակաց մշտնջենաւոր խառ-
նուրդն իրարու հետ զօդաւորեալ՝ չեն թո-
ղուր որ հռչակաւոր անցից վերայ նենգու-
թիւն մի ըլլայ . և եթէ նենգութիւնն ու-

զենար սողոսկիլ շատ մի մարդիկ ատիկայ
կիմանային և կը բողոքէին՝ գլխաւորապէս
այս պատճառիս վերայ հիմնեալ՝ որ իրենց
հայրերէն այնպիսի բան մի չեն լսած : Տա-
րիքի զանազանութենէն զատ՝ գիտենք ալ
որ նոյն իսկ հասակակից մարդիկ զանա-
զան են բարուք, կրիւք և շահուք, որով
ճշմարտութեան դէմ դաւաճանութիւնն
անկարելի կըլլայ :

Միով բանիւ այնչափ համոզեալ ենք
թէ հռչակաւոր իրաց ստուգութիւնն դա-
րէ դար անցնելով չպակսիր՝ որ խելացի
մարդ մի հաւասարապէս չկրնար երկբայիւ
ոչ Ալեքսանդրի և Ալգոստոսի գոյու-
թեանն և իրենց թագաւորութեան գլխա-
ւոր անցիցն, և ոչ Լուդովիկոսի ԺԳի
թագաւորութեանն. և ասոր ալ այնչափ
կը հաւտայ՝ որչափ իրեն ժամանակակից
անցիցն : — Մանաւանդ թէ ըստ իմիք
ստուգութիւնն ժամանակ անցնելով ա-
ւելի կը հաստատուի, աւելի երկայն ժա-
մանակ առարկութեանց և քննաբանու-
թեանց ենթակայ ըլլալովն :

Առարկ . Գ . Ամէն ժամանակ մարդկային
վկայութեան վերայ հիմնեալ շատ բանե-
րու հաւտացեր են մարդիկ իբրև իրական
ինչ, որոց առասպել ըլլալն ետքը իմա-
ցուեր է . այսպէս են դիցաբանութեան
դիւցազանց վերայ եղած կեղծիքն, կամ
անհարազատ վէպք՝ որ ամէն ազգաց մէջ
կը գտնուին, մանաւանդ միջին դարու վի-

պասանութիւնք : Ասլա ուրեմն մարդկային վկայութեանց մէջ ճշմարիտն 'ի ստոյ որոշելն անկարելի է . հետեւապէս այս վկայութիւնս ստուգութեան պատճառ մի չկըրնար համարուիլ :

Պիս . Չանազանի նախորդն . Ամէն ժամանակ մարդկային վկայութեան վերայ հիմնեալ որ չունի զկարևոր պայմանսն շատ բաներու հաւտացեր են մարդիկ՝ — ընդունիմ . իսկ մարդկային վկայութեան վերայ հիմնեալ որ ունի զկարևոր պայմանսն — ուրանամ :

Ճշմարիտ է որ ամէն ժամանակ մարդկային վկայութեան վերայ հիմնեալ շատ բաներու հաւտացեր են մարդիկ՝ որոց առասպել ըլլալն յետոյ իմացուեր է . բայց այն վկայութիւնն որուն վերայ հիմնեալ էին՝ կարևոր պայմաններն չունէր , ապա ուրեմն բաւական պատճառ չկար հաւատարնձայելու , հետեւապէս առարկութիւնս չտկարացներ անոնց կողմն՝ որ կը հաւտան մարդկային վկայութեան որ ունի զկարևոր պայմանսն : Առարկութեան մէջ օրինակ բերուած անցքն՝ կարևոր պայմաններն չունին . վասն զի կամ կարևոր անցք չեն , կամ եթէ կարևորք են՝ զանոնք հաստատող արժանահաւատ վկայք կը պակսին , և բաւական չեն խիստ քննադատութիւն մի յագեցընելու . նա և անոնց մէջ այնպիսի իրեր ալ կան՝ որ վաւերական ճանչցուած անցից ալ բոլորովին

հակառակ են, և քննաբանութիւնն զանոնք արդէն սուտ հանած մերժած է :

Այս պատասխանւոյս մէջ բաւական սեպեցինք քանի մի պարզաբանութեան սկզբունք միայն դնել, և ոչ մանրամասն պրպըտել խնդիրն՝ որ շատ երկայն կըլլար և մեր վախճանէն դուրս :

ԳԵՐԲՆԱԿԱՆ ԻՐՔ . Մարդկան վկայութիւնն հաւասարապէս ստուգէ և զիրս գերբնական սրպէս և զբնականս . վասն զի թէպէտ և այս երկու տեսակ իրք զանազան են ըստ պատճառին՝ առջիններն ՚ի գերբնական պատճառէ յառաջ գալով, և վերջիններն ՚ի բնական պատճառէ, սակայն որպէս իրք և անցք՝ հաւասարապէս ներքոյ անկանին վկայութեան, և վկայքն եթէ ունին զկարեւոր պայմանսն՝ չկարեն ոչ խաբիլ և ոչ խաբել յերկոսին իսկ : — Ա . Վկայք չկարեն խաբիլ ՚ի գերբնական իրս՝ որպէս և ՚ի բնականս . վասն զի գերբնական անցք ալ հաւասարապէս ներքոյ անկանին զգայութեանց որպէս և բնականք . օրինակի համար՝ խաչի մի երևումն յօդս առաջի բաղմութեան՝ այնչափ դիւրին է հաւաստելն որպէս անցք՝ որպէս զայլ տեսանելի երևոյթս : — Բ . Վկայք չկարեն խաբել ՚ի գերբնական իրս՝ որպէս և ՚ի բնականս . վասն զի գերբնական իրաց վերայ ալ այն ամէն պատճառներն կրնանք տալ ինչ որ տուինք բնական իրաց . այսինքն մարդու բնական յօժա-

րութիւնն հաղորդելու յետագայից զկարեւոր անցս՝ որպէս և եղեն . և զանազանութիւնն բարուց , կրից և շահուց վկայից որ աւանդինն զնոսա , և այլն :

Բ .

ՔՆՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ

Նախընթաց յօդուածին մէջ ցցուցինք որ մարդկային վկայութիւնն երբ կարևոր պայմաններն ունի՝ անսխալ գործի մի է ճշմարտութեան . բայց այս պայմաններուն վերայ ընդհանրապէս և հարևանցի կերպով մի անցանք՝ առանց յիշելու վկայութեան զանազան ձևերն : Բայց որոնք որ պատմութեան կանոնաւոր ընթացք մի կուզեն ընել՝ անոնց համար քանի մի կշռադատուի սկզբունք կան՝ որ կանոնք պատմական քննարանութեան կըսուին՝ զորս շատ հարկաւոր է ՚ի միտ առնուլ : Այս կանոններէս ոմանք մարդկային վկայութեան ամէն տեսակացն ալ կը յարմարին , իսկ այլք մասնաւորապէս վկայութեան իւրաքանչիւր տեսակին կամ ձևոյն :

Մարդկան վկայութիւնն երեք որոշ ձև կուենենայ՝ որ են աշակերտքիչնն քննարանացի , գրութիւն որ մասնաւոր կերպով պատմութիւն կըսուի և յիշատակարանք :

ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ . — Աւանդութիւնն բերանացի որ տուտչութիւնն ալ կըսուի այն է

որ անցք ևղեսայք անդարտին 'ի ժամանակե եղև-
րոշրեանն առանց ընդհարտոշրեան վկայոշ-
րեանց բերնե բերան անցաննե և հարաննե
միևչև առ մեզ : Բովանդակ աւանդութեան
մէջ որոշելու է անցից ևիշրե և անոնց եա-
կան և կերպաշոր հանգամանքն՝ յայն բերե և
'ի պատահական հանգամանաց՝ որոնք շատ
անգամ 'ի պատկերողութենէ մարդկան
այլայլեալ են :

ՊՍՏՄՈՒԹԻՒՆ . — Պատմութիւն կըսուի
մասնաւորապէս աշակերտքիչնն գրեալ թէ
ձեռագիր թէ տպագիր , որ անցից միտքիչն
մի է շտկասպեալ ընդ իրեարս շարայարեալ
վիպասանոշրեանք :

Գլխաւոր աղբիւրք պատմութեան են ինք-
նագիր և վաշերական րոշորք որպէս օրէնք
և կոնդակք , հրովարտակք թագաւորաց ,
յայտարարութիւնք պատերազմի , դաշնա-
գիրք հաշտութեան կամ զինակցութեան ,
պատճէնք նախարարաց պետութեան և
սպարապետաց , դատակնիք ատենից , և
հրապարակական և օրինական մուրհակք
առանձնականաց , և այլն : Ասոնք ինքեա-
գիր աղբիւրք են պատմութեան , և պատմա-
կան ստուգութեան ապահովագոյն հի-
մունք , և զորս շատ անգամ պատմագիրք
իրենց գործոյն ետեն կ'աւելցընեն ստու-
գիչ պատճէնք անունով :

Պատմութեան վկայութիւնն երեք կա-
րեւոր կնիք ունի՝ որ իւր անսխալութեան
ալ հիմունքն են , այսինքն հարագատոշրիչն ,

անեղծութիւնն և ճշմարտախօսութիւնն : — Պատմութեան հարազատութիւնն այն է որ ինչ մարտնասգրի և որ ժամանակի որ կրն՝ ծայրոյն յիրաւի այնպէս ըլլայ : — Անեղծութիւնն այն է որ ամենևին այրայրած կամ աղաւաղեալ չըլլայ . պատմութիւնն աղաւաղեալ կրնայ ըլլայ ընդհանրապէս՝ բնագրին մէջ բառ մի կամ խօսք մի խառնելով . կրճատմամբ՝ պակսեցընելով , փոխադրութեամբ և յաւելումամբ : — Ճշմարտախօսութիւնն այն է որ անցք յիրաւի այնպէս եղած ըլլան ինչպէս որ պատմուած են : Պատմութեան համար ճշմարտախօսութիւնն կը սուրբ , պատմչի համար ճշմարտաբանութիւնն . երկուքին մէկէն ճշմարտապատու կամ ստուգապատու :

ՅԻՇՍՏՍԿԱՐԱՆՔ . — Յիշատակարան կը սուրին այն ամենայն եղանակք փոխանցելոյ զիրա անցեալս՝ որ ոչ առանդոտիւն են և ոչ պատմութիւն . կամ ընդհանրապէս նշան ինն հրապարակական յարմար ՚ի փոխանցելոյ յետևոց զյիշատակ անցից անցելոց :

Տարակոյս չկայ որ քաղականութեամբ սակաւ բարգաւաճեալ ազգաց մէջ ալ յառաջ քան զգործածութիւն գրոյ՝ յիշատակարաններ եղած են՝ անցից յիշատակն պահելու համար . ասոնք ուրիշ բան չէին՝ բայց եթէ հողակոյտք , կարկառք քարանց , և այլ այսպիսիք . բայց յետոյ յիշատակարանաց արուեստն զարգացաւ , և այսօրուան օրս շատ տեսակներ կը համարուին . օրինակի համար՝ դրամք , արձանագիրք ,

անդրիք , արձանք կամ սիւնք կամ կոթողք , քանդակք , շիրիւք , մահարձանք , յաղթական կամարք , բրգունք , նկարք , դրօշեալք , սեղանք , և այլն : Բայց այս յիշատակարաններէս զատ՝ զորս քոչն կամ ոչոյսկի յիշատակարանս կրնամք կոչել՝ որովհետև անմիջապէս եղեալ անցք մի յիշեցընելու համար եղած են , կան նաև անոչոյսկի յիշատակարանք , որ են որ և իցե՛ն անուագործք մարդոյ որ անցից ինչ նշան կրրնան սեպոշի , թէպէտ և շինուած ժամանակ այս դիտումս չունէին . այսպէս են ամենայն արուեստից նիւթք , շինուածք ազգի ազգի , որպէս կամուրջք , ուղիք , ջրանցք , և այլն . ակերակք շինուածոց և մնացորդք կահուց կարասեաց՝ վկայք են մեզ յառաջադիմութեան արուեստից , ճարտարութեանց , և զանազան սովորութեանց դարուց անցելոց :

Պատմութիւնն կազմող վկայութեանց կշռադատութեան արոշեստն՝ քննարկութիւնն պատմական կըսուի , և ասոր մէջ պատմութիւնըսելով կը հասկըցուի՝ բոլոր մարդկային վկայութեանց բովանդակութիւնն ընդհանրապէս . և ուրիշ արուեստից պէս իր կանոններն ունի՝ յորոց ոմանք հանրականք են և այլք մասնականք :

Հանրական կանոնք պատմական
քննարկութեան .

Մարդկանց վկայութիւնն՝ ստուգութիւն
կամ գոնէ հզօր հաւանականութիւն յա-
ռաջ բերելու համար՝ թէ եղեալ իրաց կող-
մանէ և թէ ՚ի կողմանէ վկայից , հարկաւոր
պայմաններն ունենալու է :

Կանոն Ե . Հարկ է որ այն անցք կարեւո-
րոշքիւն ունեցած ըլլան՝ վկայից մտադրու-
թիւնն իրաւցընէ գրաւելու համար :

Բ . Անցքն այնպէս բաներ ըլլան՝ որ զա-
նոնք զննելու շատ մեծ դժուարութիւն չու-
նենայ :

Գ . Սովորաբար կը պահանջուի՝ որ վկայք
բազմաքիւ ըլլան , որպէս զի մոլորութեան
և նենգութեան պատրանքէն ազատ ու-
ու ապահով ըլլանք՝ անոնց բարուց , շա-
հուց և նախապաշարմանց զանազանու-
թեամբն : Բայց կան դէպք յորս ասկառա-
քիւ վկայք ալ բաւական են . այսինքն ա .
Երբ կրնայ հաստատուիլ որ վկայից հաս-
տատածն իրենց շահուն հակառակ էր , կամ
անկէ շահ մի չունէին : Խ . Եթէ այնպիսի
անձանց առջև վկայեր են՝ որ շահ մի ու-
նենալով անոնց ըսածը սուտ հանելէն , և
վախ մ'ալ չունենալով ընելու՝ սակայն
սուտ չեն համած :

Դ . Ընդհանրապէս ժամանակակից վկայ-
ներն յետագայներէն աւելի վեր բունուե-

լու է . նա ևս մէկ ժամանակակիցն շատ
յետագայներէն . որովհետեւ յետագայ վը-
կայութիւնք՝ ժամանակակիցաց զօրութիւնն
չեն կրնար ունենալ՝ որ անմիջապէս յաղ-
բերէ կը բղխեն : Ժամանակակիցք կը-
սուին մարդու մի կենաց և անկէց քանի
մի տարի ետքն եղած միջոցի մարդիկն :

Ե . Վստահ և ապահով ըլլալու է որ վը-
կայք 'ի շահե և 'ի կոռսակցութեան շարժեալ
չեն այն քանն վկայելու :

Մասնակաւ կրնունք մասն աշակերտելու .

Կանոն Ե . Բերանացի աւանդութիւնն
հարկ է որ իր հանապազօրութեան ժա-
մանակ՝ 'ի բազմաթիւ վկայից հաստատեալ
ըլլայ , որպէս զի ազատ ըլլայ յամենայն
պատրանաց և 'ի դաւակցութեանց :

Բ . Հարկ է որ մարդ կարենայ ստուգել
աւանդութեան հանապազօրորութիւնն և մի-
օրինակորութիւնն , այսինքն թէ ամենեւին ընդ-
հատած կամ այլայլած չէ իր նիւթոյն և
կնքաւոր հանգամանաց մէջ :

Գ . Պէտք է որ մարդ կարենայ հաւաս-
տել թէ աւանդութիւնն իրաց ժամանակեւ
սկսած է . առանց այս հիմնական և էական
պայմանիս՝ աւանդութիւնն դրական ար-
ժէք մի չունի : — Սրդ աւանդութեան մի
ներկայ գոյութենէն միայն՝ չենք կրնար
հաւաստել թէ այն աւանդութիւնն իրաց

եղած ժամանակէն սկսած ըլլայ, բայց եթէ այն դիպաց համար որ ինքնին հրապարակականք են և աշխարհաքարոզք, ինչպէս են յեղափոխութիւնք պետութեանց կամ բռնութեան մէկ սոսկալի պատահար մի, և այլն. վասն զի այսպիսի դիպաց մէջ՝ նաև շատ դարերու շարայարութեան մէջ անկարելի է ժամանակ մի դնել՝ յորում այսպիսի դիպուած մի շինուած ու յարմարցուած ըլլայ. բայց միջին կարևորութիւն ունեցող դիպաց և նոյն իսկ մեծամեծ անցից յարակից հանգամանաց մէջ՝ աւանդութիւն մի այն ատեն ապահով է՝ երբ յայտնի և վաւերական նշանաւոր յիշատակարանաց վերայ հիմնեալ է և անմիջապէս յաղբերաց կը բղխէ. և այն ատեն ոչ եթէ աւանդութեանն է իշխանութիւնն այլ յիշատակարանաց որ զաւանդութիւնն հաւաստեն :

Մասնական կանոնք վասն պատմոչքեան .

Ինչպէս որ ըսինք, պատմութիւնն պիտի ըլլայ հարազատ, ակեղծ և ճշմարտաբան. այս երեք հանգամանքս հաւաստելու կանոններն ասոնք են .

Հարազատոչքիշնն հաւաստելու համար կանոն Ս. Պատմութեան և ընդհանրապէս որ և է գրուածքի մի հարազատութիւնն ճանչնալու համար՝ հարկ է հարցա-

բանել թէ ժամանակակից և թէ յետագայ
վկայութիւնս և յիշատակարանս , որպէս
զի հաւատենք թէ այն գործն միշտ և հա-
նապսազ նոյն մատենագրիև և նոյն ժամանակ-
կիև շնծայոշած է , և նոյն անուենով յիշած
են գրիչք զանազան դարուց և տեղեաց :
Ասոր համար հարազատ կը համարինք Աի-
կերոնի գրուածքն , Յուլիոսի Աեսարու յի-
շատակարանքն , Վիրգիլիոսի և Որատիո-
սի քերթուածներն , Խորենացւոյ և Եղի-
շէի պատմութիւններն , և այլն . որովհե-
տև մեզմէ առջի դարերն նոյնպէս համա-
րած են :

Բ . Հարկ է գործոյն ոճն և որոշիչ կնիքն
համեմատել նոյն մատենագրին ուրիշ գոր-
ծոց ոճին հետ . Վարրոն Պլաւտոսի ճըշ-
մարիտ կատակերգութիւններն դիւրաւ
կորոչէր նոյն քերթողին ոճին և հանճա-
րոյն վերայ ունեցած ծանօթութեամբն :

Եթէ մատենագրի մի ընծայուած գրուած-
քին ոճն բոլորովին կը զանազանի իր ու-
րիշ գրուածքէն՝ որ բուն իրենն են , այն
ատեն այն գրուածքն կասկածաշոր սեպե-
լու է : Բայց այս միայն բաւական չէ դրա-
կանապէս անհարազատ ցուցընելու և վրճ-
ուելու նոյն գրուածքն . վասն զի կրնայ ըլ-
լալ որ մի և նոյն անձն զանազան ոճ գործ-
ածէ իր գրուածոց մէջ նիւթոց և ան-
ճանց համեմատ , ևս և ուրիշ պատճառաց
համար , ինչպէս որ այսպիսի օրինակներ
պակաս չեն . այսպէս սուրբն Աւգոստի-

նոս իր ժողովրդեան համար գրած ճառերն շատ տարբեր ոճով գրած է՝ քան ինչ որ հեթանոսաց և հերետիկոսաց դէմ գրածներն :

Եթէ մատենագիր մի մէկ գործ մի միայն ունի և անոր հարազատութեան վերայ է խնդիրն՝ հարկ է համեմատել զանիկայ նոյն ժամանակի ուրիշ գրուածոց հետ ըստ հետեւեալ կանոնիս .

Գ . Գործ մի կասկածելի նշաններ ունի՝ երբ ինչ դարու մէջ գրուած որ կը համարուի՝ նոյն դարուն կնիքն չունի . կամ յետոյ ժամանակաւ սահմանուած բարուց , սովորութեանց , սահմանադրութեանց և դրութեանց յիշատակութիւններ կընէ , և այնպիսի ոճով մի գրուած է որ իրեն կարծեցեալ դարուն սեպհական չէ :

Ընդհակառակն կրնայ ըլլալ որ գործ մի թէպէտ և յիշատակուած չըլլայ՝ ի ժամանակակիցաց և ի յետագայից , սակայն պարզապէս իր ոճէն հարազատութիւնն յայտնի ըլլայ . ինչպէս որ եղած է Փեդրոսի առակաց համար , որուն ձեռագիր օրինակներն առջի անգամ գտուեցան վեշտասաներորդ դարուն մէջ . և ի մեզ՝ Յովհաննու իմաստասիրի օճնեցւոյ ընդդէմ երևութականաց ճառն :

Անկողմնորէն հաւաստելու համար

Կանոն Ս . Քննելու է թէ արդեօք ամէն մասունք իրարու հետ լաւ կապակցեալ են թէ չէ , թէ ձեռագիր և թէ տպագիր օրի-

նակներն իրարու հետ բաղդատելու է, և թէ թեթեւ զանազանութիւններ միայն ըլլան մէջերնին ոչ էական կէտերու մէջ՝ կը հետեւի թէ ըստ եռքեան եղծեալ և խանգարեալ չեն : Իրաւ այնչափ դժուար է ծանուցեալ մատենագրութեանց մէջ էական փոփոխութիւններ ընելն՝ որ անկարելի է հռչակաւոր գրուածք ինչ գտնել այնչափ այլայլեալ՝ որ զանազան օրինակներ իրարու հակառակին էական կէտերու մէջ :

Բ. Երբ գործոյ մի մէջ իր գրութեան ժամանակէն ետքի ստեղծներու անցից և անձանց յիշատակութիւններ կան՝ այն գործն ստացող և ընդհատուեալ համարելու է . նոյնպէս եթէ այնպիսի բառեր և բացատրութիւններ գտնուին մէջ՝ որ գրութեան դարէն շատ ժամանակ ետքը հնարուած են :

Ճշմարտաբանութիւնն հաւաստելու համար

Կանոն Ա. Քննելու է եթէ արդեօք պատմիչն անստոյգ և անհիմն համբաւէ՝ ի կարծ ընդոստուցեալ գրած է, թէ ականատես ըլլալով իրացն կամ յարժանահաւատ վրկայներէ լսելով . և թէ ժամանակակից չէ պատմածներուն՝ արդեօք ՚ի հաստատուն աւանդութենէ և ՚ի ստոյգ յիշատակարանաց առած է, և թէ պատմութեան ո՞ր աղբիւրներուց զիմած է, և ինքեացիք և վառերակրակ սրտակեցեալքն ընծած է թէ չէ :

Բ. Քննելու է թէ արդեօք պատմագրին գրութեան եղանակին մէջ դիւրահաւանութիւն, նախապաշարմունք և կիրք կերեին, և այն ատեն կասկածելու է՝ մանաւանդ այն նիւթոց մէջ ուր որ է իրեն սովորական նախապաշարմունքն :

Գ. Երբ մեծ և հռչակաւոր դէպքի վերայ ժամանակակից և յետագայ մատենագիրք բոլորովին կը լռեն՝ այս միայն բաւական է ցուցնելու որ յետոյ ժամանակագրուած է . օրինակի համար՝ երկոտասաներորդ դարէն ինչուան ութ և տասներորդ դար ամէն պատմագիրք կը գրեն թէ Բելիսարիոս՝ Յուստինիանոս կայսեր աչքէն անկանելով՝ կայսրն անոր աչքերն բռնել տուաւ և ամէն ստացուածքն յափըշտակեց, այնպէս որ Բելիսարիոս ստիպուեցաւ կոստանդնուպոլսոյ փողոցներուն մէջ հաց մուրանալով ապրելու : Բացայայտ է որ եթէ ճշմարիտ ըլլար այս դէպքս՝ որ վեցերորդ դարուն մէջ եղած պիտի ըլլայ, այն դարէն ինչուան երկոտասաներորդ դար՝ բոլորովին մոռացութեան մէջ թաղուած չէր կրնայ ըլլալ, զոր առջի անգամ երկոտասաներորդ դարուն մէջ կը յիշէ Յովհաննէ Զեղեա « մատենագիրն զիրկյողջադատ մտաց, որ Յովհաննու կապադովկացւոյ թշուառութիւնն՝ Բելիսարիոսի հետ շփոթեր է... Քանի որ քննաբանութիւնն պատմագիրներն սրբագրեց՝ ամենայն ողջամիտ մատենագիրք միաձայն կը

հերքեն այս առասպելախառն աւանդութիւնն ¹ » :

Ժամանակակից մատենագրաց շատերուն լռութիւնն՝ պատճառ չէ սուտ հանելու այն պատմական անցքն՝ զորս ուրիշ ժամանակակիցք կը յիշեն . մանաւանդ երբ յայտնի կը տեսնուի որ յիշատակութիւնն չընող մատենագիրք զօրաւոր պատճառներ ունէին լռելու :

Գ . Կասկածելի համարելու է այն մատենագիրն՝ որ կրճատ ու աղաւաղեալ վրկայութիւններ կը կոչէ , և անոնց իրենց ամբողջութեան մէջ ունեցած իմաստէն օտար մեկնութիւններ ու իմաստներ կուտայ : Նմանապէս կասկածելի է ո՛վ որ իր կարծեաց հակառակ աղբիւրներն կամ մասամբ կամ բոլորովին զանց կառնէ յիշելու :

Մասնական կանոնք վասն յիշատակարանաց .

Կանոն Ս . Ստուգելու է թէ արդեօք յիշատակարանք վաւերական են թէ չէ , այսինքն թէ յիրաւի այն դարուն և այն անձանց շինածն է՝ որոց կը կարծուի : Այս քննութիւնս շատ հմտութիւն և ուղղամտութիւն կը պահանջէ . հարկ է յիշատակարանաց սեպհական կնքոյն տեղեակ ըլ-

1 . Լըպոյ , Պատմութիւն արևելեան կայսերութեան , գիրք 10թ :

լալ, ճարտարապետական կարգերն զիտ-
նալ, նոյն դարուն ուրիշ շինուածոց հետ
բաղդատել, և միանգամայն նայիլ թէ
պատմութեանց վկայութեանն ալ յարմար
կուգայ թէ չէ :

Բ. Յիշատակարանի մի վաւերութիւնն
հաստատելէն ետեւ ալ եթէ արձանագրու-
թիւն մի չկայ վրան՝ շատ դժուար է ա-
նոր բացատրութիւն տալն. և սխալման
մէջ չանկանելու համար՝ հմտութեան հետ
զգուշաւոր շրջահայեցութիւն ալ ունե-
նալու է, և աւանդութիւնն ու պատմու-
թիւնն իրեն օգնական առնելու է, և երկ-
բայութիւնն բոլորովին չվերցած՝ վսիճ
կտրելու չէ :

Աւանդութիւնն, պատմութիւնն և յի-
շատակարանք զիրար կը մեկնեն ու կը
բացատրեն : Ընդհանրապէս յիշատակա-
րանք աւելի բազմութեան և ռամկի յար-
մար են. իսկ գրաւոր վկայութիւնք աւելի
ճշգրտեան և յստակութեան պայմաններն
ունին, և աւելի մանրամասն և բացայայտ
կ'իմացնեն ամէն տեսակ անցքերն, սովո-
րութիւններն ու բարքն, և այլն : Աերպով
մի աւելի դիւրաւ կը պահուին քան զյիշա-
տակարանս, որովհետեւ դիւրին է զանոնք
տեղւոջէ՝ ի տեղի փոխադրել՝ որ շատ տե-
սակ յիշատակարանաց համար կարելի չէ,
նմանապէս մի և նոյն գործին շատ դա-
ղափարներ կամ օրինակներ գտնուելուն
համար :

Պատմութեան նկատմամբ այս էական իրս ալ նշանակելու է որ մեկ պատմչի վրկայութիւնն՝ թէպէտ և ինքն անհատ մի է, քաղմարիչ վկայութեանց հաւասար է, որովհետև մատենագիրն առաջի բովանդակ ազգին կը գրէ՝ որ իրեն ժամանակակից է. և այս ազգս անշուշտ կը բողոքէր՝ եթէ անոր գրուածին մէջ նիւթոյն էական մասանց և ծանր պարագայից մէջ սխալ բան մի զրուցած ըլլար՝ կարևոր և հրապարակական անցից նկատմամբ :

Վերջապէս քննարանորեան օրէնքն որչափ ալ օգտակար են՝ բայց բան մի ալ կայ որ կանոնաց տակ չանկանիր և սակայն այս նիւթիս մէջ ամէնէն էականն ու ստոյգըն է, այսինքն քննարանից նրբամտութիւն և անկեղծութիւն : Դարձեալ պէտք չէ մտնալ որ շատ հին անցքեր կան՝ այնպիսի պատկառելի վկայութիւններով հաստատեալ՝ որոց համար քննարանութեան կանոններն ալ գործածելու ամէնևին կարօտութիւն չկայ :

Ք Լ Ո Ւ Խ Ե .

ՅԱՂԱԳՍ ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆՑ

Շաւիղն է ճամբայ զոր մարդուս միտքն
կը բռնէ ճշմարտութեան ստոյգ ծանօթու-
թեան հասնելու համար . այսինքն այնպի-
սի ծանօթութեան որ մոլորութեան ամէն
վտանգն մերժէ . յայտնի է որ այս վախ-
ճանիս հասնելու համար՝ պէտք է 'ի բաց
վանել զամենայն պատճառս որ ածեն 'ի
մոլորութիւն՝ որ է հակառակն ճշմարտու-
թեան :

Միտք մարդոյ 'ի բնէ սահմանափակ և
անկատար ըլլալով՝ մոլորութեան ալ հա-
կամէտ է որպէս և ճշմարտութեան . այս
անկատարութիւնս միանալով մեր կարո-
ղութեանց չար գործածութեան հետ՝ զմեզ
չատ տեսակ մոլորութեանց մէջ կը ձգեն .
և մեր կամեցողութիւնն և նոյն իսկ իմա-
ցողութիւնն ալ դաւակից կըլլան զմեզ
խաբելու : Այս ներքին պատճառաց վե-
րայ կաւելնան և արտաքին պատճառք , և
հաղարումէկ պատրանաց խաղալիկ կընեն
զմեզ : Ապա կը տեսնուի որ պատճառք մո-
լորութեանց մերոց անթիւք են՝ որոց գլխա-
ւորներն մինակ ցուցնենք : Մեր մոլորու-
թեանց պատճառներն ցուցընելն՝ արդէն

անոնց դարմանն ընել ըսել է . վասն զի
ամէն բանէն առաջ մոլորութեան մէջ չան-
կանելու հնարքն այն է՝ որ հոն տանող
ճամբէն զգուշանանք . իսկ եթէ մոլորու-
թիւնն արդէն մտած է ՚ի հոգին՝ հարկ է
անոր պատճառներուն հետ մաքառիլ՝ հա-
կառակ պատճառներով . և ահա այս դի-
պացս մէջ ալ դարձեալ հարկաւոր է այս
պատճառներս ճանչել :

Դարձեալ մարդ չկայ որ չզիտնայ թէ
մոլորութիւնն շատ անգամ ճշմարտութեան
կերպարանքն կամ դիմակն կառնու . և
ճշմարտութեան պէս ինքն ալ իր պատճա-
ռաբանութիւններն և ապացոյցներն ունի ,
և պատրողական ձևեր կունենայ որ իմաս-
տակոչքիւնք կըսուին : — Ապա հետզհետէ
պիտի ճառենք մոլորութեան պատճառացն
և զանազան ձևոցն՝ այսինքն իմաստակու-
թեանց վրայ :

§. Ա.

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՃԱՌԱՅ ԵՒ ԴԱՐՄԱՆՈՅ ՄՈԼՈՐՈՒ-
ԹԵԱՆՑ ՄԵՐՈՑ

Մեր մոլորութեանց պատճառքն երկու
դասուց կրնանք բաժնել . պատճառք ներ-
քիւնք և պատճառք արտաքիւնք :

Ս. Ներքին պատճառք մոլորութեանց .

Ներքին պատճառք մոլորութեանց կը զանազանին 'ի բարոյական և յիմացողական պատճառս : Առջիններն 'ի կամեցողութեանէ յառաջ գան , իսկ ետքիններն գլխաւորապէս մեր իմացողութեան տկարութեանէն :

Բ.Ս.ՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՔ. — Ս. Կիրք. — Հոս կիրք ըսելով մեր հոգւոյն փոքր 'ի շատե եռանդուն յօժարութիւններն կը հասկընամք՝ որ զմեզ դէպ 'ի առարկայ մի կը մղեն կամ անկէց կը հեռացնեն : Եթէ մարդ իր հոգւոյն գործողութեանցն քիչ մի մտադիր ըլլայ դիւրաւ կը տեսնէ՝ որ շատ անգամ մեր դատողութիւններն որոշողն՝ աւելի բնական յօժարութիւնն է՝ քան թէ պատճառաց իսկական զօրութիւնն . ինչպէս որ իրաւամբ ըսաւ՝ Ռոշֆուքոյ . « Խեղքըն շատ անգամ սրտին խաղալիկն է » : Կիրք շատ անգամ կուսակցութեանց և ներհակութեանց պատճառ կըլլան , և անոնց ազդեցութեամբն շատ անգամ մեր ըրած դատմունքն ալ նախապաշարմունք են՝ որոց չենք անդրադառնար : — Գարձեալ կրքերն քիչ մի զօրանալով մեր մըտաց հանդարտութիւնն կը խռովեն , և չեն թողուր որ մտադրութեամբ լուծուելու խնդիրն քննենք : Համարուող կերպով

մի հետազօտենք այն գլխաւոր կրքերն որ
չատ մոլորութեանց պատճառ կըլլան :

Հպարտութիւն , սեճնասիրութիւն և նա-
խակն . Հոգւոյն այս վիճակներս շատ մո-
լորութիւններ յառաջ կը բերեն : Հպարտն
երբ մէկ կողմի կուսակից կըլլայ , կամ որ
և իրէ կարծիք մի կը բռնէ՝ ալ չուզեր աչ-
քը բանալ ու լոյսն տեսնել , և ինքզինքն
և զուրիշներն խաբելու համար իմաստա-
կութիւն իմաստակութեան վերայ կը բար-
դէ , և չուզեր մէկ կերպով մի խաբուած
ըլլալ խոստովանիլ , և զմոլորութիւնն ճշ-
մարտութենէն աւելի կը վերադասէ՝ եթէ
այս վերջինս ընդունելու համար հարկ ըլ-
լայ առաջի ըսածէն կամ ունեցած գաղա-
փարէն ետ դառնալ : Յայտնի է որ մտաց
այս տրամադրութենէն անթիւ մոլորու-
թիւններ յառաջ պէտք է գան : Աշխարհ-
քիս մէջ մէկը չկայ՝ որ շողոքորդութեան
ու մարդահաճութեան այնչափ դիւրաւուր
ըլլայ՝ ինչպէս հպարտ մարդն . հպարտ
մարդուն ամէն բան կրնաս հաւտացնել՝
բաւական է որ իրեն գովեատ մի ելնէ ան-
կէց , և այս կերպով քթէն բռնած ամէն
խենթութեան կրնաս տանիլ զանիկայ՝ ո-
րով ծաղրելի կըլլայ . անոր համար առակ
եղած է խեղր հպարտ ըսելն : — Հպարտն
որ գրեթէ միշտ նախանձոտ ալ կըլլայ՝ ու-
րիշի արդիւնքն ամէնեւին չճանաչեր ու
չմեծարեր , և կը ջանայ զանոնք ցածցը-
նել՝ որ ինքն բարձրանայ , և այս ջանքս

չատ անգամ կը ծածկէ իրմէ ճշմարտութիւնն՝ թէ իր անձին և թէ օտարին համար : Ամէնէն հպարտ մարդն՝ զՍտուած մոռցող մարդն է : — Հպարտութեան դեղըն խոնարհութիւնն է :

Սէր և ատկոշրիշն . Մարդիկ սովորաբար առանց քննութեան ինչ որ իրենց բարեկամքն կընեն՝ անոնց կը հաւանին , իսկ թշնամեաց ըրածն միշտ չար կը համարին . շատ անգամ գործ մի՛ քանի որ գործողն յայտնի չէ , չարաչար կը դատափետուի , իսկ երբ յայտնի կըլլայ թէ բարեկամ մարդ է ընողն՝ անմեղադիր կըլլայ . ընդհակառակն գործ մի որ առաջ գովութեան արժանի սեպուած էր՝ երբ կիմացուի թէ ընողն անհաճոյ մարդ մի է՝ իր արժէքն կը կորսընցնէ . թշնամոյ վերայ եղած վնասակար խօսքին շուտով կը հաւատանք՝ թէ պէտ ստոյգ փաստեր չունենանք , ընդհակառակն բարեկամի մի համար որ զրուցուի՝ բացայայտ եղած ատենն ալ չենք ընդունիր : — Բարեկամութենէ և ատելութենէ առաջ եկած մոլորութիւններէն զգուշանալու համար՝ զրուցուած գործն և պարագայներն՝ մտօք անանկ մարդու մի վերայ առնելու է՝ որուն հետ մասնաւոր վերաբերութիւն մի չունինք . կամ թէ սիրոյ և ատելութեան զգածմունքն յանձնէ՝ ի բաց մերժելու է , և զբանն իշխան դնել յօժարութեանց :

Պղերգոշրիշն . Քիչ մարդիկ կան որ պարզ

'ի սիրոյ ճշմարտութեան՝ բանի մի հետեւին,
և շատ անգամ մեծամեծ գործոց ձեռք
զարնելնուն պատճառն՝ կարօտութիւնն
կամ կիրքն են . ասոր համար է որ դժուա-
րութեանց հանդիպելնուն պէս՝ կը վհա-
տին ու կը հոգնին : Շատ անգամ խորա-
խորհուրդ քննութեան մի աշխատանքէն
փախչելու համար այնպիսի կարծեաց կը
հետեւինք՝ որ հաստատութիւն մի չունին ,
և դարձեալ առանց պատճառի զայն կը
ձգենք՝ ուրիշ մի կառնունք կատարեալ ան-
տարբերութեամբ կամ առանց մէկ պատ-
ճառի մի . կամակորութեամբ ու յամառու-
թեամբ անոր վրայ կը սեւեռինք , որովհե-
տև ծանր կուգայ մեզ քննել զպատճառս՝
որոց համար հարկ ըլլայ թերևս մեր կար-
ծիքն փոխել : — Այս մտաւորական պղեր-
գութեան մէկ յայտնի նշանն ալ մտադրոշ-
քեան պակասըննէ է՝ որ ամէն խորին քըն-
նութիւնն կը մերժէ . և ասկէց առաջ
կուգան ընկերութեան մէջ այնչափ ծաւա-
լեալ նախապաշարմունք , անտեղի և ար-
տաւոց գաղափարներ՝ որ դիւրահաւան
մտաց մէջ այնպէս արմատացած են որ
քանցելն շատ դժուար է : Մտաց պղեր-
գութեան հետ երբ կարձմրտոշքիւնն ալ կը
միանայ՝ իրի մի ըստ բաւականին վերլու-
ծութիւնն չըրած՝ շարադասութեան կը
փութանք , և բացայայտութեան չհասած՝
դատում մի վճռելու կ'աճապարենք , որով
դատողութեանց մէջ գահալիժեղոշ կը վար-

ժինք : — Այսչափ մոլորութեանց պատ-
ճառ եղող մտաւորական պղերգութեան
դէմ զինելու է կտրիճ հաստատամտու-
թեամբ, համոզուած ըլլալով որ իմացողու-
թիւնն մթազնող խաւարն ուրիշ կերպով
չփարատիր՝ բայց եթէ մշտնջենաւոր հա-
նապազորգութեամբ ու քաջութեամբ :

Սոյն կերպով կրնայինք յառաջ բերել
նաև ուրիշ կրքերն որ մարդկային մտաց
դատաստանն կայլայլեն, որպիսի են՝ փա-
ռասիրոչքիւն, ագահոչքիւն, քարկոչքիւն, և
այլն, և առանձինն զակունք որ շահոչ մի հետ
կապեալ են, ինչպէս ստացուածոց, պատ-
ւոյ, ազատութեան, և այլն :

Բ. Թերոչքիւնք քարոչց. — Բարբ ըսելով
կը հասկընամք հոգւոյն կից քանի մի տրա-
մադրութիւններն՝ մասամբ ինչ բնական և
մասամբ ինչ սովորութիւն դարձած գոր-
ծերէ ստացեալ :

Գիշրահաշուն քարք ունեցող մարդն շու-
տով ուրիշի կարծեաց կը համոզուի և իր
համոզմունքն կը թողու՝ շատ անգամ ՚ի
մնաս ճշմարտութեան : — Յամառ քարք
ունեցողն ՚ի ծայրայեղն անկանի՝ նոյն իսկ
բացայայտ ցուցմանց դէմ դնելով ու չհա-
մոզուելով. որչափ զօրաւոր պատճառներ
բերես՝ մտիկ չընէր, և երբ իրեն պատաս-
խան կուտաս՝ ընելու առարկութիւնն կը
մտածէ : — Անհաստատ քարք ունեցող
մարդն՝ զանազան ատեն նոյն խնդրոյն
վերայ նոյն կերպով չդատիր. ապա ու-

րեմն երկուց մէկուն մէջ կը սխալի, շատ
անգամ երկուքին մէջ ալ: — Ամբարնա-
շաճն ինքզինքն ամէն բանի վճիռ տալու
կարող կը սեպէ, և իրեն անվայել կը հա-
մարի բանի մի վերայ տարակուսիլն, ուս-
տի շատ անգամ ըստ դիպաց միտքն կ'որո-
շէ՝ որով դարմանք չէ եթէ փոխանակ ճըշ-
մարտութեան՝ մոլորութեան մէջ անկանի:
— « Եթէ կարևոր գործոյ մի վերայ խոր-
հրդի նստին, կըսէ Արավզէնտ¹, բարկա-
ցող բնութիւն ունեցողներն կուզեն՝ որ
սաստիկ ու բուռն միջոցներ բանեցնեն .
ընդհակառակն վախկոտ բնութիւն ունե-
ցողներն՝ մեղմ հնարքներ կուզեն գործ-
ածել . և եթէ դանդաղկոտ են՝ աւելի աղէկ
կը համարին ուրիշ անգամուան թողուլ ի-
րենց որոշմունքն »: Յայտնի է որ այս հա-
կառակամարտ կարծեաց մէջ աղէկը չը-
գըտնուիր, և ծայրայեղ սկզբանց մէջտեղն
բռնելու է:

Ահաւասիկ մարդուս դատաստանն ծը-
ռող բարուց գլխաւորներն ասոնք են:

Այս մոլորութեանց դարման ընելու հա-
մար՝ իւրաքանչիւր ոք իր բարքն պէտք է
քննէ հասկընայ, և երբ անոր թերութիւնքն
ճանչնայ՝ հակառակ գործերով զանիկայ
մարդէ և ինքզինքն վարժեցնէ՝ որով թե-
րութիւններն կ'ուղղին: Աւստի վերոյդրեալ

1. Արավզէնտի, Աանխաբանութիւն խմատա-
սիրութեան. գԼ. 19:

Թերութեանց դէմ դնելու է հաստատա-
մտութիւնն, ուրիշի կարծեաց հաւանելու ա-
ռաքինութիւնն, զհաւասարութիւն հոգւոյ
յամենայնի, համեստութիւն և անվատա-
հութիւն անձին, հլութիւն, արիութիւն և
գործունէութիւն, կամ գոնէ արթնութիւն
որչափ որ կարելի է՝ որ բարուց թերու-
թիւնքն մեր մտաց դատաստանաց վերայ
իշխելու չհամարձակին :

ԻՄԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՔ . — Ս . Նախապա-
շարմուռք . — Նախապաշարումն ըսելով
կ'իմացուի կանխակալ կարծիք մի առանց
քննութեան ընկալեալ, որ յառաջ գան
'ի բարուց, 'ի կրից, 'ի շահուց, և այլն .
կան նախապաշարմունք առանձինն գեր-
դատանաց, ազգաց, աղանդոց և կու-
սակցութեանց . և կրնան ըլլալ ճշմարիտք
և սուտք, օգտակարք և վնասակարք .
սակայն սովորաբար նախապաշարումն
բառն գէշ մտքով կ'առնուի : Մեր նախա-
պաշարմանց շատին աղբիւրն յառաջ գայ
'ի գաղափարաց զոր ստանամք յընկերա-
կցութեան մարդկան :

Գէշ մտքով առնուած կամ սուտ նախա-
պաշարումն մոլորութեան պատճառ ըլլա-
լէն զատ՝ ինքն իսկ մոլորութիւն մի է .
բայց որովհետև մարդուս ունեցած նա-
խապաշարմունքն կամ թիւր սկզբունքն՝
չեն թողուր մարդուս որ անձանց և իրաց
վերայ ճիշդ դատաստան ընէ, և հետեւա-
պէս շատ մոլորութեանց պատճառ կ'ըլլան .

անոր համար իրաւամբ մոլորութեանց պատ-
ձառաց կարգն կը դրուին :

Տարակոյս չկայ՝ որ նախապաշարմունք
աւելի իմացողութեան կը վերաբերին ,
բայց որովհետեւ ՚ի կամեցողութենէ կա-
խեալ պատճառներէ մտած են մտաց մէջ
ինչպէս նաև արտաքին պատճառներէ , ա-
նոր համար որչափ ալ իմացողական պատ-
ճառաց կարգն կը դրուին՝ սակայն խառն
բնութիւն ունողի պէս նկատելու է զա-
նոնք :

Նախապաշարմունքէ ազատելու համար՝
հարկ է ՚ի ձեռս առնուլ զկշիռ բանին , և
երկուց կողմանց պատճառներն չկշռած՝
դատաստանն ՚ի կախ թողուլ , ինչուան որ
ճշմարտութիւնն երևան ելնէ ազատ
յերկբայութեանց՝ ՚ի ձեռն անհակառակե-
լի սկզբանց և ստոյգ և բացայայտ պատ-
ճառաց :

Բ. Չառանցանք պատկերողութեան . — Տա-
րակոյս չկայ որ պատկերողութիւնն մեծ
օգնական է իմացողութեան , որովհետեւ
վերացեալ գաղափարաց զգալի ձև տա-
լով օգնէ մտադրութիւնն անոր վերայ
հաստատելու , և զանոնք հասկընալի կընէ՝
՚ի բնութենէ առած օրինակներով . սակայն
ընդհակառակն զառանցանք ալ չկայ՝ որ
մեզ չկլլեցնէ այս մեզ բնակասկից խեւրը .
որ անդադար նորանոր ցնորս հնարի և
ճշմարտի պէս կը հաւտացնէ . ինքն է որ
առաջ կը բերէ պատրողական ենթադա-

տութիւններ և վտանգաւոր պատրանս .
և ոչ միայն շատ անգամ մոլորութեան կը
տանի զմեզ , այլ և ստութիւնն այն
աստիճան պարտըկելու և գեղերեսելու
ճարտար է՝ որ գրեթէ անկարելի կըլլայ
զանիկայ ճանաչել . ուստի իրաւամբ ը-
սուած է թէ կարի վառվառն պատկերո-
ղութիւնն՝ գրեթէ զգատողութիւնն կը
խեղդէ ¹ :

Պատկերողութեան զառանցանաց դէմ
լաւագոյն դարմաններէն մէկն է խորին
ուսմամբ միտքն զօրացնել . և եթէ կարելի
ալ չըլլայ՝ բոլորովին սանձահարել զպատ-
կերողութիւնն , գոնէ անոր սնոտի երևու-
թից խաղալիկ չըլլալ . ոչ եթէ շիջուցանե-
լու է զպատկերողութիւնն՝ այլ զբանն իշ-
խան դնելու է անոր վերայ :

Գ . Տգիտութիւն . — Ուրիշ բան չէ բայց
եթէ ծանօթութիւն չունենալ . տգիտա-
նալն է պարզապէս չգիտնալ , իսկ մոլո-
րիլն է՝ սուտ դատաստան ընել : Տգիտու-
թիւնն աղբիւր է շատ մոլորութեանց , ո-
րովհետև հպարտութեամբ և թեթեա-
մտութեամբ շատ բաներու դատաստան
ընել կ'ուզենք՝ զորս չենք ճանաչեր կամ
հարեանցի և եթ ճանաչեմք :

Յայտնի է որ տգիտութենէ յառաջ ե-
կեալ մոլորութեանց դէմ ամէնէն զօրա-

1 . Յաղագս ծանօթութեան Աստուծոյ և ան-
ձին , գԼ . Ա , Ժ :

ւոր դարմանն է ջանք և փոյթ և ուսում,
 նասիրութիւն . սյսինքն զննել, բաղդա-
 տել, բանավարել, և այլն : Դարձեալ
 մարդ միտքն զնելու է որ երբեմն ըստ պի-
 տոյից իր դատաստանն կախ թողուլը՝ ոչ
 միայն ամօթ չէ, այլ և ստոյգ նշան է ի-
 մաստութեան . ուստի՝ ի մանկութենէ վար-
 ժելու է՝ կատարելապէս չգիտցած բանին
 վերայ՝ դատաստան չընելու :

Դ . Տկարոտքիւն յիշողութեան . — Անձանց
 և իրաց վերայ ճիշդ դատաստան ընելու
 համար՝ փորձ մարդ ըլլալու է . արդ փորձ-
 առութեան սակաւ օգտակար ըլլալուն
 պատճառներէն մէկն ալ՝ շատերու համար
 յիշողութեան տկարութիւնն է, որն որ
 պէտք էր միշտ պատրաստ գտնուէր՝ պա-
 րագայից պահանջած տեղեկութիւնն մեզ
 տալու : Անցեալ դասուց մեզ քիչ օգտա-
 կար ըլլալուն պատճառն այն է՝ որ սոր-
 վածնիս շուտ կը մոռնանք : — Դարմանն
 այն բնական և իմացողական միջոցներն
 են՝ որովք յիշողութիւնն կը սրի ու կը պա-
 հուի ¹ :

Ե . Արտաքին պատճառք մոշորոտքեանց .

Ս . Մոշտ իշխանութիւնք . Քիչ մարդիկ
 կան որ կարենան իրենք իրենցմէ ազատ

1 . Յիշողութիւնն սրելու հնարքն տես Հատու-
 բանն արուեստին մէջ :

դատողութիւն մի ընել, կամ խնդիրներն
իրենց իմացողական կարողութենէն վեր
ըլլալուն պատճառաւ, և կամ առ մտաւո-
րական անհոգութեան ու պղերգութեան.
ուստի ըրած դատողութիւննին ալ չէ թէ
իրաց քննութեամբն է, այլ ըստ իշխա-
նութեանց ինչ որպէս կարծեաց, սովո-
րութեանց, անձանց զորս պատուեմք,
և այլն:

Տարակոյս չկայ որ շատ սովորութիւն-
ներ կան՝ որ իմաստուն փորձառութենէ
մի յառաջ եկած են, և շատ ընդունելի
կարծիք՝ որ բանի և ճշմարտութեան յար-
մար են՝ որով և պատուելիք. բայց կան
ուրիշներ ալ զորս հարկ է ուղղագրել
խիստ և անկողմնասէր քննութեամբ, և
երբեմն բոլորովին արմատէն ալ քանցել:
Մոյն իսկ ամենուն ընդունելի կարծիքն՝ ա-
ւելի պէտք է քննել և փորձի տակ ձգել.
սակայն քանի որ այս քննութիւնս եղած
չէ՝ իրաւունքն միշտ իշխանութեան կողմն
կը սեպուի: Բանն ինքնին թելադրէ մեզ
թէ շատ զգուշաւոր և խոհեմ ըլլալու է
ընկալեալ աւանդութիւններն քննելու ժա-
մանակ, և աս քանիս ձեռք զարնելու հա-
մար՝ հաստատ և կատարեալ կերպով զար-
գացեալ մտաց հասունութիւն պէտք է:
Մոյն խստութիւնս այնչափ չպահանջուի
շատ մի ժամանակակից կարծեաց համար՝
որոնք պերճ անուամբ հասարակաց կար-
ծիք կըսուին, և անոր համար ալ անհաս-

տառ , փոփոխական կըլլան , և լի ազգի
ազգի կրիւք :

Ե . Թերուշքիւնք բարբառոյ . — Հոգեխօ-
սութեան Յաղագս կերոց կատարեալ բար-
բառոյ յօգուածին մէջ տեսանք թէ ո՛յք են
լեզուի մի կնիքն , և միանգամայն ո՛յք են լաւ
բարբառոյ մի կարեորութիւնն և օգուտ-
ներն : Եթէ ճշմարիտ է թէ լաւ բարբառ
մի՝ խորհրդոյ բանաւորական կարգին բա-
ցատրութեանց համեմատ դրութիւն մի
պիտի ըլլայ , և իրաց ճշմարիտ ծանօթու-
թեանցն առաջնորդ , ապա՛ի հակառակէն
գէշ կերպով շինուած լեզու մի և անոր
թերութիւններն՝ հարկ է որ ածեն զմեզ ՚ի
մոլորութիւն : Պարոն իր Նոր գործի ըսուած
դրոյ մէջ՝ մեր մոլորութեանց պատճառ կը
դնէ չորս դաս նախասլաշարմունք՝ զորս և
կոչու կամ ցնորս կը կոչէ ¹ : Կոչք հրա-
պարակի ըսածն գլխաւորապէս մարդկանց
իրարու վերայ ունեցած ազդեցութիւնն
կիմացուի ՚ի ձեռն բարբառոյ : Ըստ Պարո-
նի՝ բառք շատ մի պատրանք կը մտցընեն ՚ի
միտս՝ եթէ պարզ կեղծիքն իբրև իրական
ինչ անուանելով՝ օրինակ իմն բազդ , ճա-
կատագիր բառերն , և թէ՛ իրական ինչ

1 . Յնորդ փոհմի , անխա-ի , հրապարակի և Բապէր . որ
ըստ խմաստից են ցնորք ազգի մարդկան կամ տե-
սակի , ցնորք առանձնական կամ անհատի , ցնորք
ընկերական կամ բարբառոյ , և ցնորք տեսողա-
կան կամ դպրոցական :

ցցուցած ատեննին ալ նշանակութիւննին շփոթ ու խառնակ ըլլալով . այս բանս շատ կը հանդիպի կուսակցութեանց բառից գործածութեան մէջ, որպիսի են աղգասիրութիւն, պատիւ, ազատութիւն, բռնութիւն, և այլն :

Մուտքութեանց այս աղբեր դարմանն է՝ գործածուած բառից և ոճից նշանակութեան ճշգրտութիւն . և զգուշութիւն՝ չխաբուելու և գերի չըլլալու հասարակաց կարծեաց նորաձևութեանցն՝ անոնց իրական իմաստին կողմանէ :

Գ . Երևոյրք, և ընդհանրապէս ո՛ր և է իրք որք ազդեն զգայարանաց . — Մակաւաւոր են այն մտքերն որ դատաստան մի ընելէն առաջ՝ իրաց խորն թափանցեն . շատերն դրսէն երևցածովն գոհ կըլլան և արտաքին կերպարանաց համեմատ կը դատեն : Մտաց այս տրամադրութենէն առաջ կուգայ՝ որ չափաւոր հանճար մի ճոռոմաբանութեան սուտ փայլով՝ ճշմարիտ հանճարոյ պատիւն կը յափշտակէ, և ընդհակառակն համեստ արդիւնաւոր մարդ մի՛ ՚ի սակաւուց ծանուցեալ՝ անփառունակ կը մնայ ՚ի մոռացութեան : Խօսակցութեան զարդերն ոչ միայն մուտքութիւնն ՚ի մէնջ կը ծածկեն, այլ և շատ անգամ անոր պատճառ կըլլան . մատենագիր մի ճշմարտութիւնն սարղապէս զրուցած կըլլար՝ եթէ իր խելքին ցոյց տալու համար սա հանճարաբանութիւնս շղործածեր, սա

ծեքաբանութիւնս չըներ՝ ուսակին հաճոյ
ըլլալու համար . և սակայն այս պատճա-
ռաւ ճշմարտութիւնն աղաւաղեց ու զո-
հեց :

Ընդհանրապէս արտաքին քարեմասնոշ-
րիւնք՝ մեր սիրտն կը գրաւեն . օրինակ իմն՝
աղուոր հասակ , մարմնոյ բնական ուժ ,
մարմնամարդից մէջ ճարպկութիւն , հնչեղ
ձայն , ազդու շարժուածք , շքեղ հագուստ ,
ծառայք , կառք և երիվարք փողփողեալք .
և ընդհակառակն առ ոչ ինչ համարիմք
զարդիւնս ճշմարտութեան , իմաստու-
թեան , առաքինութեան . պատճառն որ
տսոնք անմերձ են ՚ի զգայարանաց և շա-
տերու վերայ թեթև տպաւորութիւն մի
միայն կընեն :

Արդ հարկ է զգուշանալ ՚ի պատրանաց
երևութից՝ որ չըլլայ թէ անոնց շքեղու-
թիւնն զմեզ շլացնէ , որոց արժէքն ուրիշ
բան չէ՝ բայց եթէ ներքին աղքատութիւնն
պարտըկել , և ամէն բանի մէջ ճշմարտու-
թիւն փնտուել . զի Չիք ինչ քան զճշմարտե
գեղեցիկ : Իրաւ չենք կրնար անզգայ ըլլալ
գեղեցկութեան և շափակցութեան հրա-
պուրանացն . առ այս ամէ զմեզ և բնու-
թիւն ինքնին . ուստի ճշմարտութիւնն պա-
ճուճեալ և զարդարուն աւելի սիրելի պէտք
է ըլլայ մեզ , միայն թէ յիրաւի ճշմարտու-
թիւն ըլլայ . զի ճշմարտե միայն է սիրելի :
Զարմանանք արուեստից և ճարտարու-
թեանց հրաշակերտից վերայ , բայց առա-

ջին տեղին շնորհենք սիրոյ իմաստութեան
և մարդկան բարոյական զարգացմանն .
և քան զերկուսին սեր իմաստոտըրեան :

Մեր մոլորութեանց պատճառաց դար-
ման ընելու միջոցներէն ոմանք հակըսակե-
 են և այլք մասնակեան : Հանրական միջոց-
 ներն են անկեղծոտըրիւն , ճշմարտաստըրիւն ,
գործածոտըրիւն անդոշ մերոցս կարողութեանց ,
և ոշիոյ շաշիոք բանաւարութեան , յորս յա-
ւելլու է զկրօնս և զբարոյական՝ այն մոլո-
րութեանց համար՝ որ ՚ի նուազութենէ բա-
րոյականին յառաջ գան : — Իսկ մասնա-
կանքն են՝ մոլորութեան զանազան պատ-
ճառներուն հետ՝ հակառակովն մաքառիլ .
զկիրս ամբարտաւանութեան , նախանձու
և փառասիրութեան՝ սանձահարել համե-
տութեամբ , սիրով նմանեաց , ժոշկարո-
րեամբ ըղձից , և այլն . ուղղել զբարս՝ ջա-
նալով առնել զնա միօրիւնակ , հաստատուն
և չափաշորեալ . քանցել արմատաքի ըզ-
նախապաշարմունս , իմաստուն դանդա-
ղութիւն մի դնել դէմ ընդ դէմ գահավի-
ժութեան , կանոնաւորել զպատկերողու-
թիւն , փարատել զխաւար տգիտութեան
լուսով գիտութեանց . և վարժել զանձն՝
մի խաղալիկ լինել պատրողական երևու-
թից , և այլն : Ասոնց վերայ խօսքերնիս
աւելի չենք երկընցներ , որովհետև մեր մո-
լորութեանց պատճառներուն ամէն մէկն
յիշած ատեննիս՝ իւրաքանչիւրին մասնա-
կան դարմանն ալ ցցուցած եմք :

§. Բ

Յադագս իմաստասկոչքեանց .

Ամէն անգամ երբ բովանդակութիւն մի կարտածեմք 'ի սկզբնէ իմեքէ՝ յորում բովանդակութիւնն իրականապէս կայ, բանավարութիւնն արդար և ճիշդ կըլլայ՝ ըստ որում բանավարութիւն, նա թէ և սկիզբըն այն սուտ ըլլայ և արտածեալ բովանդակութիւնն ալ սուտ որպէս զսկիզբն իւր: Բայց երբ արտածութիւնն անկանոն է, և բովանդակութիւն իրականապէս չկայ այն սկզբան մէջ ուսկից որ կ'ուզենք հանել զանիկայ, այն ատեն բանավարութիւնն թիւր է կամ իմաստասկոչքիւն, նա և եթէ առաջարկութիւնքն զատ զատ առնելով ճշմարիտ ըլլան: Իմաստասկութիւն բառն թէպէտ ընդհանրապէս թիւր բանավարութիւն կը նշանակէ, սակայն շատ անգամ չարամտութեամբ եղած թիւր բանավարութեանց կամ խաբէութեանց համար կը զրուցուի. իսկ եթէ մոլորութիւնքն պարզապէս բարեմտութեամբ եղած են՝ կըրնանք զանոնք ձեքարասկոչքիւն կոչել: — Իմաստասկութիւնք բազմաթիւ են, որոց զըլխաւորներն հոս տեղս դնենք:

Ա. Անգիտոչքիւն իսկոյրոյ ընդ նիւրոյ. որով խնդրէն դուրս եղած բան մի կը ջանանք հաստատելու, կամ մեր հակառակորդաց

այնպիսի սկզբունք կուտանք՝ զորս չեն ընդունիր: Այս իմաստակութեամբ Նևտոնի հակառակորդք այսինքն կարդեսեանք, ձգողութեան սկիզբն կը մերժէին՝ ըսելով թէ այսու դրութեամբ ճեմականաց գաղտնի պատճառք ըսուած վարդապետութիւնն կը նորոգուէր, ուր Նևտոն ձգողութիւն ըսելով կը հասկնար գերագոյն օրէնսդրի տիեզերաց մէկ օրէնքն, և հետեւապէս որպէս արգասիք կը համարէր զանիկայ: Այս իմաստակութիւնս ստէպ կը հանդիպի ընկերութեան մէջ՝ ուր շատ անգամ վիճաբանութեանց պատճառն իրարու միտք չհասկնալէն է՝ առաջուց խընդիրն ճիշդ չսահմանելով: Շատ անգամ ալ այս իմաստակութեանս մէջ անկանիւք վերացեալ բառից զանազան նշանակութիւններ տալով, որպիսի են բառքս՝ ազատութիւն, ազգասիրութիւն, պատիւ, օգուտ հասարակաց, լուսաւորութիւն, նախապաշարունմն, և այլն:

Բ. Կրկնուշմն սկզբան. որով խնդրոյ տակ եղած բան մի ճշմարիտ կը սեպենք, կամ անստոյգ բանով մի ուրիշ անստոյգ բան մի կուզենք ապացուցանել. և իբրև ստոյգ սկիզբն կը դնենք՝ խնդրոյն մէկ մասն որ ապացոյցի կարօտ է. օրինակի համար՝ բանի մի արդար ըլլալն ցուցնելու համար ըսէինք՝ թէ ամէն մարդ գիտէ որ այն բանն հրամայեալ է յօրինաց, այսպիսի շարաբանութիւն մի ընելով թէ՛ Որ ինչ համե-

մատ է օրինաց՝ արդար է, Իսկ արդ այս
ինչ համեմատ է օրինաց, Սպա ուրեմն ար-
դար է. ասով ահա խնդրոյ տակ եղածն
ստուգութեան տեղ դրած կըլլամք, որով-
հետև ճիշդ խնդիրն է գիտնալ թէ արդեօք
այս ինչ իր թէպէտ և համեմատ օրինաց՝
արդար է թէ չէ: Վասն զի յիրաւի եղած
են արդարութեան հակառակ օրէնք ալ,
որպէս օրէնք ինչ հռովմէական պետու-
թեան՝ որ քրիստոնէից խղճին չէին յար-
մարեր, և Փրանկիոյ առջի յեղափոխու-
թեան ատեն ալ անիրաւ օրէնքներ դրուե-
ցան յափշտակութեան ընչից առանձնա-
կանաց¹:

Արկնումն սկզբան յոռի շրջան կըլլայ՝ երբ
երկու իրեր հակադարձաբար իրարմով
կուզենք ցուցնել. օրինակի համար՝ երկրիս
իր թաւալումն ցուցնել ուզելով ըսենք թէ
արևն անշարժ է. յետոյ արևուն անշար-
ժութիւնն ուզելով ցուցնել՝ ուրիշ պատ-
ճառ չտանք՝ բայց եթէ ըսելով թէ երկիր
թաւալի դիւրև, յոռի շրջան ըրած կըլ-
լանք: Աարդեսիոս ևս այսպիսի յոռի շըր-

1. Արկնումն սկզբան ըրած կըլլամք՝ երբ իր
մի՛ իրմով ուզենք ասպացուցանել, որպէս կը բա-
ցաարէ Արիստոտել յԱռաջին Վերո-ծոմէան. Գիրք
Բ, գլ. ԺԶ. և օրինակ կուտայ իր Ժամանակի քա-
նի մի չափաբերաց զուգահեռի գծից տուած ա-
պացոյցն՝ որ ուրիշ բան չէր՝ բայց եթէ ըսել.
Գիծքս զուգահեռիք են, վասն զի զուգահեռիք
են:

ջան մի ըրած է . Աստուծոյ գոյութիւնն ապացուցանելու համար՝ բացայայտութիւնն ձեռք առնելով, յետոյ մեր յստակ գաղափարաց ստուգութիւնն ալ հաստատելով ասոր վերայ որ՝ Աստուած կատարեալ էակ ըլլալով՝ չկրնար զմեզ խաբել : Այս իմաստակութեանս մէջ մարդ այն ծագման կէտին կը դառնայ՝ ուսկից որ ելեր էր՝ որպէս թէ կը որ շրջան մի ընելով, և յոռի կըսուի վասն զի առաջարկուած խնդիրն չլուծեր . որովհետեւ երկու ապացուցանելի իրք՝ իրարու ապացոյց չեն կարող ըլլալ :

Գ. Ոչ պատճառ իբր պատճառ . որ շատ կերպով կը ըլլայ . Ս . Մէյմը երբ տգիտութիւնն իս ծածկելու համար՝ մտացածին պատճառաց կը դիմենք , և պատճառաց անծանօթ երևոյթներն բացատրելու համար՝ ընդունայն խօսքերն բաւական կը սեպենք . այսպէս նախնի իմաստասէրք ջրհանին մէջ ջրոյ բարձրանալուն պատճառն այն կուտային՝ որ բնութիւնն խորշի՝ ի դատարկէ : Իմաստնոց այս ցնորական պատճառներն ծաղրելու համար՝ Մուլիէր իր Հիշակոյ կրեւակեալ կատակերգութեան մէջ սա ծաղրական հարցպատասխանին կը դնէ . վարդապետք բժշկական արուեստին՝ ընծայելոյն կը հարցնեն . Էր աղագառ բմբիբ ածեխաշխաշ . ան ալ կը պատասխանէ . Քանզի ե՛ ի ևնա բմբրարար գօրոշրիւն : — Բ . Երկրորդ երբ պատճառի յարաբերութիւն մի կը դնենք հոն՝ ուր յաջորդութեան ևեթ

յարաբերութիւն կայ, ըսելով՝ յետ այսորիկ,
այս փասե այսորիկ : Այս իմաստակու-
թեամբ երկայն ատեն անանկ համարեցան
մարդիկ թէ գիտաւորաց երևումն, արե-
գական և լուսնի խաւարումն՝ թշուառու-
թեանց պատճառ են : Ինչո՞ւ . վասն զի շատ
անգամ այսպիսի աղէտք այն երևոյթնե-
րէն ետքը հանդիպած են . և սակայն գի-
տենք որ առանց այն երևութից՝ տարի
չանցնիր որ մեծ աղէտք մի չպատահի : —
Գ. Երրորդ ամենեւին վերաբերութիւն կամ
կապակցութիւն չունեցող բանի մի՛ ազդե-
ցութիւններ տալ . օրինակի համար՝ երեք-
չաբթին կամ ուրբաթն դժբաղդ օր սեպել,
սեղանի վերայ աղանօթին թափիլը կամ
տասուիրեք հոգի սեղանակից ըլլալն՝ թը-
շուառութեան նշան համարիլ, իսկ գինւոյ
կամ խահուէի թափուիլն բարեբաղդու-
թիւն, և այլն :

Գ. Թոշարկոչքիւն անկատար . այս իմաս-
տակութեամբ ամբողջի մի մասունքն կա-
տարեալ չհամրած՝ հանրական բովանդա-
կութիւն մի կը հանենք՝ որպէս թէ ամէնքն
համրած ըլլայինք . օրինակի համար՝ որով-
հետև եղած են մարդիկ որ կեղծաւորու-
թեան դիմակին տակ իրենց պժգալի ախ-
տերն ծածկած են, հետևեցնել թէ առաքի-
նութիւնն կեղծաւորութիւն է . կամ թէ
իրենց հպատակներն կեղեքող միապետ-
ներն համրելով՝ ցուցնել թէ միապետու-
թիւնն բռնաւորութիւն է, և այլն :

Ե . Խարեոքիւնս պատահմանս . այս իմաստակութեան մէջ անկանիւք երբ իրի միեակասն կը սեպեմք այն բանն՝ որ միայն պատահականն է . օրինակի համար՝ զարտաքին պաշտօնն աստուածային պահարակել անոր համար՝ որովհետեւ սնոտիապաշտութիւններ մտած են մէջը . գիտութիւններն և արուեստներն արհամարհել՝ որովհետեւ առ չարն կրնան գործածուիլ :

Զ . Ի յարարերականե՛ք բացարձակ բովանդակոքիւնս յառաջ բերել . ասով պարզապէս ճշմարիտ կը սեպենք այն բանն՝ որ ըստ իմիք է ճշմարիտ . օրինակի համար՝ բացարձակապէս թերի համարիլ պատմութիւն մի՝ որուն թերութիւնն մասնաւոր իրաց մէջ է միայն՝ կուսակցութեան կամ ուրիշ պատճառանօք . կամ թէ մարդ մի որ այս ինչ իրի մէջ ճարտար է՝ ամէն բանի մէջ ճարտար սեպել :

Է . Չբաժանելուսն միաշորել և գմիաշորելուսն բաժանել , որ կըսուի իմաստակութիւն միաշորոքեան և բաժանման . որ կ'ըլլայ 'ի միաւորեալ իմաստէ 'ի բաժանեալն անցնիլ կամ 'ի բաժանելոյ 'ի միաւորեալն : — Երբ միաւորեալ մտքով կը հասկընանք բան մի՝ որ բաժանեալ մտքով միայն ճշմարիտ է , այնպիսի իրեր կը հաստատեմք որ իրենց մէջ միաւորեալ ըլլալուն ճշմարիտ չեն կրնար ըլլալ , որովհետեւ բաժանեալ ըլլալուն մէջն է անոնց ճշմարտութիւնն . և ասիկայ կ'ըլլայ իմաստակոքիւն միաշորոք

րեան : Օրինակի համար աւետարանին
խօսքն Համերք խօսիւն , կոյրք տեսնեն ,
խոշրք շեն , կաղք գնան բաժանեալ իմաս-
տով միայն ճշմարիտ է , այսինքն թէ նորա
որ առաջ կոյր էին և խուլ և կաղ , այժմ
տեսանեն և լսեն և գնան . վասն զի յայտ-
նի է թէ համրն որ խօսի՝ ոչ ևս համր է ,
նոյնպէս և խուլն որ լսէ՝ ոչ ևս խուլ է ,
և այլն : Ուստի միաւորութեան իմաստա-
կութիւն կըլլայ՝ միաւորեալ իմաստով առ-
նուրը այս առաջարկութիւնս : — Երբ բա-
ժանեալ մտքով կը հասկընանք բան մի՝ որ
միաւորեալ մտքով միայն ճշմարիտ է , այս-
ինքն երբ իբր բաժանեալ կը հաստատեմք
բան մի՝ որ միաւորեալ ըլլալովնին միայն
ճշմարիտ են : Օրինակ . երբ Պաւղոս առա-
քեալ կըսէ թէ՝ Ոչ ագահք , ոչ արբեցողք ,
ոչ բամբաստողք և ոչ յափշտակողք զարքայոշ-
րիւն Աստուծոյ ոչ ժառանգեն . այս բառերս
իրենց միաւորեալ իմաստովն հասկընալու
է , այսինքն թէ այս մեղաւորք արտաքոյ
են յարքայութենէ՝ քանի որ իրենց ախ-
տից մէջ են : Եւ բաժանման իմաստակոշ-
րիւն ըրած կըլլայ մէկը եթէ բաժանեալ
մտքով առնու այն խօսքն , այսինքն թէ
յայն մեղաց ետ կենալէն վերջն ալ դար-
ձեալ դուրս են յարքայութենէ :

Ը . Խարեոշրիւն քերականական . այս իմաս-
տակութիւնս երկդիմի բառեր ու առաջար-
կութիւններ գործածելով կըլլայ , որ կրկին
իմաստ կամ հոմաձայն նշանակութիւն ու-

նին . օրինակ . Մարդս խորհի , Իսկ արդ
մարդս բաղկացեալ է 'ի մարմնոյ և 'ի հո-
գւոյ , Ապա մարմինն և հոգին խորհին :
Իմաստակութիւնս յայնմ է որ մարդ բառն
մերթ քաժանարար առնուած է մերթ միաս-
նարար : Այսպէս էր հռովմայեցւոց Ան-
տիոքոսէն պահանջածն , որ դաշինք դրած
ըլլալով որ իր նաւերուն կէսն անոնց տայ ,
կը ստիպէին զասիկայ որ բոլոր նաւատոր-
մդին նաւերն կէսէն կտրէ և իւրաքանչիւ-
րին կէսն իրենց յանձնէ՝ անոր ուժը բո-
լորովին կտրելու համար : — Սոյն իմաս-
տակութեան տակ կ'երթայ երկխօսու-
թիւնն ալ՝ յորում բառերն այն շարքով կը
դրուին՝ որ իւրաքանչիւրն կրնայ ըլլալ են-
թակայ և մակդիր , գործող կամ կրող .
այսպէս էին հին ատենի պատգամներն
զոր քուրմք կուտային . ինչպէս , Պիւռոս
հռովմայեցւոց դէմ պատերազմ բանալէն
առաջ պատգամ հարցուցած ըլլալով՝ պա-
տասխան առաւ . Քեզ եսկեան ասեմ յաղ-
րեղ հռովմայեցոց . զոր Պիւռոս իր կողմն
հասկընալով՝ պատերազմեցաւ և յաղթուե-
ցաւ . և յիրաւի պատգամն երկուց կող-
մանց համար ալ կը հասկըցուէր : Մեր աշ-
խարհաբար լեզուին մէջ շատ անգամ կը
հանդիպի այս երկխօսութիւնս՝ սեռի խըն-
դրոյն վերայ նախդիր չդնելուն պատճա-
ռաւ . օրինակ . Պետրոսը Պօղոսը ծեծեց .
չհասկըցուիր թէ ծեծ ուտողն ո՞վ է . ուստի
հարկ է ըսել Պետրոս զՊօղոս ծեծեց . ու-

սուճնական գրոց մէջ շատ զգուշանալու է այս թերութենէս :

Ինչուան հիմա ըսած իմաստակութիւններս մտաց զառանցանք և պատրանք կը համարուին , և իրաւցնէ թերի և մուլար իմացողական գործողութիւնք են՝ ուստի և իմաստակոչքիւնք իմացողութեան . սակայն ամենուն մէջ ալ կամեցողութիւնն ևս իր ազդեցութիւնն ունի : Ընդհանրապէս անգիտութիւն նիւթոյ , կրկնումն սկզբան , թերի թուարկութիւն , և այլն , կերպով մի կամեցողութեան իշխանութեան տակ եղած պատճառներէ առաջ կուգան , ինչպէս են՝ կիրք , նախապաշարմունք , և այլն . բայց անուղղակի կերպով կամքէն կը կախուին . բայց կան նաև դաս մի իմաստակութեանց որ առանձինն անուն չունին և ընդհանրապէս իմաստակոչքիւնք կամեցողութեան կըսուին , որովհետև ասոնց ըսկիզբն՝ աւելի կամեցողութեան չար տրամադրութիւններն են զգացողութեան քիչ առաջնորդութեան հետ միաշորեալ , քան թէ ՚ի թերութենէ իմացողութեան : Այսպէս է ընդհանրապէս կրից լեզուն , և սուտ բանավարութիւնք հպարտին , նախանձոտին , ազահին , և այլն : Շատ անգամ այս իմաստակութիւններս բերնով չեն զրուցուիր , բայց ՚ի միտս կան , և գործք անոնց կը հետեւին : Օրինակի համար , արծաթասէր մարդուն ընթացքը դիտէ՝ կը տեսնես որ սա տեսակ բանավարութեան գոր-



Ճաղրութիւնն է, Մարդ ամենայն կերպով
ջանալու է երջանիկ ըլլալու մէկ հատիկ
հնարքն ձեռք ձգել. իսկ արդ հարստու-
թիւնն միայն կրնայ գլեղ երջանիկ ընել.
Ապա ամենայն կերպով հարստութիւն
ձեռք ձգելու է: Աս սկզբանս վերայ ա-
զահն կուռքի պէս կը պաշտէ զարծաթն,
և փոխանակ ակնկալեալ երջանկութեանն
հասնելու՝ ուրիշ բան չգտներ բայց եթէ
անհանգստութիւն և անյազութիւն որ օր
քան զօր կ'աւելնայ: — Ոչ ապաքէն փա-
ռասէրն ալ այսպէս կըսէ իր մտքին մէջ.
Ամէն մարդ ՚ի բնութենէ ընդունած կարո-
ղութիւնն պէտք է որ սրէ. արդ չեմ տա-
րակուսիր որ բնութեան ինձ տուած կա-
րողութիւններով կրնամ իմ նմաններէս
վեր ըլլալ և անոնց հրամայելու արժանա-
ւոր. ապա ուրեմն բնութեանս ձայնին
հետեւած կըլլամ՝ եթէ բոլոր ջանքս թա-
փեմ զուրիշներն իմ ոտքիս տակն առնե-
լու համար: Այս պատրանքէս մոլորեալ
փառասէրն, եթէ պէտք ըլլայ, ոտից տակ
կ'առնու իր նմանեաց ամէն իրաւունքն՝
անոնց աւերակաց վերայ բարձրանալու
համար. սակայն իր անյազ սիրտն ոչ եր-
բէք հանգիստ պիտի գտնէ: — Մոյն կեր-
պով կրնանք յառաջ բերել և խայտառա-
կել այն սուտ բանավարութիւններն զորս
կրնեն ուրիշ կիրք ալ մեր հոգւոյն մէջ սո-
ղոսկելով:

Հնարք լուծանելոյ գիւմաստասկոչքիւնս .

Ընդհանրապէս իմաստակութիւնն է պատճառաբանութիւն մտացածին՝ որուն թերութիւնն կամ յայնմ է որ եզերք բովանդակութեան մէջ աւելի ընդարձակ են՝ քան թէ նախադրելոց մէջ, և կամ յայնմ՝ որ միջին եզրն նոյն նշանակութիւնն չունի երկուց նախադրելոց մէջ, և կամ վերջապէս յայնմ՝ որ պատճառաբանութիւնն կազմող գաղափարաց մէջ սուտ յարաբերութիւններ կան: Մոլորութիւնն խայտառակելու և իմաստակութիւնն լուծելու առաջին հնարքն զանհկայ շարաբանութեան ձևոյ վերածելն է՝ եթէ նոյն ձևն չունի, և շարաբանական կանոնաց ենթարկել. աս բանովս մէկէն բանավարութեան թիւրութիւնն յայտնի կըլլայ: Իսկ եթէ բանավարութեան կանոններու երևելի զանցառութիւն մի չկայ անոր մէջ և մոլորութիւնն հիման մէջն է, բանին դատողութեամբն՝ պատճառաբանութեան թիւրութիւնն շուտով կը հասկըցուի. որուն մէջ դարձեալ շատ օգուտ կընէ շարաբանութեան վերածելն, որովհետև կանոնաւոր ձևոյ մի մէջ մտած մոլորութիւնն՝ չկրնար դիւրաւ խաբել զբան մտաց: — Սակայն շատ անգամ մոլորութիւնն խայտառակելու համար զանհկայ շարաբանութեան վերածելու հարկ չկայ, և պարզ ուղղադատու-

Թիւնն կամ ողջամտութիւնն բաւական է սուտ պատճառաբանութեանց թւրութիւնն տեսնելու և ցուցնելու համար :

Պարզ 'ի կամեցողութենէ և կամայական և զգալի ազդեցութիւններէ յառաջ եկած իմացողական իմաստակութեանց ամէնէն ազդու դարմանն այն է՝ որ մարդ իր կամեցողութիւնն ուղղէ և յօժարական կարողութիւններուն շիտակ ուղղութիւն միտայ . որովհետև աներկբայելի ճշմարտութիւն է որ սրտի մաքրութիւնն և կամաց ուղղութիւնն՝ սովորաբար ամէնէն ապահով սկիզբն է ուղղութեան մտաց :




ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ԲՍՆՍԽՕՍՈՒԹԻՒՆ. — Բանախօսութեան առարկայն և բաժանումն	5
ԳԼՈՒԽ Ա. — Յաղագս ստուգութեան	7
Ա. Յաղագս ճշմարտութեան և ստուգութեան	8
Բ. Յաղագս բացայայտութեան և հիման ստուգութեան	10
Ջանաղան տեսակք ստուգութեան	21
Գ. Յաղագս հաւանականութեան	26
ԳԼՈՒԽ Բ. — Յաղագս շաւղի ընդհանրապէս	28
Յաղագս վերլուծութեան և շարադասութեան	30
ԳԼՈՒԽ Գ. — Յաղագս օժանդակ հնարից շաւղի	45
ՀՍՏՈՒՍԾ Ա. — Ա. Յաղագս զննողութեան և փորձառութեան)
Բ. Յաղագս հանդիսութեան և ներածութեան	47
Հանդիսութիւն	48
Ներածութիւն	52

Գ.	Յաղագս դասաւորութեանց	56
Դ.	Յաղագս ենթադասութեանց	62
ՀԱՏՈՒՍԾ Բ.	— Ս. Յաղագս սահմանի և բա- ժանման	68
	Սահման	69
	Բաժանումն	74
Բ.	Յաղագս առածից	77
Գ.	Յաղագս արտացոլցութեան և անբա- ժութեան	81
Դ.	Յաղագս շարաքանութեան	87
	Շարաքանութեան բնութիւնն	99
	Շարաքանութեան կանոններն	105
	Շարաքանութեան զանազան տեսակ- ներն	116
	Բանավարութեան ուրիշ ձևերն որ շարաքանութեան կրնան վերա- ծուիլ	121
ՅԱԻԵԼՈՒՍԾ.	— Շարաքանութեան 'ի բա- րին և 'ի չարն գործածութիւնը	132
ԳԼՈՒԽ Դ.	— Յաղագս շաւղի 'ի զանազան կարգս գիտութեանց	143
Ս.	Յաղագս շաւղի 'ի գիտութիւնս զննո- ղութեան	144
	Բնական և բնութեան գիտութիւնք	145
	Հոգեխօսութիւն փորձառական	147
Բ.	Յաղագս շաւղի 'ի գիտութիւնս բա- նավարութեան	152
Գ.	Յաղագս շաւղի 'ի գիտութիւնս խառն բնութեամբ	154
	Պատմութեան գիտութեան մէջ շաւ- ղի գործածութիւնն	156
Ս.	Զօրութիւն վիպութեան մարդկան	157
Բ.	Քննաբանութիւն սլատմական	168
	Հանրական կանոնք սլատմական քնն- նաբանութեան	172

Մասնական կանոնք վասն աւանդու-	
դու թեան	173
Մասնական կանոնք վասն սլաամու-	
թեան	174
Մասնական կանոնք վասն յիշատա-	
կարանաց	179
ԳԼՈՒԽ Ե. — Յաղագս մոլորութեանց և	
խմաստակութեանց	182
Ա. Յաղագս պատճառաց և դարմանոց	
մոլորութեանց մերոց	183
Ներքին պատճառք մոլորութեանց .	184
Արտաքին պատճառք մոլորութեանց	193
Բ. Յաղագս խմաստակութեանց	199
Հնարք լուծանելոյ զխմաստակութիս .	209



The first part of the book is devoted to a general
 introduction to the subject of the history of the
 world. It is divided into three parts: the first
 part deals with the general principles of history,
 the second part with the history of the world
 from the beginning of time to the present, and
 the third part with the history of the world
 from the present to the future. The first part
 is the most important, as it lays the foundation
 for the rest of the book. It is written in a
 clear and concise style, and is easy to read.
 The second part is also written in a clear and
 concise style, and is easy to read. The third
 part is written in a more speculative style, and
 is more difficult to read.

The book is written in a clear and concise style,
 and is easy to read. It is a good introduction
 to the subject of the history of the world, and
 is suitable for students of history.

